



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
ՀԱՅ ԿՐԹՈՒԱԾ ՍԵՐՈՒՆԴՆ Է ՎԱՂՈՒԱՆ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԷՐԸ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	5
ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԸ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ Է, ԴՐԱ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ	5
ԿԻՊՐԱՀԱՅ	9
«ԿԻԼԿԻՈՅ ԻՇԽԱՆ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ	9
ՇՆՈՐՀԱՆԴԷՍ	10
«ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՆԱՏԵԱՆ»Ի	10
ՓԱՌԱՀԵՂ ՀԱՄԵՐԳԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐՈՒ	11
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ	11
.....	12
ՆԱՐԵԿ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՍԸ	13
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	15
ՇԱՐՈՒՆԱԿ ՎԵՐՍՏԵՂԾՈՒԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ	15
Եկեղեցւոյ դասանական միութիւնը եւ	17
միջեկեղեցական հաղորդութեան հեռանկարը	17
«ԱՅՍՏԵՂԷՆ ԹՈՒՐՔԸ ԱՆՑԱԻ»	24
«ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԷԿ ԱՅԼ ՏԵՍՈՒԹԻՒՆ...1946 ԹՈՒԱԿԱՆԷՆ	26
ՁԱՅՆԵՐ ՔՈՒԷՅԹԷՆ	28
ՏԵՍԱԿԷՏ	31
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԳՏԷ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ	31
ԱՐԴԱՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՇԻՆԻՉ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ	31
«ՈՐՔԱՆ ԿՈՒ ՏԱՆ». ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԸ ՈՐՊԷՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԱՅԼԱՍԵՐՈՒՄ	35
ԵՐԲ ՄԱՐԴԻԿ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԹԻՆ ՃԱՏՐԱԿԻ ՔԱՐԵՐՈՒ	38
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՅՈՒՄԸ ԾԻՍԱԿԱՆ ԱԻՆԴՈՒԹԵՆԷՆ ԴԷՊԻ ԱՊՐՈՂ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	42
ԵԿԵՂԵՑԻՆ ՍՐԲԱՎԱՅՐ Է, ՈՉ՝ ՑՈՒՑԱՍՐԱՀ	44
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	47
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	47
«ՏԱՂԱՐԱՆ»Ը ՆՇՈՒՄ Է ԻՐ 45-ԱՄԵԱԿԸ	51



ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻ ԽՈՂՇԵՐԷՆ.....	53
ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ՝ ԼԵՉՈՒԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿԸ	55
ՄԵՐԺԵ՛Ղ, ՄԱԿԵՐԵՍԱՅՆՈՒԹԻՒՆԸ, ՎԵՐԱԴԱՐՉ ԴԵՊԻ ԳԻՐՔԸ.....	57
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	60
ՔԱՌԵԱԿՆԵՐ.....	62

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿՐԹՈՒԱԾ ՍԵՐՈՒՆԴՆ Է ՎԱՂՈՒԱՆ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԷՐԸ



Ուսումնական տարեվերջի այս օրերուն, երբ հայ կեանքին կ'ընծայուին նորանոր հունձքերը հայ շրջանաւարտներուն, մեր մտածումները դարձեալ կ'ուղղուին կրթութեան առանցքային նշանակութեան:

Մեծ գիտնական Ալպերթ Այնշթայն կ'արձանագրէ. «Կրթութիւնը փաստեր սորվիլ չէ, այլ միտքը մտածելու վարժեցնել է»: Իսկ անգլիացի մեծ փիլիսոփայ Պերթրանտ Ռասել կը յուշէ. «Մտածումը գերագոյն փառքն է մարդ էակին»: Շատ դիպուկ է առաջին հայեացքով պարզագոյն ճշմարտութիւններ: Խորքին մէջ, սակայն, եթէ նկատի ունենանք մեր

առօրեայ կեանքը առ հասարակ, պիտի նկատենք որ մենք կ'ապրինք ու կը գործենք գերազանցօրէն սովորութեան ոյժով, առանց իրապէս մտածելու թէ ի՞նչ կ'ընենք եւ ինչո՞ւ կ'ընենք: Շատեր թերեւս ամբողջ կեանք մը կ'ապրին առանց միտք ածելու բարդ գործողութեան, մշտապէս կրկնելով կամ ընդօրինակելով ուրիշին ըրածը, առանց քննարկելու կամ վերատեսութեան ենթարկելու զայն: Կեանքին նոր բացուող մտածող եւ տեսլապաշտ ու գաղափարապաշտ, կրթուած երիտասարդը աւելի հակուած կ'ըլլայ հարցադրելու, քննելու, հետազօտելու, վերլուծելու իրեն տրուած պատրաստի գաղափարները, կուրօրէն չկրկնելով զանոնք եւ շատ յաճախ ծնունդ տալով նոր գաղափարներու եւ նոր միտքերու, որոնք կը դառնան յառաջդիմութեան ազդակ որեւէ ընկերութեան համար, որեւէ ազգի համար ալ: Ի զուր չէ որ համաշխարհային գրականութեան մէջ, տեսլապաշտ նոր սերունդի ներկայացուցիչներն են որոնք կեանքի նոր պլացք ու որակ կը ձգտին նուաճել...Վկայ՝ Մերվան Էսի Տոն Քիշթըր, Մենք Էքզիլայերիի Փոքրիկ Իշխանը, Տոսթոյեւսքիի Ալեոշան: Մեր մօտ, Ռաֆֆիի Խենթը եւ շատ ուրիշներ:



Կրթուած երիտասարդութեան մտաշխարհի գլխաւոր բաղադրիչներէն կարելի է նկատել հետեւեալները.-

-ՔՆՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ

Քննական մտածողութիւնը կը սկսի տարակուսանքէն՝ հրամցուածին, քարոզուածին, գովազդուածին նկատմամբ, որոնք օրն ի բուն կը լուան մեր ուղեղները: Երբ կը կասկածինք կամ կը տարակուսինք ըսուածին, կը սկսինք վերլուծել, անաչառօէն քննել զայն, հետազօտել անոր հիմքերը, յետոյ կազմել մեր դատողութիւնը որպէս վարկած, մշտապէս վերաքննելի...Կրթուած կամ մտածելու եւ քննելու վարժուած միտքը, որով օժտուած կ'ենթադրուի ըլլալ կրթուած նոր սերունդը, անպայմանօրէն պիտի հարցադրէ, պիտի քննարկէ իրեն մատուցուած փաստին հիմքերը:

Առանց ՔՆՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ, մարդիկ ամբողջովին կ'ենթարկուին լրատուամիջոցներու թէ այլ միջոցներու քարոզչութեան, անոնց ուղեղալուացումին (brainwashing), կը կորսնցնեն սեփական միտքով հարցերը դիտելու, դատելու, ինքնուրոյն մտածելու կարողութիւնները: Այսպիսով, անոնք կը դառնան խամաճիկներ, որոնք թութակաբար կը կրկնեն իրենց հրամցուած տեղեկութիւնը, գովազդը կամ քարոզչութիւնը, հետզհետէ կորսնցնելով ԲՈՒՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ տեսնելու իրենց աստուածապարգեւ կարողութիւնը: Ներկայիս ամբողջ աշխարհիս մէջ, երկիրը կառավարող վերնախաւը կը փորձէ ձեռնավարել (manipulate) հանրային կարծիքը ի նպաստ իր սեփական շահերուն: Սա ոչ թէ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ է, այլ ԲՈՒՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ բոլոր առումներով:

Իսկ կրթուած հայ նոր սերունդը, եթէ իսկապէս կրթուած է ան, պիտի կուրօրէն չտարուի իրեն հրամցուած «շուկայական» թէ այլ չարժէքներով եւ գաղափարներով, պիտի քննարկէ անոնց հիմքերը, վերահաստատելով ազատ մտքի ազատ թռիչքին նուաճելիք բարձունքներու հրաշալի հնարաւորութիւնները...

-ԳԻՏԱԿՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՈՐԱԿ

Շարունակելով միտքս, կարելի է արձանագրել որ հայ կրթուած սերունդն է որ գիտակցական նոր մակարդակ կրնայ բերել հայ կեանքին մէջ, տապալելով քարացած կուրքերն ու մտքի ճահճացած կամ ոսկրացած կաղապարները եւ բացուելով դէպի մտքի նոր հորիզոններ: Սա հասարակական գիտակցութեան նոր որակի ձեռքբերման գերագոյն ազդակ կարելի է համարել որոշապէս:

Գիտակցութեան մակարդակի բարձրացման հետ զուգահեռ, մտածող եւ իտեղապաշտ կամ գաղափարապաշտ սերունդը պիտի միտի ստեղծել հոգեմտաւոր, բարոյական արժէքներու վրայ հիմնուած ընկերութիւն մը: Արժէքահէնք, ազատ եւ արդար ընկերութիւն մը, անսալով նաեւ իր խղճի ձայնին: Սա կրնայ որոշապէս բախիլ սպառողական, նիւթապաշտ եւ օգտապաշտ ընկերութեան դաւանած չարժէքներուն, եւ վստահաբար ազդակ դառնալ տուեալ ընկերութեան բարենորոգման ու վերելքին:



-ԱԶԳԱՅԻՆ ԱՐՄԱՏՆԵՐՈՒ ՀԱԻՍԱՐՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՅԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Ներկայ աշխարհի համահարթեցման ահաւոր յորձանքին դէմ յանդիման, կրթուած, քննախոյզ եւ տեսլապաշտ մտքի տէր հայ սերունդը վստահաբար պիտի հարցադրէ թէ ի՞նչ կ'արժէ թէկուզ ամբողջ աշխարհը շահիլ բայց սեփական հոգին կորսնցնել: ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ: Իր սեփական ազգային դիմագիծը, նկատառելով մասնաւորաբար որ չկայ վերացական մարդ:

Ան յաճախ պիտի գտնուի երկմտանքի կամ երկընտրանքի մը առջեւ. Դառնալ աշխարհաքաղաքացի եւ ապրիլ բաղդատաբար «դիւրին» կեանք մը, թէ՞ կտաշիլ իր ազգային արմատներուն, պահել սեփական բոյրն ու թոյրը համաշխարհային քաղաքակրթութեան իճանկարին մէջ: Գուցէ պահ մը մոլորի ան, բայց մտածող եւ գաղափարապաշտ կրթեալ սերունդը վերջ ի վերջոյ ՏԷՐ պիտի կանգնի իր դարաւոր յիշողութեան, իր պանծալի մշակոյթին, իր հոգեմտաւոր ժառանգութեան, որոնց ծնունդն է ինք, եթէ չէ դաւաճանած իր ՀՈԳԻՆ, իր ԱՐԱՐՄԱՏԻՆ: Եւ վա՛յ մեզի, եթէ միայն մէկ սերունդ չկարենայ տէր կանգնիլ իր ազգային հոգեմտաւոր ժառանգութեան, իր հայկականութեան, ուրանայ կամ անտեսէ զայն...Սա կորուստ մը պիտի ըլլար ոչ միայն իրեն, այլ համաշխարհային քաղաքակրթութեան բազմազանութեան, որուն ամէն մէկ գոյնն ու գիծը ներդաշնակօրէն կ'ամբողջացնէ անոր համապատկերը:

Մեր յոյսն ու ապագան հայ կրթեալ, մտածող եւ տեսլապաշտ սերունդն է, որ ունի ազգային ու մարդկային ինքնաճանաչում եւ յանձնառութիւն: Հայրենիքի մէջ, ան պիտի կերտէ հայոց ուժեղ պետականութիւն համահունչ իր ազգային իղձերուն, իտեալներուն, տեսլականին, իր դաւանած բարոյական, ազգային արժէքներուն, իր մտքի ու հոգիի թռիչքին, ինքնավստահութեամբ եւ արժանապատուութեամբ: Ան ոչ միայն պիտի ստեղծէ գիտութիւն, արդիւնաբերութիւն, տնտեսական եւ ռազմական հզօրութիւն, այլեւ քաղաքակրթութեան նոր որակ ու մակարդակ...: Սփիւռքի լայրձուն հողին վրայ, հայ կրթուած, մտածող, հարցաքննող, տեսլապաշտ ու գաղափարապաշտ սերունդն է որ ջահակիրը պիտի ըլլայ իրեն փոխանցուած Մեսրոպեան սրբազան ասանդին: Ան է որ պիտի վերակազմակերպէ սփիւռքահայ կեանքը եւ յատկապէս պիտի ամրապնդէ, զօրացնէ ու սերտացմէ ՄՓԻՆՌՔ-ՀԱՅԱՍՏԱՆ կապերը, որպէսզի սփիւռքի արմատախիլ ծառը կարենայ կենսայորդ աւիշ ու աւիւն քաղել հայրենեաց հողէն: Ան է որ նոր թափ պիտի տայ համահայկական ոգիին ու մտածողութեան, օգտագործելով համացանցային գիտահնարքներու ընձեռած հրաշալի կարելիութիւնները:

Ուսումնակրթական տարեշրջանի աւարտին, մեր հայեացքը կ'ուղղուի հայ շրջանաւարտ, կրթեալ, մտածող, հարցաքննող, գաղափարապաշտ նոր սերունդին, որ պիտի դառնայ վաղուան ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԷՐԸ Հայաստանի Հանրապետութեան մէջ, թէ Սփիւռքի տարածքին: Ան է որ պիտի պայմանաւորէ այդ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ որակը, մակարդակն ու բովանդակութիւնը գալիք փորձանաւոր եւ վտանգալից ժամանակներուն:

Բարի՛ երթ եւ կանա՛ չ ճանապարհ հայ բոլոր շրջանաւարտներուն: Եւ բիւր յարգա՛ նք կրթական բոլոր նուիրեալ մշակներուն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ

ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԸ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ Է, ԴՐԱ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ

17/6/2026

Հեղինակ՝ Միքանոյշ Պապեան

Հարցազրոյց «Յանուն Հանրապետութեան» կուսակցութեան նախագահ Արման Բարաջանեանի հետ:



-Պարոն Բարաջանեան, ինչո՞ւ էք համարում, որ ընտրակաշառքի հարցը պէտք է դառնայ Սահմանադրական դատարանի քննութեան առարկայ, եթէ ընտրութիւնները պաշտօնապէս աւարտուած, իսկ արդիւնքներն ամփոփուած են:

-Սահմանադրական դատարանի խնդիրը միայն հաշուուած քուէների թուաբանական ճշտութիւնը գնահատելը

չէ: Սահմանադրական դատարանը պէտք է պատասխանի գլխաւոր հարցին՝ արե՞օք հանրային իշխանութիւնը ձեւաւորուել է քաղաքացիների ազատ կամարտայայտութեամբ, թէ՞ այդ կամքի վրայ գործադրուել է այնպիսի ազդեցութիւն, որն արդէն կասկածի տակ է դնում ընտրութիւնների սահմանադրական բնոյթը:

Այս ընտրութիւններում արձանագրուած ընտրակաշառքի վերաբերեալ հարիւրաւոր հաղորդումները, բազմաթիւ քրեական վարոյթները, ձերբակալութիւնները, բացայայտուած կազմակերպուած սխեմաները և տարբեր բնակավայրերում ի յայտ եկած նոյնատիպ մեխանիզմները վկայում են, որ գործ ունենք ոչ թէ առանձին դրուագային իրաւախախտումների, այլ համակարգային երեւոյթի հետ:

Աւելին, հանրային դաշտում հնչում են հիմնաւոր պնդումներ, որ բացայայտուած դէպքերը կարող են կազմել իրական ծաւալների ընդամենը չնչին՝ մի տոկոսը մասը: Այդ պնդումները, իհարկէ, պէտք է դառնան իրաւական քննութեան առարկայ, սակայն այստեղ կայ աւելի կարեւոր հանգամանք. արդէն իսկ բացայայտուած դէպքերի ծաւալն ու բնոյթն այնպիսին են, որ դրանք անխուսափելիօրէն ստուերում են նաև չբացայայտուած հատուածը և կասկածի տակ դնում ամբողջ ընտրական գործընթացի բարեվարքութիւնն ու լեգիտիմութիւնը:



Մենք ունենք լրջագոյն հիմքեր ենթադրելու, որ գործ ունենք ոչ միայն ընտրողի կամքի վրայ ապօրինի ազդեցութեան, այլև ընտրութիւնների նկատմամբ հանրային վստահութիւնը խաթարելու, պետական ինստիտուտների լեգիտիմութիւնը թուլացնելու և Հայաստանի Հանրապետութեան դիմադրողականութիւնը նուազեցնելու նպատակ հետապնդող համակարգուած գործընթացների հետ:

Խնդրի ծաւալներն այնքան մեծ են, որ նոյնիսկ պետական մարմինների առաւելագոյն ջանքերի պարագայում օբյեկտիվօրէն անհնար էր ընտրական գործընթացի ընթացքում ամբողջութեամբ բացայայտել և կանխել դրանց ազդեցութիւնը: Հենց այդ պատճառով էլ հարցը դուրս է գալիս սովորական քրէական վարոյթների շրջանակից և վերածուում սահմանադրական վերահսկողութեան խնդրի:

Այս իրավիճակում Սահմանադրական դատարանը պէտք է գնահատի ոչ միայն արդէն ապացուցուած առանձին դէպքերը, այլև այն ընդհանուր իրաւաքաղաքական իրականութիւնը, որը ստեղծուել է ընտրակաշառքի, կազմակերպուած ապօրինի ազդեցութեան և ընտրողի ազատ կամարտայայտման համակարգային խաթարման հետեւանքով: Որովհետև երբ կասկածի տակ է դրուում քաղաքացիների ազատ կամքի ձեւաւորման միջավայրը, կասկածի տակ է դրուում նաեւ այդ կամքով ձեւաւորուած իշխանութեան սահմանադրական լեգիտիմութիւնը:

-Կայ պնդում, որ ընտրակաշառքի առանձին դէպքերը չեն կարող ազդել ամբողջ ընտրութեան լեգիտիմութեան վրայ:

-Եթէ խօսքը մէկ կամ երկու մեկուսացուած դէպքի մասին լինէր, այդպիսի պնդումը կարող էր քննարկելի լինել: Սակայն այստեղ խօսքը համակարգային երեւոյթի մասին է: Հակակոռուպցիոն մարմինների յայտարարութիւնները, յարուցուած քրէական վարոյթների ծաւալը, բազմաթիւ բնակավայրերում արձանագրուած նոյնատիպ մեխանիզմները և քաղաքացիական դիտորդական կառոյցների հաւաքած տուեալները ցոյց են տալիս, որ խնդիրը շատ աւելի խորն է: Միջազգային իրաւական պրակտիկան եւս ընդունում է, որ ընտրութիւնների լեգիտիմութիւնը կարող է կասկածի տակ դրուել ոչ միայն այն դէպքում, երբ ապացուցուում է կոնկրետ արդիւնքի փոփոխութիւնը, այլև այն դէպքում, երբ ընտրական միջավայրն ինքն է աղաւաղուել համակարգային ապօրինի ազդեցութեամբ:

-Որտե՞ղ է անցնում սահմանը սովորական ընտրախախտման և այնպիսի համակարգային գործընթացի միջև, որն արդէն կարող է գնահատուել որպէս արտաքին միջամտութիւն, սահմանադրական կարգի նկատմամբ ոտնձգութիւն և ազգային անվտանգութեան սպառնալիք:

-Եթէ ընտրական գործընթացի վրայ ազդեցութիւն է գործադրուել արտաքին կենտրոններից ուղղորդող ֆինանսական, կազմակերպչական, քարոզչական կամ հոգեբանական ճնշման մեխանիզմներով, ապա մենք այլեւս գործ չունենք սովորական ընտրախախտման հետ: Այդ պահից հարցը տեղափոխուում է սահմանադրական կարգի, ժողովրդական ինքնիշխանութեան և ազգային անվտանգութեան հարթութիւն:

Ընտրակաշառքն ինքնին հարուած է քաղաքացու ազատ կամքին: Բայց երբ այն միանում է արտաքին ուղղորդմանը, կազմակերպուած տեղափոխումներին, վախի մեխանիզմներին, ապատեղեկատուական արշաւներին և օտար պետութեան քաղաքական շահին, այն



դառնում է ոչ թէ պարզապէս ձայների գնման միջոց, այլ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան ընտրական գործընթացի վրայ ներգործելու գործիք:

Միջազգային ժողովրդավարական փորձը վաղուց արձանագրել է՝ ընտրութիւնների լեգիտիմութիւնը չի չափուում միայն քուէաթերթիկների հաշուարկով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, Վենետիկի յանձնաժողովի և Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի մօտեցումների հիմքում նոյն սկզբունքն է՝ ընտրութիւնները պէտք է ապահովեն ժողովրդի ազատ կամքի իրական արտայայտութիւնը: Եթէ այդ կամքը ձեւաւորուել է փողի, վախի, արտաքին ճնշման կամ կազմակերպուած ապօրինի ազդեցութեան պայմաններում, ապա վնասուում է ոչ միայն ընտրական իրաւունքը, այլև ժողովրդավարական պետութեան սահմանադրական հիմքը:

Այստեղ Սահմանադրական դատարանի առաքելութիւնը բացառիկ է: Դատարանը պէտք է գնահատի ոչ միայն ընտրակաշառքի առանձին փաստերը, այլև դրանց համակարգային բնոյթը, քաղաքական շահառուներին, ֆինանսաւորման աղբիւրները, արտաքին ազդեցութեան հնարաւոր կապերը և այդ ամէնի ազդեցութիւնը հանրային իշխանութեան լեգիտիմութեան վրայ:

Մենք պնդում ենք՝ եթէ Հայաստանի ընտրութիւններում օտար կենտրոնների շահը սպասարկող ուժերը ընտրակաշառքի, վախի, կազմակերպուած տեղափոխման, ապատեղեկատութեան և ապօրինի ֆինանսաւորման միջոցով ստացել են քաղաքական ներկայացուածութիւն, ապա այդ ներկայացուածութիւնը չի կարող դիտուել որպէս ժողովրդի ազատ կամքի անխաթար արտայայտութիւն:

Սա Սահմանադրական դատարանի քննութեան առարկայ պէտք է դառնայ ոչ թէ քաղաքական ցանկութեան, այլ պետական անհրաժեշտութեան պատճառով: Որովհետև այստեղ խօսքը միայն մանդատների բաշխման մասին չէ: Խոսքը այն մասին է՝ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը ձեւաւորու՞մ է Հայաստանի քաղաքացիների ազատ կամքով, թէ՞ օտար ազդեցութեան, փողի և կազմակերպուած ապօրինի մեխանիզմների միջամտութեամբ:

Այդ հարցին պէտք է տրուի իրաւական, սահմանադրական պատասխան:

-Ի՞նչ է ակնկալում «Յանուն Հանրապետութիւնը» Սահմանադրական դատարանից:

-Մենք Սահմանադրական դատարանից ակնկալում ենք սահմանադրական արդարադատութեան լիարժէք իրականացում:

«Յանուն Հանրապետութեան» կուսակցութիւնը չի վիճարկում Հայաստանի պետական ինստիտուտների շարունակականութիւնը և չի առաջնորդում ընտրութիւնները մեխանիկորէն չեղարկելու տրամաբանութեամբ: Մեր պահանջը շատ աւելի հիմնարար է. Սահմանադրական դատարանը պէտք է պատասխանի՝ արդէ՞օ ք յունիսի 7-ի ընտրութիւնները, դրանց նախընտրական միջավայրը, ընտրողի կամքի ձեւաւորման պայմանները և արձանագրուած համակարգային խախտումները համատեղելի են ազատ, արդար և սահմանադրական ընտրութիւնների չափանիշների հետ:

Ընտրությունների սահմանադրականութիւնը չի որոշուում միայն նրանով, թէ քանի քուէ է հաշուուել այս կամ այն ուժի օգտին: Ժողովրդավարական ընտրութեան առանցքը ժողովրդի



ազատ կամքի անխաթար արտայայտութիւնն է: Եթէ այդ կամքի ձեւաւորման վրայ ազդեցութիւն են ունեցել ընտրակաշառքը, վախը, կազմակերպուած ապօրինի մեխանիզմները, արտաքին ուղղորդումը, ապօրինի ֆինանսաւորումը և հիբրիդային ազդեցութեան գործիքակազմը, ապա Սահմանադրական դատարանը պարտաւոր է գնահատել ոչ միայն արդիւնքը, այլև այդ արդիւնքի ձեւաւորման իրաւաչափութիւնը:

Մեր ակնկալիքը երեք մակարդակի վրայ է:

Առաջինը՝ իրաւական գնահատական: Դատարանը պէտք է արձանագրի՝ ընտրակաշառքի բացայայտուած և հիմնաւոր կասկած առաջացնող ծաւալները եղել են առանձին դրուագներ, թէ՛ ընտրողի կամքի վրայ համակարգային ազդեցութեան մեխանիզմ: Սա առանցքային հարց է, որովհետև համակարգային ընտրակաշառքը արդէն հարուած է ոչ միայն ընտրական օրէնսդրութեանը, այլև ժողովրդական իշխանութեան սահմանադրական սկզբունքին:

Երկրորդը՝ քաղաքական-սահմանադրական հետեւանքների գնահատում: Դատարանը պէտք է քննութեան առարկայ դարձնի, թէ այդ մեխանիզմներից որ քաղաքական ուժերն են շահել, ինչ ծաւալով են խեղաթիրուել հաւասար մրցակցութեան պայմանները, և արդեօք այդ ուժերի ստացած քուէն կարող է դիտուել որպէս ժողովրդի ազատ կամքի լիարժէք արտայայտութիւն:

Երրորդը՝ արտաքին միջամտութեան բաղադրիչի գնահատում: Եթէ ընտրական գործընթացում առկայ են եղել օտար կենտրոններից ուղղորդող ֆինանսական, կազմակերպչական, քարոզչական կամ հոգեբանական ճնշման մեխանիզմներ, ապա դա այլևս սովորական ընտրախախտում չէ: Դա ազգային անվտանգութեան և սահմանադրական կարգի պաշտպանութեան հարց է: Միջազգային փորձը ցոյց է տալիս, որ նման դէպքերում սահմանադրական դատարանները չեն կարող սահմանափակուել ձեւական հաշուարկով. նրանք պարտաւոր են գնահատել ընտրութեան ամբողջական բարեվարքութիւնը:

Մենք ակնկալում ենք, որ Սահմանադրական դատարանը հաշուի կ'առնի ոչ միայն պետական մարմինների նիւթերը, այլև միջազգային դիտորդական առաքելութիւնների գնահատականները, տեղական դիտորդական կազմակերպութիւնների արձանագրումները, քրեական վարոյթների փաստական պատկերը, հրապարակային հաղորդումները և ընտրական միջավայրի ամբողջական քաղաքական համատեքստը:

Սահմանադրական դատարանի առաքելութիւնն է պաշտպանել ոչ միայն ընտրութեան արդիւնքը, այլև ընտրութեան ազատութիւնը: Իսկ եթէ ընտրութեան ազատութիւնը ստուերուել է փողի, վախի, արտաքին ազդեցութեան և կազմակերպուած ապօրինի մեխանիզմների միջոցով, ապա դատարանը պարտաւոր է տալ յստակ, խորքային և պետութեան դիմադրողականութիւնը ամրապնդող որոշում:

Ժողովրդավարութիւնը պաշտպանում է ոչ թէ խախտումները լռեցնելով, այլ դրանց սահմանադրական հետեւանքներին ուղիղ նայելով:

Աղբիւր՝ 1in.am

ԿԻՊՐԱՀԱՅ

«ԿԻԼԻԿԻՈՅ ԻՇԽԱՆ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Չորեքշաբթի 24 Յունիս 2026-ին, Նիկոսիոյ մէջ տեղի ունեցած յատուկ արարողութեան մը ընթացքին, Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Նիկոս Խրիստոտուլիտիսին շնորհեց «Կիլիկիոյ Իշխան» շքանշանը:

Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Նիկոս Խրիստոտուլիտիսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի կողքին ներկայ էին Հայաստանի եւ Լիբանանի դեսպանները, Կիպրահայ համայնքի քաղաքական ու եկեղեցական


ղեկավարութիւնը, ինչպէս նաեւ Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար դոկտ. Նորա Պայրազտարեան: Անոնց ներկայութիւնը կը վկայէր այս հանդիպումին աւելի լայն նշանակութեան մասին եւ կը շեշտէր Կիպրոսը, Հայաստանը եւ Լիբանանը իրարու կապող յատուկ յարաբերութիւնը: Յարաբերութիւն՝ որ աւելի նշանակալից կը դառնայ ներկայ աշխարհաքաղաքական պայմաններու մէջ, խոստանալով դառնալ ռազմավարական գործակցութեան վստահելի եռանկիւն մը:



Կը մտղթենք որ այդ կապերը սերտանան առաւել եւս եւ արդիւնաւորութիւն յօգուտ նաեւ ու մանաւանդ մեր գոյգ համայնքներուն եւ հայոց պետականութեան բարգաւաճման եւ յառաջընթացին:

ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

«ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՆԱՏԵԱՆ»Ի



Հինգշաբթի, 25 Յունիս 2026-ին, երեկոյեան ժամը 6:30-ին, Կիպրոսի Նախագահական Պալատին մէջ տեղի ունեցաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան նոր Յուշամատեանի Ծնորհահանդէսը, ստուար թիւով հրաւիրեալներու ներկայութեան, որոնց կարգին՝ Մելգոնեանի 100 ամեակին համար արտասահմանէն ժամանած Մելգոնեանցիներ:

Հաստատութեան քայլերգի ունկնդրութենէն ետք,

յաջորդաբար խօսք առին Կրթութեան, Մարմնակրթանքի եւ Երիտասարդութեան Նախարար Դոկտ.Աթինա Միխաիլիտու, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Կրօնական Փոքրամասնութիւններու Համակարգիչ Դոկտ. Կիպրիանոս Տ.Լուիս եւ Մամլոյ եւ Տեղեկատուութեան գրասենեակի Տնօրէն Ալիկի Ստիլիանու: Յուշամատեանի ներկայացումը կատարեց բանասէր Դոկտ. Անթոնիա Լոիզու:



Յարգարժան խօսք առնողները ադրադարձան Մելգոնեան Կրթական Հաստատութեան անգուգական դերակատարութեան՝ Հայոց Ցեղասպանութենէն ետք, հայ բազմահարիւր որբերուն ինամք, ապահով ապաստան, լեզու, ինքնութիւն եւ մշակոյթ փոխանցելու երախտագին աշխատանքին 1926 թուականէն մինչեւ անոր տիրահոշակ փակումը 2006-ին: Անոնք շեշտեցին որ

Մելգոնեանը կրթարան ըլլալէ անդին տուն էր եւ ընտանիք, սիրոյ, յոյսի եւ հաւատքի օրրան, որուն պատմութիւնը սերտօրէն շաղխաուեցաւ Կիպրոսի Հանրապետութեան պատմութեան հետ: Վկայ՝ 1974-ին թրքական ներխուժման օրերուն, թրքական

ումբակոծիչները ռումբեր նետեցին նաեւ Մելգոնեանի տղոց շէնքին վրայ: Բոլորին պատգամը յստակ էր. «Մենք դպրոց չենք փակեր»:



Այնուհետեւ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, մասնակցութեամբ՝ Ս.Աստուածածին եկեղեցւոյ կրտսերներու երգչախումբին, ղեկավարութեամբ Վիքի Գոյումճեանի եւ հայկական Պար՝ Համազգայինի Միփան Պարախումբին կողմէ, ղեկավարութեամբ պարուսոյց Գրիգոր Քելէշեանի:



Ներկաները մեկական օրինակ նուէր ստացան Յուշամատեանէն: Այս բացառիկ եւ զնահատելի աշխատութիւնը կ'ընդգրկէ 1926-2005 թուականներուն գործած մեծանուն կրթական հաստատութեան պատմութիւնը, վերհանելով անոր դերն ու դերակատարութիւնը յետ-Եղեռնեան սփիւռքի կազմաւորման մէջ: Յուշամատեանի էջերէն կը ծանօթանանք Մելգոնեանի

կրթական- մշակութային հսկայ ժառանգութեան հետ, այնտեղ տեղ գտած լուսանկարներէն, արխիւային փաստաթուղթերէն, յուշագրութիւններէն: ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ ԲՈՂՈՐԻՆ:

ՓԱՌԱՀԵՂ ՀԱՄԵՐԳԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐՈՒ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Ուրբաթ 26 Յունիս 2026, երեկոյեան ժամը 8:00-ին, տեղի ունեցաւ փառահեղ համերգը Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբերուն, նուիրուած Մելգոնեան Կրթական Հաստատութեան 100-ամեակին, նոյն Հաստատութեան շրջաբակին մէջ, նոր շունչ ու կենդանութիւն հաղորդելով անոր լուռ ու մունջ մթնոլորտին: Հայ երգի ու նուագի բորբ հնչիւններով խայտացին հոգիները Անմահ Բարերարներուն, իսկ ներկաները՝ մեծ թիւով

Մելգոնեանցիներ եկած աշխարհի չորս ծագերէն, հոգեյոյզ եւ սիրայորդ ապրումներով վայելեցին իրենց Մելգոնեանի օրերէն սորված, երգած ու սիրած երգերը, քաղցրայուշ կարօտի զգացումներով...



Համերգին ներկայ գտնուեցան Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեան, քոյր եկեղեցիներու կրօնապետեր, հոգեւոր Հայրեր, կիպրահայ համայնքի Պետական Ներկայացուցիչ Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեան,

ազգային-եկեղեցական իշխանութեան եւ այլ կառոյցներու ներկայացուցիչներ, ստուար թիւով մելգոնեանցիներ եւ հիւրեր:



Երգչախումբերու Կազմակերպիչ Յանձնախումբի ատենապետ Պրն. Ալեք Ալթունեանի բովանդակալից բացման խօսքէն ետք, կատարուեցան քայլերգները՝ Կիպրոսի Հանրապետութեան, Հայաստանի Հանրապետութեան եւ Մելգոնեան Կրթ. Հաստատութեան: Ապա ծայր առաւ ճով յայտագիրը «Եկեղեցին

Հայկական»ով, շարունակուեցաւ հայկական երգերու գեղեցիկ եւ գունագեղ փունջով, շուրջ մէկ ու կէս ժամ տևողութեամբ, մինչ սահիկներով ցուցադրուեցան հայրենի տեսարաններ, ինչպէս նաեւ Մելգոնեանի կեանքէն պատկերներ, երգերուն համահունչ թեմաներով: Իսկ հայ ժողովրդական գործիքներու նուագախումբի ընկերացութիւնը ճոխացուց եւ առաւել ծաղկեցուց հրամցուած երգերը



Համերգին մասնակցեցան Ս. Աստուածածին Երգչախումբերու Երեցներու խումբը, Կրտսերներու եւ Փոքրիկներու խումբը, Փոքրիկները՝ առանձինն, Կրտսերները՝ առանձինն եւ հուսկ բոլորը միասին եւ մեկգոնեանցիներ միասնաբար կատարեցին «Երեւան-Երեբունի» այնքան սիրուած երգը, պահի խանդավառութիւնը հասցնելով իր բարձրակետին::

Յատուն գնահատանքի եւ յիշատակութեան արժանի են՝ Տիկ. Զարա Բարխուտարեան եւ Տիկ. Վիքի Գույումճեան, որոնք վարպետ ձեռնհասութեամբ վարեցին Երեցներու եւ Կրտսերներու, Երիտասարդներու եւ Փոքրիկներու Երգչախումբերը:

Միաժամանակ, ներկաները ծանօթացան՝ ցուցադրուեցան սահիկներուն ընդմէջէն, Մեկգոնեանի անցած հարիւրամեայ ուղիին, Հայոց Յեղասպանութենէն ետք, երբ Մեկգոնեանը տուն, ընտանիք դարձաւ բազմահարիւր որբերու եւ՝ հայոց լեզուի, հայկական ինքնութեան եւ մշակոյթի, գիտութեան եւ արուեստներու յոյսը ցաթեցուց անոնց հոգիներէն ներս: Ներկաները ծանօթացան նաեւ Մեկգոնեանի արհեստներու վարժարանին, անոր մարզական հարուստ կեանքին, գեղարուեստական-թատերական-երաժշտական եւ այլ շարժումներուն եւ հանդիսութիւններուն, մամուլի եւ հրատարակչութեան գործին, արի-արեւուշական կեանքին եւ այլ գործունէութեանց:

Բացառիկ եւ յոյժ տպաւորիչ այս համերգը վերջ գտաւ Կոմիտաս արքեպիսկոպոսի Օրհնութեան խօսքով եւ Պահպանիչ աղօթքով:

Փա՛ռք Մեկգոնեան Կրթական Հաստատութեան:

Փա՛ռք անոր Անմահ Բարերարներուն:

Փա՛ռք աշխարհացրիւ Մեկգոնեանցիներուն, որոնք վառ կը պահեն ոգին եւ յիշատակը Մեկգոնեանցիներուն:

Փա՛ռք Ս. Աստուածածին Երգչախումբերուն, անուն առ անուն, անոնց խմբավարներուն եւ Կազմակերպիչ Յանձնախումբին, որոնք բոլորը միասին ներկաներուն հրամցուցին այս սքանչելի Համերգը, պանծացնելով հայ երգը, եւ անոր բոլոր հնչիւններով ու նուագով թնդացնելով Մեկգոնեանի լուռ միջավայրը, նոր շունչ ու կենդանութիւն հաղորդելով անոր:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ

Ուրախութեան եւ թախիծի յուզախառն ապրումներով լեցուն մթնոլորտի մը մէջ կայացաւ Նարեկ նախակրթարաններու ամավերջի հանդէսը՝ Ուրբաթ 19 Յունիս 2026, կ.է. ժամը 7:30-ին, Վարժարանի ամփիթատրունին մէջ, հովանաւորութեամբ՝ Կաթ. Փոխ. Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի եւ նախագահութեամբ՝ Հայ համայնքի Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Սահտեսեանի:



Նարեկ նախակրթարաններու շրջանաւարտներու հերթական հունձքը ընծայուեցաւ հայ կեանքին...23 պարման-պարմանուհիներ՝ Նիկոսիոյ, Լաոնազայի եւ Լիմասոլի ՆԱՐԵԿ հայկական նախակրթարաններէն:

Ներկայ էին Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեան, կիպրահայ համայնքի Պետ. Ներկ. Տէր եւ Տիկ.Վարդգէս Մահտեսեան հոգեւոր Հայրեր, Կրթական նախարարութեան եւ Կիպրոսի նախակրթարաններու պաշտօնական հիւրեր, համայնքի



ազգային կազմակերպութեանց եւ կառոյցներու ներկայացուցիչներ, ծնողներ, հիւրեր եւ ստուար հանրութիւն մը:

Հոյակապ եւ անթերի կազմակերպուած հանդիսութիւն մըն էր, ուր յուզախառն ապրումներով եւ հետաքրքրութեամբ հետեւեցանք շրջանաւարտ աշակերտութեան կողմէ ներկայացուած թատերական ներկայացման, հնչած հրաժեշտի ուղերձներուն, ապրումով արտասանուած բանաստեղծութեան, երգուած խմբերգերուն, վկայականաց եւ մրցանակներու տուչութեան արարողութեան, ինչպէս նաեւ տնօրէնութեան ներկայացուցած տարեկան ուսումնակրթական տեղեկագրին եւ Հուսկ Բանքին...Հուսկ Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեանի օրհնութեան խօսքին եւ Պահպանիչ աղօթքին:

ՎԱՐՁՔԵՐՆԻԴ ԿԱՏԱՂ, սիրելի կրթական մշակներ, տնօրէնութիւն, Հոգաբարձութիւն եւ ծնողներ: Բարի երթ եւ նորանոր յաջողութիւններ ձեզի, սիրելի շրջանաւարտներ...Ո՛ր որ ալ երթաք, հաւատարիմ մնացէք ազգային ձեր ինքնութեան, հայոց լեզուին, մշակոյթին, հայոց հայրենիքին...

Երան Գույումճեան

ՅՕՂՈՒԱԾՆԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿ ՎԵՐՍՏԵՂԾՈՒԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏ

Խորհրդածութիւններ կեանքի, ասպարեզի եւ շարունակ վերափոխուելու արուեստին մասին



ՀՐԱՉ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

MAY 28, 2026

Հրաչ Չիլինկիրեան

Կեանքը աւարտած նկար մը չէ, որ պատէն կախենք ու հեռուն հիացումով դիտենք, թէ մենք ո՛վ կամ ի՛նչ ենք: Կեանքի «կտաւը» շրջանակի մէջ առնուած յայտարարութիւն մը չէ, ըսելու համար՝ «Ահա՛, այս է կեանքս»: Այդպէս դիտել կեանքը՝ կը նշանակէ չգիտակցիլ անոր բուն էութեան: Կեանքը հոսուն է, շարժուն, անդադար փոփոխութեան մէջ գտնուող գոյութիւն մը՝ ապրող արուեստի գործ մը, որ ամէն վայրկեան ուրիշ ձեւ կը ստանայ: Նոյնն է նաեւ ասպարեզի ճամբան:

Կարելի է կեանքը երեւակայել որպէս կտաւ մը, որ տակաւին նկարակալին վրայ կը մնայ եւ երբեք ամբողջապէս չ'աւարտիր: Ամէն օր անոր կը մօտենանք նոր աչքերով, վրձինը ձեռքին, որ գոյն մը աւելցնենք, մանրամասնութիւն մը սրբագրենք, կամ երբեմն ամբողջ բաժիններ



Ճածկենք՝ նոր բան մը ծնելու կամ ստեղծելու համար: Այս պատկերացումը ինձի օգնած է կեանքը տեսնելու որպէս ընթացք մը՝ կտաւ մը, ուր շարունակ կը ստեղծենք եւ վերստեղծենք մենք զմեզ:

Անկատարութիւնը ընդունիլ

Կեանքի փորձառութիւնը, ինչպէս արուեստը, մեզի կը սորվեցնէ, թէ կատարելութիւնը նպատակ չէ: Գլուխ գործոցները հազուադէպօրէն անթերի գործադրութեան արդիւնք կը լլան: Անոնք կը ծնին արուեստագէտին համարձակութենէն՝ փորձելու, սխալելու, անակնկալը գրկաբաց ընդունելու: Նոյնն է նաեւ ապրելու պարագան: Ամէն սայթաքում, ամէն անորոշութիւն, ձախողութիւն չէ, այլ վրձինի հարուած մը՝ մեծ ամբողջին անհրաժեշտ մէկ մասը:

Երբ կեանքը դիտենք որպէս շարունակուող նկար, կը սորվինք անկատարութիւնը ընդունիլ իբրեւ ընթացքի մէկ մասը: Կը հասկնանք, թէ այսօր սխալ թուացողը վաղը կրնայ դառնալ կերպարանափոխութեան հիմքը: Գոյնի շերտերը՝ երբեմն պայծառ, երբեմն խամրած, երբեմն խռով, երբեմն գիտակից, կը պատմեն մեր ով ըլլալն ու մեր դառնալիքը:

Կտաւին դարձեալ մօտենալու համարձակութիւնը

Կեանքի նկարը նկարակալին վրայ պահելը քաջութիւն կը պահանջէ: Կը նշանակէ յաճախ վերադառնալ կտաւին, նոյնիսկ երբ չենք գիտեր ինչ աւելցնել, կամ կը վախնանք տեսնել այն, ինչ որ մեզի կը սպասէ: Ես ալ շատ անգամ վերադարձած եմ իմ կտաւիս՝ կանգ առած, յուսախաբ կամ շուարած պահերու մէջ, չգիտնալով պէտք է նոր գոյն մը աւելցնե՞մ, թէ՞ ջնջեմ այն, ինչ որ այլեւս ճշմարիտ չէր:

Մարդ պէտք է ինքնիրեն հարց տայ.

Ի՞նչ պէտք է փոխուի:

Ի՞նչ կրնամ աւելի լաւ ընել:

Ի՞նչ կուզեմ, որ այս նկարը իմ ով ըլլալս պատմէ:

Տարիներու ընթացքին, աճելով ու փոխուելով, նոր փորձառութիւններ, յարաբերութիւններ եւ յայտնութիւններ կը դառնան մեր ներկայակնին գոյները: Երբեմն կեանքը մեզի կը պարզելէ լուսատու երանգներ՝ սիրոյ, յաջողութեան եւ տօնախմբութեան պահեր, որոնք կտաւը կը պայծառացնեն: Ուրիշ ժամանակներ՝ մութ գոյներ՝ կորստի, վիշտի ու պայքարի, որոնք խորութիւն եւ հակադրութիւն կու տան նկարին: Երկուքն ալ անհրաժեշտ են: Առանց խաւարի՝ լոյսը իմաստ չի ստանար: Առանց հակադրութեան՝ նկարը խորք չի ստանար:

Անվերջ ընթացքի մէջ գործ մը

Ես կը գնահատեմ այն պահերը, երբ կանգ կ'առնենք մեր «անաւարտ նկարին» դիմաց՝ նայելու, խորհելու, զգալու եւ նոր գոյն մը յայտնաբերելու համար: Կեանքի գեղեցկութիւնը հոն է, որ ան երբեք ամբողջապէս չի վերջանար: Մինչեւ վերջին շունչը կը շարունակենք բան մը աւելցնել մեր կտաւին: Ու թերեւս կեանքի ամենէն քաղցր մղումներէն մէկը ուրիշներու համար ներշնչող գոյն ու հիւսուածք փոխանցելն է:

Եւ թերեւս մեծագոյն պարգելը այն գիտակցութիւնն է, թէ մեր նկարը, որքան ալ անձնական ու եզակի ըլլայ, մաս կը կազմէ աւելի ընդարձակ պատկերասրահի մը՝ մարդկային ընդհանուր փորձառութեան, որ մեզ զիրար կը կապէ:

Ահա թէ ինչու սորված եմ հանգիստ զգալ կեանքիս նկարը պահելով նկարակալին վրայ եւ յաճախ վերադառնալով անոր: Մօտեցէ՛ք ձեր սեփական անաւարտ գեղանկարին ամէնօրեայ կեանքէն քաղուած նոր ներշնչումով, քաջութեամբ եւ բաց սրտով: Յիշեցէ՛ք, որ արուեստի ամենէն արտակարգ գործերը անոնք չեն, որ կատարելապէս անթերի են, այլ անոնք՝ որոնց մէջ ստեղծողին ոգին տակաւին կենդանի է:

(*Լոնտոն / Լոս Անճելըս*)

27 Մայիս 2026

Եկեղեցոյ դաւանական միութիւնը եւ

միջեկեղեցական հաղորդութեան հեռանկարը

Նախորդ յօդուածով¹ անդադարձած էինք առաքելական աւանդութիւն ունեցող եկեղեցիներու միջեւ փոխադարձ մերձեցման գործընթացին եւ միջեկեղեցական երկխօսութիւններու շնորհիւ արձանագրուած նշանակալից ձեռքբերումներուն: 1960-ական թուականներէն ի վեր բարձրաստիճան եկեղեցականներու եւ տարբեր յանձնախումբերու միջեւ տեղի ունեցած բազմաթիւ հանդիպումներու, համատեղ յայտարարութիւններու եւ աստուածաբանական խորհրդա-



կցութիւններու շարքին յատկապէս ուշադրութեան արժանի են վերջին շրջանի նախաձեռնութիւնները: Անոնցմէ կ'արժէ առանձնացնել Բարթողիմէոս Ա. Տիեզերական պատրիարքի եւ Թաուատրոս Բ. Ղպտի եկեղեցոյ պապին միջեւ կայացած հանդիպումը 25 ապրիլ 2025-ին Կ.Պոլսոյ, ինչպէս նաեւ Լեւոն ԺԴ. Պապին եւ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին

Բրիտանական գրադարան, Լեւոն թագաւորի ժամագիրք. վայր՝ Կիլիկիա, ծաղկող՝ Ստեփանոս Վահկացի, 1270 թ., MS Or. 13993, թերթ 9v: Իր տեսակին մէջ եզակի այս մանրանկարը կը ներկայացնէ հայկական Կիլիկիոյ Լեւոն Բ. թագաւորը պատարագի արարողութեան ընթացքին՝ խոնարհած սուրբ սեղանին դիմաց, սկիհին մէջ մարմնացած մանուկ Յիսուսին առջև: Յատկանշական է, որ ծաղկողը սուրբ սկիհին մէջ ոչ թէ արքագործուած նշխար մը կը պատկերէ, այլ ուղղակի մարմնացած Աստուածորդին: Ի տարբերութիւն միջնադարեան բազմաթիւ իշխանական դիմանկարներու, Լեւոն Բ. չի նստիր արքայական իր գահին վրայ եւ չի ներկայանար իբրև աշխարհիկ գահակալ մը, այլ կը ներկայանար իբրև աշխարհիկ գահակալ մը, այլ կը

¹ Տե՛ս Մանուկեան, Արել քինյ., «Մէկ Քրիստոս, բայցցտնովի Ս. Պատարագի խորհուրդին հետ անմիջականու 2300, 6 յունիս 2026. նաեւ՝ <https://www.aztagdaily.com> յարարերութեան մէջ: Ան ձերադրած է, եւ ձեռնամուծ ու

երկիւրած խոնարհումով կը գտնուի Տիեզերքի Արքային՝ ԼՔրիստոսի առջև: Իր ետին կանգնած է Վասակ Հեղումեան՝ Հեղում Ա.-ի արքայադաստիարակը՝ իր ձեռքերուն մէջ պահելով Լեւոն Բ.-ի թագը:



միջեւ Վատիկանի մէջ տեղի ունեցած հանդիպումը տարւոյս 17–21 մայիսին: Այս հանդիպումները անգամ մը եւս կը հաստատեն, որ քրիստոնէական տարբեր աւանդութիւններու միջեւ երկխօսութիւնը կը շարունակուի փոխադարձ յարգանքի, եղբայրական փոխըմբռնման, աւելի սերտ համագործակցութեան եւ, ի վերջոյ, եկեղեցական լիակատար միութիւն մը ձեռք բերելու ոգիով:

Քաղկեդոնի ժողովէն (451 թ.) յառաջացած եւ շուրջ տասնվեց դար տեւած եկեղեցական բաժանումը մեծապէս հիմնուած էր պատմական եւ աստուածաբանական թիրիմացութիւններու վրայ: Այսօրուան միջեկեղեցական երկխօսութիւնը կը վկայէ, որ բաժնուած եկեղեցիները իրենց հաւատքի էական բովանդակութեան մէջ շատ աւելի մօտ էին իրարու, քան երբեւէ կը կարծուէր: Այս իրողութիւնը նոր հեռանկարներ բացած է փոխադարձ ճանաչման, վստահութեան վերականգնման եւ եկեղեցական միութեան ուղղութեամբ յառաջընթաց արձանագրելու համար: Աստուածաբանական տեսանկիւնէ դիտուած՝ այդ ցանկալի միութեան իրականացման բարձրագոյն արտայայտութիւնը կը հանդիսանայ միջեկեղեցական հաղորդութեան լիարժէք իրագործումը:

Միջեկեղեցական հաղորդութիւն կամ այսուհետեւ՝ «միջհաղորդութիւն» (intercommunion) բառակապակցութիւնը, կը նշանակէ քրիստոնէայի մը սուրբ հաղորդութիւն ընդունիլը այնպիսի եկեղեցիի մը մէջ, որ դաւանական իմաստով տարբեր է իր եկեղեցական պատկանելութենէն: Այսինքն՝ Հայ առաքելական եկեղեցւոյ անդամ մը որեւէ կաթողիկէ, ռուս կամ յոյն ուղղափառ եկեղեցիի մը մէջ, մասնակցելով սուրբ պատարագի արարողութեան, պատարագիչ քահանայէն անվերապահ ստանալ կարենայ սուրբ հաղորդութիւնը, նաեւ փոխադարձաբար՝ կաթողիկէ, ռուս կամ յոյն ուղղափառ եկեղեցիի մը անդամ հաւատացեալը նոյն ձեւով կարենայ սուրբ հաղորդութիւն ստանալ Արեւելեան հին ուղղափառ եկեղեցիներէն որեւէ մէկուն մէջ:

Եկեղեցաբանութեան տեսանկիւնէ՝ միջհաղորդութիւնը սերտօրէն առնչուած է եկեղեցական լիակատար միութեան հետ: Եկեղեցիին եօթը սրբազան խորհուրդները՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Ձեռնարկութիւն, Պսակ եւ Հիւանդաց կարգ կամ Վերջին օծում, չեն ընկալուիր իբրեւ զուտ անհատական հաւատքի արարքներ, այլ՝ եկեղեցական միութեան լիարժէք վկայութիւն եւ իրագործում: Այդ պատճառով հիմնական սկզբունք կը նկատուի այն փաստը, որ Եկեղեցւոյ խորհուրդները որպէս կանոն կը մատուցուին եւ կը ստացուին բացառապէս նոյն եկեղեցական դաւանութեան շրջանակին մէջ: Հետեւաբար, Կաթողիկէ, Արեւելեան ուղղափառ եւ Արեւելեան հին ուղղափառ եկեղեցիներուն մէջ սուրբ խորհուրդները կը մատուցուին իւրաքանչիւր եկեղեցւոյ սեփական հաւատացեալներուն համար, իսկ հաւատացեալներն ալ զանոնք կը ստանան առանձնապէս իրենց եկեղեցիին ծառայող հոգեւորականներէն: Այս սկզբունքը կը բխի այն համոզումէն, որ Եկեղեցւոյ սրբազան խորհուրդները համայնքային կեանքին մէջ ոչ միայն աստուածային շնորհքի տեսանելի եւ ներգործող նշաններն են, այլեւ Եկեղեցւոյ միութեան լիարժէք վկայութիւններ, որոնց մէջ առաջնահերթն ու էականը Ս. Հաղորդութիւնն է: Արդարեւ, միջեկեղեցական հաղորդութեան իրականացումը այն պահն է, ուր Եկեղեցւոյ միութիւնը այնուհետեւ սպասում մը չէ, այլ ապրուած իրողութիւն:



Բնականաբար այստեղ կը յառաջանայ այն հիմնահարցը՝ արդե՞ք վերոնշեալ եկեղեցիները, որոնք շուրջ եօթնասուն երկար տարիներու միջեկեղեցական երկխօսութիւններէ եւ համատեղ յայտարարութիւններէ ետք ձեռք բերել կրցան այն միջհաղորդութիւնը, որ գոյութիւն ունէր Ընդհանրական եկեղեցիին մէջ մինչեւ Քաղկեդոնի տիեզերական ժողովը եւ անկէ յառաջացած չարաբաստիկ բաժանումը: Դժբախտաբար՝ ո՛չ: Հակառակ գործադրուած բոլոր ջանքերուն, միջեկեղեցական արդիւնաւետ երկխօսութիւններուն ու անոնց միջոցով քրիստոսաբանական հարցերու եւ հաւատքի կարելորագոյն ճշարտութիւններու վերաբերեալ ընդհանրութիւններուն, տակաւին իրականացած չէ եկեղեցիներու միջեւ այն ցանկալի միութիւնը, որ իր վերջնական դրսեւորումն ու կնիքը պիտի գտնէր եկեղեցական միջհաղորդութեան իրականացման մէջ:

Այս առնչութեամբ կ'արժէ անդրադառնալ քանի մը ցայտուն օրինակներու.

Վերջերս թորոնթոհայ ընտանիք մը, որ իր դուստրը կնութեան տուած էր յոյն երիտասարդի մը, ուրախութիւնը ունէր իր նորածինը մկրտելու տեղոյն Արեւելեան ուղղափառ յունադաւան համայնքի եկեղեցիին մէջ: Ուրախութիւնը կրկնակի էր, քանի մկրտուող երեխային կնքահայր պիտի ըլլար յոյն հօրեղբայրը, իսկ կնքամայրը՝ հայ մօրաքոյրը: Երեխայի մկրտութեան նախապատրաստութեան ընթացքին երբ երկու ընտանիքները կը դիմեն տեղոյն յոյն աւագերեցին, ան սիրով կ'ընդառաջէ, սակայն կը մերժէ մօրաքոյրը կնքամայր ըլլալու առաջարկը՝ պատճառաբանելով, որ ան դաւանակից չէ Արեւելեան ուղղափառ յունական եկեղեցոյ, ուստի չի կրնար որպէս վկայ մասնակցիլ մկրտութեան արարողութեան: Այս իրադարձութիւնը խոր հիսաթափութիւն կը յառաջացնէ ինամիական կապերով միացած գոյգ ընտանիքներուն մէջ, որոնք կ'որոշեն երեխային մկրտութիւնը չկատարել դաւանական անհանդուրժողութեան ոգի ցուցաբերող յունական եկեղեցիին մէջ՝ դիմելով տեղոյն հայկական եկեղեցին:

Ուրիշ թարմ օրինակ մը եւս թորոնթոհայ համայնքէն:

Ս. Նեքթարիոս Փենթապոլսեցին կամ Էկինացին սքանչելագործ եւ բժշկող սուրբի մը համբաւը ունի Յունական ուղղափառ եկեղեցոյ մէջ: Իր բարեխօսութեամբ կատարուած հրաշքներուն մէջ մեծ թիւ կը կազմեն մահացու քաղցկեղէ բժշկուածները: Աշխարհի տարբեր անկիւններու մէջ անոր անունով բազմաթիւ տաճարներ կան, որոնցմէ մին կը գտնուի յոյն ներգաղթողներով բնակեցուած Թորոնթոյի արեւմտեան հատուածի թաղամասերէն մէկուն մէջ: Նկատի ունենալով սուրբին համբաւը՝ երկու հայ բարեպաշտ տիկիւններ, որոնցմէ մին քաղցքեղէ կը տառապէր, կիրակի օր մը կը մեկնին այդ եկեղեցին՝ աղօթելու անոր ձօնուած սրբանկարին՝ բժշկութիւն հայցելու համար հրաշագործ եւ ինդրակատար սուրբէն: Եկեղեցին լեցուն էր համայնքի անդամներով, որոնք ջերմեռանդ կը հետեւէին սուրբ պատարագի արարողութեան: Երբ կը մօտենայ հաղորդութիւն ստանալու պահը, հայ տիկիւններէն մին նոյնպէս կը միանայ հաղորդուողներու շարքին: Պատարագիչ քահանան, որ կը ճանչնար իր համայնքին անդամները, հայ տիկնոջ այցելու մը ըլլալը նկատելով հաղորդութիւնը տալէ առաջ կը հարցնէ, եթէ ինք յոյն ուղղափառ դաւանութիւն ունի՞: Տիկինը ի գուր կը ջանայ բացատրել, որ ինք հայ է եւ Հայ եկեղեցոյ դաւանութիւնն ալ ուղղափառ է: Քահանան կը մերժէ հաղորդութիւն տալ ու կը խնդրէ դուրս գալ



հաղորդուողներու շարքէն: Այս վերաբերմունքը տիկնոջ համար խորապէս անակնկալ եւ անհասկնալի էր: Իր պարզ ու անկեղծ հաւատքով ան համոզուած էր, որ Տիրոջ Սեղանը բաց է բոլոր անոնց առջեւ, որոնք ապաշխարելով կը մօտենան Քրիստոսի, որպէսզի ստանան միխթարութիւն, շնորհք եւ մեղքերու թողութիւն: Ուստի քահանային կոպիտ միջամտութիւնը ոչ միայն ծանրօէն կը վիրաւորէ զինք, այլեւ իր մէջ կը յառաջացնէ յուսախաբութեան դառն զգացում մը այն պահուն, երբ հոգեւոր միխթարութեան եւ Աստուծոյ օգնութեան կարիքը ամէնէն աւելի կը զգար:

Աւելի տխուր եւ միաժամանակ խորհրդանշական բնոյթ ունեցող դէպք մը կապուած էր երկու հայ ուխտաւորներու այցելութեան հետ դէպի Արեւելեան ուղղափառ եկեղեցոյ հոգեւոր կեդրոն հանդիսացող Աթոս լեռան վանական համալիրները: Այդ օրերը կը գուգադիպէին Աւագ շաբթուան, երբ Տիրոջ չարչարանաց խորհուրդի ներհայեցողութեան եւ աղօթական մթնոլորտին մէջ վանականութիւնը, բազմաթիւ ուխտաւորներու հետ, ծոմապահութեամբ եւ հոգեպարար աղօթասացութիւններով կը պատրաստուէր դիմաւորելու Քրիստոսի հրաշափառ յարութեան տօնը:

Աթոսեան ասանդութեան համաձայն, ուխտաւորները այդ օրերուն կը շրջին զանազան վանքեր՝ մասնակցելու հոգեշահ արարողութիւններուն՝ ներշնչուելով վանական կեանքի աղօթական շունչով: Այդ ուխտաւորական երթին միացած երկու հայ բարեկամներ իրենց այցելութիւններուն ընթացքին կը հասնին նաեւ վրացական «Իվիրոն» վանքը՝ նաեւ այդ սրբավայրին մէջ մասնակցելու համար մատուցուող պաշտամունքին:

Մակայն արարողութեան ընթացքին կը պատահի դժբախտ եւ խորապէս ցաւալի միջադէպ մը: Հայ ուխտաւորներէն մին եկեղեցի մտնելու պահուն, ըստ սովորութեան, կը խաչակնքէ համաձայն հայկական ասանդութեան՝ ձեռքի շարժումը տանելով ձախ ուսէն դէպի աջ՝ ըստ յունականի աջէն դէպի ձախ տանելու փոխարէն: Սոյնը կը նշմարեն երկու խստակեաց վրացի վանականներ եւ կը խոյանան հայ ուխտաւորներուն վրայ, գրեթէ կը զգետնեն զանոնք, եւ անոնց օձիքէն բռնելով ուղղակի կը հեռացնեն եկեղեցոյ տարածքէն, որովհետեւ անոնցմէ մին իր երեսը «խաչակնքելու յանցանքով» մատնած էր իր այլադաւանութիւնը:

Վերոնշեալ դէպքերը, որքան ալ ցաւալի եւ գայթակղեցուցիչ թուին, պէտք չէ դիտուին որպէս առանձին անհատներու անհանդուրժող կեցուածքի մը պարզ արտայայտութիւն: Անոնք, իրականութեան մէջ, աւելի խոր եկեղեցաբանական իրողութեան մը արտաքին դրսեւորումներն են: Եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող սահմանափակումները իրենց արմատները ունին ոչ թէ ազգային, մշակութային կամ անձնական հակադրութիւններու մէջ, այլ այն ըմբռնումին, որ Ս. Հաղորդութիւնը եկեղեցական լիակատար միութեան գերագոյն արտայայտութիւնն է: Հետեւաբար, միջեկեղեցական հաղորդութեան հարցը չի կրնար դիտուիլ զուտ հովուական կամ գործնական տեսանկիւնէ, այլ կը պահանջէ աստուածաբանական եւ եկեղեցաբանական աւելի խոր քննութիւն: Արդարեւ, եթէ Ս. Հաղորդութիւնը Եկեղեցոյ միութեան խորհուրդն ու կնիքն է, ապա բնական հարցում մը կը ծագի. ի՞նչ պայմաններու տակ տարբեր եկեղեցիներ կրնան հասնիլ այնպիսի փոխադարձ ճանաչման եւ հաղորդութեան, որ նոյն Սեղանէն մասնակցութիւնը դառնայ ոչ թէ բացառութիւն, այլ եկեղեցական միութեան պաշտօնական արտայայտութիւն:



Կաթողիկէ, Արեւելեան ուղղափառ եւ Արեւելեան հին ուղղափառ եկեղեցիներու միջեւ միջհաղորդութեան բացակայութիւնը պէտք չէ դիտել իբրեւ եզակի ու որոշակի եկեղեցական «արգելք» մը, այլ՝ երկարատեւ եւ աստիճանական պատմական բաժանումի հետեւանք: Արդարեւ, Քաղկեդոնի ժողովը յառաջացուց առաջին հիմնական բաժանումը Ընդհանարական եկեղեցիին մէջ, երբ Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւններուն վերաբերեալ բացատրութեան տարբեր ձեւակերպումները յանգեցուցին առանձին եկեղեցական ինքնութիւններու ձեւաւորման՝ մէկ կողմէ Կաթողիկէ, ապա Արեւելեան ուղղափառ, իսկ միւս կողմէ Արեւելեան հին ուղղափառ եկեղեցիներու աւանդութեանց միջեւ:

Հետագայ կարեւոր իրադարձութիւնը հանդիսացաւ այսպէս կոչուած «Մեծ պատակտում»-ը 1054 թուականին, երբ վերջնականապէս խզուեցաւ Հռոմի եւ Կ.Պոլսոյ միջեւ տակաւին առկայ եկեղեցական հաղորդութիւնը՝ հիմնականօրէն պապական գերիշխանութեան, նաեւ ծիսական-աստուածաբանական տարբեր զարգացումներու շուրջ գոյացած տարակարծութիւններու պատճառով: Այս պատմական խզումներուն հետեւանքով բոլոր աւանդութիւններուն մէջ աստիճանաբար ձեւաւորուեցաւ այն հիմնական ընկալումը, որ Ս. Հաղորդութիւնը եկեղեցական լիակատար միութեան տեսանելի արտայայտութիւնն է եւ հետեւաբար չի կրնար իրագործուիլ առանց դաւանական ամբողջական միութեան: Այլ կերպ՝ միջեկեղեցական հաղորդութիւնը եկեղեցիներու միութեան միջոց չի կրնար ըլլալ, այլ՝ գերազանցապէս վերջին նպատակ: Ուստի այսօր գոյութիւն ունեցող Առաքելական եկեղեցիներու միջեւ միջհաղորդութեան բացակայութիւնը պէտք չէ հասկնալ իբրեւ դիտաւորեալ արգելք, այլ՝ որպէս հետեւանք դարերու ընթացքին աստիճանաբար իրարմէ հեռացած եկեղեցաբանական, աստուածաբանական եւ կանոնական զարգացումներու, որոնք ցայսօր, հակառակ միջեկեղեցական երկխօսութիւններու դրական ձեռքբերումներուն եւ համատեղ յայտարարութիւններուն, տակաւին ամբողջապէս յաղթահարուած չեն:

Հակառակ պատմութեան ընթացքին կուտակուած բաժանումներուն, փոխադարձ անվստահութեան եւ դարերով ամրապնդուած կանոնական սահմաններուն, այսօր քրիստոնէական եկեղեցիներու միջեւ ընթացող երկխօսութիւնը նոր հեռանկարներ կը բանայ եկեղեցական միութեան ճանապարհին: Ինչպէս վերոգրեալ նշուեցաւ, վերջին տասնամեակներու աստուածաբանական ուսումնասիրութիւնները եւ համատեղ յայտարարութիւնները յստակօրէն ցոյց կու տան, որ անցեալի բազմաթիւ հակամարտութիւններ շատ աւելի լեզուական, մշակութային եւ պատմական պայմանաւորուածութիւններու արդիւնք էին, քան հաւատքի բուն բովանդակութեան շուրջ անհաշտ հակասութիւններու: Այս գիտակցութիւնը աստիճանաբար կը վերականգնէ բաժնուած եկեղեցիներուն միջեւ վստահութեան մթնոլորտը եւ կը նպաստէ փոխադարձ ճանաչման: Եթէ Եկեղեցին իր էութեամբ կոչուած է ըլլալու Քրիստոսի մէկ Մարմինը, ապա այդ միութիւնը չի կրնար մնալ միայն տեսական դաւանանք կամ ապագային վերաբերող ակնկալութիւն: Ան կոչ ու միաժամանակ տերունական պատգամ մըն է (Յովհ. Ժ, 16, նաեւ՝ ԺԷ, 21)՝ վերագտնելու այն միութիւնն ու հաղորդութիւնը, որոնց արմատները կը հասնին մինչեւ առաքելական ժամանակները: Այդ հեռանկարին մէջ միջեկեղեցական հաղորդութիւնը պարզապէս կարգապահական հարց մը չէ, այլ Եկեղեցւոյ միութեան տեսանելի եւ



կատարեալ արտայայտութիւն: Ուստի եկեղեցիներու միութեան ուղղութեամբ առնուած իւրաքանչիւր անկեղծ քայլ, իւրաքանչիւր երկխօսութիւն եւ իւրաքանչիւր փոխադարձ ճանաչում ոչ միայն պատմական վերքերու սպիացում է, այլ նաեւ յառաջընթաց դէպի այն օրը, երբ քրիստոնէաներ, բաժանումներու տխուր յիշատակէն անդին, պիտի կարենան նոյն Ս. Սեղանին շուրջ միասնաբար ճաշակել սրբագործուած Հացը եւ ըմպել նոյն Բաժակէն՝ որպէս մէկ, սուրբ, առաքելական եւ ընդհանրական Եկեղեցւոյ կենդանի վկայութիւն:

Միջեկեղեցական հաղորդութեան իրականացման ճանապարհին առկայ ամենալուրջ աստուածաբանական խոչընդոտներէն մէկը տիեզերական ժողովներու փոխադարձ ճանաչումի հարցն է: Քանի որ Կաթողիկէ, Արեւելեան ուղղափառ եւ Արեւելեան հին ուղղափառ եկեղեցիները տարբեր կերպով կը գնահատեն եւ կը ճանչնան Եկեղեցւոյ պատմութեան ընթացքին գումարուած տիեզերական ժողովներու հեղինակութիւնը, անոնց միջեւ տակաւին բաց կը մնայ այն հիմնարար հարցը, թէ ո՞րն է հաւատքի վերջնական եւ ընդհանուր չափանիշը:

Արեւելեան ուղղափառ եկեղեցիները կը ճանչնան տիեզերական եօթը ժողովներ՝ Նիկիոյ Ա. (325 թ.), Կ.Պոլսոյ Ա. (381 թ.), Եփեսոսի (431 թ.), Քաղկեդոնի (451 թ.) Կ.Պոլսոյ Բ. (553 թ.), Կ.Պոլսոյ Գ. (680–681 թթ.) եւ Նիկիոյ Բ. (787 թ.):

Հռոմեական կաթողիկէ եկեղեցին նշուած եօթը ժողովներէն բացի կը ճանչնայ տասնչորս տիեզերական ժողովներ եւս, ընդհանուր թիւով՝ քսանմէկ տիեզերական ժողովներ, որոնց գումարման առթիւ սահմանուած են դոգմաներ, այլապէս՝ քրիստոնէական հաւատքի գերագոյն ճշմարտութիւններ:

Արեւելեան հին ուղղափառ եկեղեցիներու ընտանիքը, ներառեալ՝ Հայ առաք. եկեղեցին, կը ճանչնան միայն առաջին երեք տիեզերական ժողովները, եւ անոնց ընդունած դաւանաբանական որոշումները կը նկատեն ամբողջ Եկեղեցւոյ համար պարտադիր եւ հեղինակաւոր հաւատքի չափանիշ:

Առաջին երեք տիեզերական ժողովներու վճիռներով կը լրացուին եւ կը հաստատուին քրիստոնէական հաւատքի հիմնական սիւները, որոնք կը կազմեն ուղղափառ դաւանութեան անխախտ հիմքը՝ ամենասուրբ Երրորդութեան, Մարդեղութեան եւ Փրկագործութեան խորհուրդներուն մասին: Հայ եկեղեցւոյ Հաւատոյ հանգանակը՝ կամ Հաւատամքը, այդ աստուածաբանական ճշմարտութիւններու բիրեղացած արտայայտութիւնն է, որ սուրբ պատարագի արարողութեան ընթացքին հաւատացեալ հայր արտասանելով կամ երգելով՝ ոչ միայն կը յիշէ, այլ հոգելին կը վերապրի դարձի դար ի դար իր հայրերէն աւանդուած հաւատքին խորունկ խոստովանութիւնը:

Արդարեւ, Ս. Հաղորդութիւնը եկեղեցական ամբողջական միութեան գերագոյն արտայայտութիւնն է, ուստի կը նախադրէ ոչ միայն ընդհանուր հաւատք առ Քրիստոս, այլեւ հաւատքի այդ աւանդութեան հեղինակաւոր վկայութիւններու շուրջ համաձայնութիւն: Հետեւաբար, քանի դեռ գոյութիւն չունի լիարժէք համաձայնութիւն մը տիեզերական ժողովները փոխադարձաբար ընդունելու եւ անոնց դաւանաբանական հեղինակութիւնը անվերապահօրէն ճանչնալու հարցին շուրջ, եկեղեցիներու միութեան հարցը կը շարունակէ



մնալ դժուար իրագործելի նպատակ մը, իսկ լիակատար միջհաղորդութիւնը՝ միջեկեղեցկան երկխօսութիւններու ճանապարհին կանգնած ամենաբարդ եւ զգայուն մարտահրաւերներէն մէկը:

Այնուամենայնիւ, սակայն, այսօրուան աշխարհաքաղաքական բարդ եւ արագ փոփոխուող իրականութեան մէջ եկեղեցիներու միութեան հարցը կը ստանայ նոր եւ աւելի հրատապ նշանակութիւն: Համաշխարհային մակարդակով աճող լարուածութիւնները, պետութիւններու միջեւ հակամարտութիւնները, ինչպէս նաեւ կրօնական ինքնութիւններու քաղաքական գործիքաւորումը կը ստեղծեն միջավայր մը, ուր կրօնը ոչ միայն հոգեւոր իրականութիւն է, այլ նաեւ երբեմն բաժանման կամ հակադրութեան գործօն: Այս պայմաններուն մէջ քրիստոնէական եկեղեցիներու բաժնուած ըլլալու փաստը կը թուլացնէ անոնց վկայութիւնը աշխարհի մէջ եւ կը նուազեցնէ անոնց միասնական բարոյական ու հոգեւոր ձայնը՝ արդարութեան, խաղաղութեան եւ մարդու արժանապատուութեան պաշտպանութեան հարցերուն հանդէպ: Միաժամանակ՝ միաստուածեան այլ կրօններու հետ յարաբերութիւններու դաշտին մէջ քրիստոնէութիւնը կը դիմագրաւէ բազմակողմանի երկխօսութեան մարտահրաւերներ, ուր միասնական եւ համադրուած եկեղեցական ներկայութիւնը աւելի մեծ կշիռ կրնայ ունենալ զիրար հասկնալու եւ պայթիւնավտանգ լարուածութիւնները մեղմացնելու գործընթացին մէջ: Հետեւաբար, եկեղեցիներու միջեւ մերձեցումը եւ աստիճանական միութեան որոնումը այսօր այլեւս միայն ներեկեղեցկական կամ դաւանական խնդիր մը չէ, այլ կը դառնայ համաշխարհային պատասխանատուութեան հարց, որուն միջոցով քրիստոնէութիւնը կրնայ աւելի վստահելի եւ համահունչ կերպով ներկայանալ մարդկութեան առջեւ իբրեւ խաղաղութեան, հաշտութեան եւ հոգեւոր միութեան վկայութիւն: Առանց միջքրիստոնէական կամ միջեկեղեցկական ամբողջական միութեան՝ միջկրօնական երկխօսութիւնը չի կրնար դառնալ լիարժէքօրէն արդիւնաւետ եւ երաշխաւորել կայուն խաղաղութիւն մը աշխարհի մէջ:

Յաւարտ բանիս, այստեղ աւելորդ պիտի չըլլայ Եկեղեցոյ միութեան վերաբերեալ տալու պատկերաւոր օրինակ մը: Եկեղեցիները կը նմանին առանձին լճակներու, որոնք պատմական բաժանումներու բերումով աստիճանաբար հեռացած են իրարմէ՝ իրենց միջեւ կուտակելով տիղմ, կաւ, խիճ, աւազ ու քար՝ ձեւաւորելով կարծրացած եւ գրեթէ անանցանելի պատնէշներ:

Սակայն Սուրբ Հոգին Իր շնորհքի եւ սիրոյ առատաբուխ անձրեւներով պիտի կենսաւորէ այդ բաժնուած լճակները, որպէսզի ջուրերուն մակարդակը աստիճանաբար բարձրանայ, եւ այն արհեստական պատնէշները, որոնք բաժանում կը ստեղծեն, կամաց-կամաց փլուզին ու անգոր դառնան իրենց այնուհետեւ անիմաստ սահմանազատումները: Այսպիսով՝ առանձնացած լճակները պիտի սկսին հետզհետէ իրարու միանալ, մինչեւ որ անոնք միասին կազմեն հաւատքի մէկ ծով, որուն մէջ պիտի արտացոլայ Եկեղեցոյ միութիւնը՝ իբրեւ մէկ Մարմին՝ ամենակալ մէկ Աստուածով, յարուցեալ փրկիչ մէկ Յիսուս Քրիստոսով եւ կենդանաբար մէկ Ս. Հոգիով վերամիաւորուած իրականութիւն:

Դոկտ. Աբէլ քինյ. Մանուկեան

Ժրնել, 13 յունիս 2026

*Յիշատակ սրբոյն Ներսիսի Մեծի հայրապետին մերոյ եւ
Խաղայ եպիսկոպոսին:*

«ԱՅՍՏԵՂԷՆ ԹՈՒՐՔԸ ԱՆՑԱԻ»

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ

Պատմութիւնը անջնջելի յիշողութիւն մըն է:



Քանի մը ժամ առաջ, (այսօր՝ Հինգշաբթի յետմիջօրէ) Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի յայտարարութիւնը՝ թէ «թրքական բանակը երբեք չէ քանդած այն վայրերը, ուրկէ անցած է», այն տեսակ պնդումներէն է, որոնք ոչ միայն կը հակասեն պատմութիւնը, այլեւ կը վիրաւորեն միլիոնաւոր զոհերու յիշատակը: Աւելի՛ն. երբ ան կ'աւելցնէ, թէ «թրքական բանակը մարդոց, ծառերու, քաղաքներու վնաս չէ հասցուցած՝ բացի թշնամիէն», հարցում մը ինքնաբերաբար կը ծագի՝ ո՞վ էր այդ «թշնամին»: Հայ մանուկը: Մերպ գիւղացիները: Կիպրոսի

տեղահանուած յոյն ընտանիքները: Սուրիոյ աւերակներուն տակ մնացած անմե՞ղ բնակիչները:

Էրտողանի այս յայտարարութիւնը պատմութեան դէմ արձակուած այնպիսի պնդում մըն է, որուն դիմաց լռելը կը նշանակէ անտեսել ժողովուրդներու արժանապատուութիւնը:

Պատմութիւնը քարոզչական բեմ չէ, ուր իշխանութիւնները կրնան բառերով փոխել իրականութիւնը: Պատմութիւնը ժողովուրդներու յիշողութիւնն է, գերեզմաններու լռութիւնն է, այրած եկեղեցիներու մոխիրն է, գաղթի ճամբաներուն վրայ կորսուած սերունդներու ստուերն է: Այդ յիշողութիւնը տակաւին կ'ապրի աշխարհի բազմաթիւ անկիւններու մէջ:

Տրանսալի մեծ գրող Վիքթոր Հիլկօ, 19-րդ դարուն, Օսմանեան կայսրութեան աւերիչ ընթացքը նկարագրելու համար գրած էր իր պատմական դարձած խօսքը՝ «Այստեղէն թուրքը անցաւ»:

Հիւկոյի արտայայտութիւնը գրական պարզ պատկեր մը չէր, այլ քաղաքակրթութեան մը ողբերգական նկարագրութիւնը: Ան քաղաքակրթական ահազանգ մըն էր միաժամանակ: Որովհետեւ ուրտեղէն որ անցաւ օսմանեան եաթաղանը, սփռեց մահ, աւեր, արիւն, բռնութիւն, տեղահանում եւ մշակութային ոչնչացում:



Եւրոպայի պատմութիւնը յղի է այս ողբերգութիւններով: Պալքաններու ժողովուրդները մինչեւ այսօր կը կրեն այդ յիշողութիւնը: Սերպերը, յոյները, պուլկարները եւ ուրիշներ դարերով ապրեցան օսմանեան բարբարոսութիւններուն տակ: Քաղաքներ կողոպտուեցան, եկեղեցիներու զանգեր համրացան, եկեղեցիներ մզկիթի վերածուեցան, ժողովուրդներ բռնի իսլամացան, տուրքերու եւ ճնշումներու ենթարկուեցան: Սերպ ժողովուրդի ազգային գիտակցութեան մէջ տակաւին վառ կը մնայ Քոստովոյի, Պելկրատի եւ Բազմաթիւ շրջաններու պատմական արհաւիրքը:

Հայ ժողովուրդին համար Էրտողանի յայտարարութիւնը ունի իւրայատուկ հնչեղութիւն: Ան ոչ միայն պատմութեան ժխտում է, այլեւ ցեղասպանութեան Բացայայտ նսեմացում: 1915-ին Օսմանեան կայսրութիւնը պետական ծրագիրով բնաջնջեց մէկուկէս միլիոն հայեր: Հայկական գիւղեր դատարկուեցան, քաղաքներ աներուեցան, եկեղեցիներ եւ վանքեր գետին հաւասարեցան: Արեւմտահայաստան աշխարհը լռութեան անապատի վերածուեցաւ: Ան բացայայտ ժխտում մըն է Հայոց Ցեղասպանութեան՝ 20-րդ դարու առաջին մեծ ոճիրին:

Եթէ թրքական բանակը «ոչ մէկ քաղաք» աներած է, ապա ո՞ր են Անիի զանգակները: Ո՞ր են Վանի հայկական թաղերը, Մուշի դպրոցները, Սասունի գիւղերը, Կիլիկիոյ ծաղկուն կեդրոնները: Ո՞ր են անոնց զանգակները, դպրոցները, գերեզմանները: Ո՞ր են Վանի, Մուշի, Սասունի, Էրզրումի, Սեբաստիոյ եւ Կիլիկիոյ հայկական աշխարհները:

Ո՞ր են միլիոնաւոր մարդիկ, որոնց գոյութիւնը ջնջուեցաւ իրենց հայրենի հողերէն: Պատմութիւնը չի լռեր, որովհետեւ քարերն իսկ կը խօսին:

Կիպրոսի մէջ, 1974-ի թրքական ներխուժումը տակաւին բաց վերք մըն է միջազգային քաղաքականութեան մէջ: Տասնեակ հազարաւոր յոյներ տեղահանուեցան իրենց տուններէն, եկեղեցիներ պղծուեցան, մշակութային ժառանգութիւն ոչնչացուեցաւ: Ֆամակուպայի լքուած փողոցները, փշալարերով բաժնուած Նիկոսիան եւ անհետացած ընտանիքներու ձակատագիրը այսօր ալ մարդկային խղճին վրայ ծանրացած հարցումներ են:

Սուրիոյ մէջ, վերջին տարիներուն Թուրքիոյ ռազմական ներխուժումը նոր տագնապ ստեղծեց: Տարածքներ բռնագրաւելու կողքին, բազմաթիւ միջազգային կազմակերպութիւններ արձանագրեցին՝ բնակչութեան բռնի տեղահանումներ, ժողովրդագրական փոփոխութիւններ եւ մշակութային ժառանգութեան ոչնչացում:

Լիբանանն ալ իր դառն յիշատակներ քաղեց օսմանեան բռնատիրութենէն : Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, 1915-1918-ի Մեծ Սովը հարիւր հազարաւոր լիբանանցիներու մահուան պատճառ դարձաւ: Ճեմալ Փաշայի դաժան վարչակարգը այսօր ալ լիբանանեան յիշողութեան մէջ կը մնայ՝ խեղդող եւ անողոք իշխանութեան խորհրդանիշ: Սովը միայն բնական աղէտ չէր. այլ՝ քաղաքականութեան հետեւանք:

Վերոյիշեալ վկայութիւնները պատահական պատմական դէպքերու շարք չեն: Անոնք մէկ ամբողջական մտածողութեան արտայայտութիւն են՝ այն մտածողութեան, որ ուժը եւ բռնութիւնը կը դնէ արդարութենէն վեր, կայսրութիւնը՝ ժողովուրդներէն վեր, իշխանութիւնը՝ մարդկային արժանապատուութենէն վեր:

Այսօր, երբ Թուրքիա կը փորձէ վերաշարադրել իր պատմութիւնը, հարցը միայն անցեալը չէ: Իսկական հարցը ներկան եւ ապագան է: Այն պետութիւնը, որ չառերեսուի իր պատմական մեղքերուն, ուշ կամ կանուխ, անպայման պիտի կրկնէ նոյն յանցագործութիւնը: Ժխտումը, ուրացումը երբեք չեն կրնար ստեղծել հաշտութեան մթնոլորտ: Ընդհակառակը, անոնք նոր պատեր կը կառուցեն ժողովուրդներու միջեւ:

Ժողովուրդներու յիշողութիւնը ունի երկար կեանք :

Հայ ժողովուրդը տակաւին կը յիշէ Տէր Զօրի անապատները: Յոյնը կը յիշէ Զմիւռնիոյ հրդեհը: Սերպը կը յիշէ օսմանեան դարերու բռնութիւնը: Կիպրացին կը յիշէ իր լքուած տունը: Մուրիացին կը յիշէ փլատակներուն տակ մնացած իր քաղաքը:

Պատմութիւնը, որքան ալ փորձեն վերաշարադրել, միշտ կը վերադառնայ իր փաստերով: Որովհետեւ երբ աշխարհը կը նայի Արեւմտահայաստանի աւերակ եկեղեցիներուն, Կիպրոսի բաժնուած քաղաքներուն, Պալքաններու արիւնոտ յիշողութիւններուն եւ Միջին Արեւելքի փլատակներուն, այս բոլորին խորքէն դարձեալ կը բարձրանայ Վիքթոր Հիւկոյի դառն եւ ահագանգող արտայայտութիւնը՝

«Այստեղէն թուրքը անցաւ»:


Ճշմարտութիւնը երբեմն կը լռէ, բայց երբեք չի մահանար:

«ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԷՎ ԱՅԼ ՏԵՍՈՒԹԻՒՆ...1946 ԹՈՒԱԿԱՆԷՆ



Ստորեւ մեջբերուող հատուածը հնչակեան խմբագիր Ասատուր Էլճանեանի «ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԻՐՔԸ ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ՆԵՐԳԱՂԹԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻՆ ՀԱՆԴԷՊ» գրքոյկի երկրորդ հրատարակութենէն է (էջ 23-25), լոյս տեսած՝ Պէյրութ, 1946-ի երկրորդ կիսուն: Այդ օրերուն, քաղաքի նաւահանգիստէն հերթաբար ճանապարհ կ'իյնային ներգաղթի կարաւանները եւ Էլճանեան ու բազմաթիւ հայեր կը շարունակէին յուսալ թէ Մոսկուա պիտի յաջողէր Խորհրդային Հայաստանին կցել տալ Թուրքիոյ տիրապետութեան տակ գտնուող «Ուիլսընեան քարտէսով եւ Սէվրի Խորհրդաժողովով ընդունուած հայկական հողերը»: Գրքոյկը լոյս ընծայուած էր ընդդէմ Կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան կաթողիկոս-պատրիարքի յորդորին, որ կաթողիկէ հայերը այդ

հանգրուանին չներգաղթեն Խորհրդային Հայաստան՝ քանի դեռ այնտեղ կրօնի ազատութիւն չկայ:



(Երբ ժողովուրդ մը՝ պատմութեան հազարամեակներու իր գոյերթին ընթացքին, տարբեր հանգամանքներու բերումով, կը մնայ աշխարհաքաղաքական նոյն դարաշրջանին մէջ, նմանատիպ գաղափարներու մերթ ընդ մերթ տարածուիլը երեւի անխուսափելի է:)

Սկիզբ մէջբերման.

«Այժմ արտասահմանի մէջ ունինք երկու թիփով հայրենասէրներ՝ Ռոմանթիք, իւթօփիւսթ հայրենասէր և իրապաշտ, դրապաշտ հայրենասէր: Այս իսկ տարբերութիւնն է որ «ներգաղթ»ողոտող փորձահեղուկը երեւան կը բերէ:

Առաջինին համար հայրենիքը անցեալ է, մտապատկեր մը, միրաժ մը, անուրջ մը, ան առարկայական գոյութիւն // [էջ 24] չունի, այլ

վերացական, ան կազմուած է անհատական կամ հատուածային շահերու ախորժակներէ ու բաղձանքներէ, այդ անկարելի և անիրական մտապատկերին գովքն ու պաշտամունքն է իր հայրենասիրութիւնը:

Յնորական ... հայրենասիրութիւնը իր դասականութեան և անգործնականութեան մեղքէն զատ ան կը դառնայ բացասական և հակահայրենասիրական, քանի որ ան կը ժխտէ, կ'ուրանայ ա՛յն իրական հայրենիքը, որ պատմական այժմու տուեալ պահուն միակ կարելի իրողութիւնն է և որ Պեհուսթիւնի [sic! – Ա.Ս.] սեպագիր արձանագրութենէն իվեր Արմէնիա անունով կը ճանչցուի: Աս վերացական հայրենասիրութեան ամէնէն վատ կողմը հոն է որ այդ հոգեկան, մտապատկերային հայրենիքը որ անորոշ շուք մըն է և մարդէ մարդ ախորժակէ ախորժակ այլեւայլ ձեւեր կ'առնէ, կը դառնայ հրամայական կաղապար մը՝ որու վրայ միակ հնարաւոր և շօշափելի, իրական հայրենիքը պիտի գայ կաղապարուիլ: Ասոր համար է որ առաջինը կը դառնայ հէքեաթ, ցնորք, երեւակայութիւն, երգ, հռետորութիւն, աղաղակ, բռունցքը սեղանին զարնել, թելը օղին մէջ ճօճել, ոտքը գետին զարնել և երդում-պատառ ըլլալ, ուրանալու, անտեսելու, սեւցնելու, բամբասելու, ամբաստանելու և նոյնիսկ դաւաճանելու այն հայրենիքը, որ առարկայական իրողութիւն է այսօր:

ՀՈՂՆ է իրական և միակ նախապայմանը հայրենիքին: Այն ցեղը որ կրնայ կառչիլ ու ճանկել այդ պապենական ժառանգ հողը, կրնայ գոյատեւել և ուռճանալ: Այդ իրական եւ հիմնական ազդակը իր ձեռքէն փախցուցած որեւէ ազգ, վաղ կամ անագան [այսինքն՝ ուշ – Ա.Ս.], դատապարտուած է մեռնելու և անհետանալու: Առանց ջուրի ջաղացքը անիմաստ իւրտուիլակ մըն է: Առանց հողի հայրենիքի ըմբռնումը՝ օճառի պղպջակ է՝ երփներանգ թաղանդով, բայց փուռ ու պարապ միջուկով: Որևէ ազգ, եթէ աշխարհագրական և պատմական անուն մը չուզեր դառնալ հաստատուն կաղնիի մը պէս՝ իր բնատուր // [էջ 25]



հողի խաւերուն խորունկը պիտի մխրճէ իր արմատները, այդ հողի ընդերքէն ծծելու իր աւիշը և կանգուն մնալու պարբերական փոթորիկներուն դիմաց: Այդ հողին վրայ է որ պիտի խարսխուի ցեղը, որ անկէ պիտի առնէ մշակոյթին, տնտեսութեան, աշխատանքին ու վայելքին ուժն ու սնունդը:

Ուրեմն հայրենիքը՝ մտապատկեր մը չէ որու վրայ պիտի գայ կաղապարուելու հողային հայրենիքը, այլ այդ մտապատկերն է որ պիտի գայ կաղապարուելու և յարմարելու այն հողային իրական հայրենիքին, որ այժմ գոյութիւն ունի Արարատի ստորոտը: Պետութիւնը այն ամուր սիմէնթն է որ պիտի շաղէ եւ իրարու փակցնէ անհատ աղիւսները, հայրենիքը դարձնելով անխորտակելի ամբողջ մը: Հայր Աղաճանեան և իրեն պէս և իրեն չափ հայրենասէրները, բացասական հայրենասէրներ են, որ իրողութիւնը լքած և ուրացած՝ շուքերու ետեւէ կը վազեն: Անոնք ազգը ինքնասպանութեան կը մղեն, երբ կը յորդորեն արտասահման մնալ, այն փուճ պատրուակով թէ մարդու հայրենիքը հոն է, ուր ան իր հացը կը ճարէ: Աս անհող հայրենիքն է և հայրենաստիրութիւն չէ, այլ իւթոբիական, որ կրնայ հասնիլ մինչեւ հայրենադաւութիւն՝ իրական հայրենիքին հանդէպ:»

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ

ՁԱՅՆԵՐ ՔՈՒԷՅԹԷՆ

(գաղութային արձագանգ)

ԼԵՒՈՆ ՇԱՌՅԵԱՆ



Մեր այս սինակիին մէջ առաջին անգամ է որ արձագանգներ կը բերենք Քուէյթէն, որ Արաբական Ծոցի շրջանի հնագոյն ու ամենէն աշխոյժ հայազաղութը կը սեպուի: Աշխոյժ, որովհետեւ Քուէյթի մէջ կը գտնուի շրջանին հայկական ամենօրեայ միա՛կ վարժարանը՝ Ազգ. Ճեմարանը, ահա արդէն շուրջ 65 տարիէ իվեր:

Ազգ. Ճեմարանի գոյութիւնը օրհնութիւն մըն է քուէթահայոց համար: Դպրոցը սկսելով մանկապարտէզէն ու նախակրթարանէն՝ հետզհետէ յաջողած է

վերածուիլ երկրորդական վարժարանի, 1980-ին տալով պաքալորիայի իր առաջին հունձքը:

Ե՛ր երբեմն, այս ճեմարանի աշակերտութեան թիւը եւս,-- ինչպէս Հալէպի մեր դպրոցներունը,-- կը հասներ մինչեւ 800-ի...: Պարագան նոյնը չէ հիմա: Ծոցի մերթ ընդ մերթ բռնկող պատերազմները արտագաղթի մղած են (ու կը մղեն) տեղւոյն ընտանիքներէն շատեր, որոնք առաւելաբար Մուրիայէն ու Լիբանանէն եկած ու հաստատուած էին հոս, տնտեսական դրդապատճառներով: Ճիշդ տասնամեակ մը առաջ, 2015-16 ուսումնական



տարեշրջանին, Քուէյթի Ճեմարանի աշակերտութեան թիւը 400 էր: 2022-ին այդ թիւը իջած էր 340-ի: Իսկ ընթացիկ տարեշրջանը (2025-26) փակուած է 298 աշակերտներով, որոնց 15 տոկոսն ալ ոչ-հայեր են...: 2016-էն ի վեր կրթօժախին տնօրէնն է տոքթ. Ներսէս Սարգիսեան (Հալէպէն): Վարժարանին յիսնամեակի յուշամատենը հրատարակուած էր 2011-ին, հալէպահայ կրթական մշակ (արդէն աւելի քան տասնամեակէ մը ի վեր Երեւան հաստատուած) Յակոբ Չոլաքեանի հեղինակութեամբ: Դպրոցին նիւթական բեռը ամբողջովին կը հոգայ տեղւոյն գաղութը:

Քուէյթի հայ գաղութին պատմութիւնը հին չէ. կը սկսի 1950-ականներէն: Գործի ու շահաբեր աշխատանքի հետամուտ սուրիահայ, լիբանանահայ, իրաքահայ եւ իրանահայ 300-400 երիտասարդներ կը կազմեն գաղութին առաջին կորիզը:

1960-էն սկսեալ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, ընդառաջելով իրեն հասած դիմումներուն, «Ճոզեալ հովութեան շրջան»-ի կը վերածէ Քուէյթը, տարիներ ետք ալ անոր կու տայ թեմական առանձին կառոյց:

Հոս կը գործէ մէկ եկեղեցի: Տեղւոյն առաջնորդը իրեն օժանդակ ունի միակ քահանայ մը: Եկեղեցին ու դպրոցը առանցքը կը կազմեն գաղութին:

Ստորեւ՝ անցնող շաբաթներու քուէյթահայ ազգային կեանքէն քաղուած լուրերու փունջ մը:

ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԸ, Ապրիլ 17-ին, ազգ. առաջնորդարանի դահլիճին մէջ գումարած է իր երեսփոխանական ժողովին լիազումար մէկ նիստը, քննելու համար գաղութին առնչուող այլաբնոյթ հարցեր: Նիստին նախագահած է Արտակ աւ. քինյ. Քեհեայեան: Կարդացուած են ազգային վարչութեան եւ Ազգ. Ճեմարանի հոգաբարձութեան նիւթաբարոյական գոյգ տեղեկագրերը, որոնց մասին, այնուհետեւ, արտայայտուած են կարծիքներ: Լիազումար նիստին վերաբերեալ հրատարակուած պաշտօնական լրատուութիւնը կ'ըսէ, թէ «ազգային երեսփոխանական ժողովը բարձր գնահատեց գործունէութիւնը ազգ. վարչութեան եւ Քուէյթի ազգային վարժարանին, որոնք հակառակ բոլոր մարտահրաւերներուն՝ յամառօրէն կը շարունակեն իրենց առաքելութիւնը»:

ՔՈՒԷՅԹԻ հայութիւնը, Ապրիլ 24-ին, Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ մատուցուած պատարագի աւարտին՝ «Ներսէս Շնորհալի» սրահը սարքուած յուշահանդէսով մը ոգեկոչած է Հայկ. Ցեղասպանութեան զոհերուն յիշատակը, Մեծ Ոճիրին 111-ամեակին առիթով: Ձեռնարկը կազմակերպուած է թեմին ազգ. վարչութեան կողմէ: Բացման խօսք արտասանած է Յովիկ Գուգուեան: Գեղարուեստական կարճ յայտագրէ մը ետք (ուր տեղ գտած է Պարոյր Մեակի «Քիչ ենք, բայց հայ ենք» քերթուածը)՝ բանախօսած է Արամ Չափարեան: Անոր յաջորդած է Հայաստանի դեսպան դոկտ. Արսէն Առաքելեանի խօսքը: Հուսկ բանքը արտասանած է տեղւոյն հովիւր՝ Արտակ աւ. քինյ. Քեհեայեան:

ՔՈՒԷՅԹԻ կրթութեան նախարար Ճելալ ալ-Թապթապա, Մայիս 13-ին, իր պաշտօնատեղիին մէջ ընդունած է Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Արսէն Առաքելեանը, որուն ընկերակցած է Ազգ. Ճեմարանի տնօրէն տոքթ. Ներսէս Սարգիսեան: Դեսպանը բերանացի ամփոփ զեկոյց մը տուած է կրթական ոլորտէն ներս



Հայաստանի ձեռքբերումներուն, ինչպէս նաեւ դեսպանատան ջանքերուն մասին՝ ինչ կը վերաբերի երկկողմ յարաբերութիւններուն: Նախարար ալ-Թապթապա, իր կարգին, գնահատանքով արտայայտուած է Քուէյթի հայ համայնքին մասին, վերահաստատելով իր կառավարութեան պատրաստակամութիւնը՝ աջակցելու Քուէյթի հողին վրայ գործող միակ հայկական վարժարանին: Հայաստան-Քուէյթ միջկառավարական յանձնաժողովի յառաջիկայ նիստին ընդառաջ՝ կողմերը համաձայնած են նոր առաջարկներու ճամբով աշխուժացնել միջնակարգ եւ մասնագիտական կրթութեան մարզէն ներս գործակցութիւնը:

ՔՈՒԷՅԹԻ մօտ Հայաստանի դեսպանը՝ դոկտ. Արսէն Առաքելեան, որ միաժամանակ իր երկիրը կը ներկայացնէ Յորդանանի մէջ, Մայիս 18-ին մայրաքաղաք Ամմանի մէջ իր հաւատարմագրերը ներկայացուցած է Յորդանանի թագաւոր Ապտալլա Բ.-ին: Հայ դեսպանին նստավայրը կը մնայ Քուէյթը:

ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԸ հաղորդագրութեամբ մը յայտնած է, թէ Վեհափառ Արամ Ա. կաթողիկոսի տնօրինումով՝ թեմին առաջնորդական նոր տեղապահ նշանակուած է Հոգ. Տ. Օշին վրդ. Չուալերթանեան: Ան ծնունդով Հալէպէն է, 30 տարեկան: Աւարտած է ՊիքՏայայի Դպրեվանքը եւ կուսակրօն քահանայ ձեռնադրուած 2016-ին: Ցարդ թեմական պաշտօններ վարած չէ, այլ վանական տարաբնոյթ ծառայութիւններով գործած է Անթիլիասի մայրավանքէն ներս: Հայր սուրբը իր նոր պաշտօնատեղին ժամանած է Մայիս 20-ին: Երկու օր ետք, ուրբաթօրեայ պատարագի աւարտին (Քուէյթի մէջ Ս. Պատարագ կը մատուցուի Ուրբաթ օրերը, քանի որ Կիրակին աշխատանքային օր է), ընդունած է թեմի հաւատացեալներուն աջահամբոյրն ու շնորհաւորութիւնները: Այնուհետեւ, ազգ. առաջնորդարանի դահլիճին մէջ, ազգային մարմինները ողջունած են իրենց նոր առաջնորդը: Այստեղ, բարիգալստեան խօսքեր արտասանած են Արտակ ալ. քահանայ, ազգ. վարչութեան ատենապետ Նազարէթ Քեօշկերեան, Հայաստանի դեսպանը՝ Արսէն Առաքելեան եւ ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ Քեռի Մարգիսեան: Իսկ Ուրբաթ, Մայիս 29-ին, Հ. Օշին մատուցած է իր անդրանիկ Ս. Պատարագը, որու ընթացքին կատարուած է հանրապետական մաղթանք:

ՔՈՒԷՅԹԻ Ազգ. Ճեմարանի տնօրէնութիւնն ու պաշտօնէութիւնը, Մայիս 25-ին, վարժարանի երդիքին տակ մեկտեղուելով՝ ողջերթ մաղթած են փակուող տարեշրջանին հետ աշխատանքէ դադարիլ փափաքող չորս կրթական մշակներու՝ պր. Կարօ Ասլանեանի (փոխտնօրէն), օրդ. Մարալ Համպոյեանի (հայերէնաւանդ), օր. Մարինա Գալայճեանի (ուսողութիւն) եւ պր. Խաժակ Պոյաճեանի (հայերէնաւանդ): Տնօրէն տոքթ. Ներսէս Մարգիսեան դրուատալից արտայայտութիւններով մեծարած է պաշտօնաթողները եւ յուշանուէրներ յանձնած անոնց: Չորս ուսուցիչներէն Կարօ Ասլանեան (որ հեղինակն է 2019-ին Երեւան տպուած բանաստեղծական հատորի մը՝ «Եթէ...»), դիմատետրի իր էջին վրայ, այս առթիւ, գրած է. «Կեանքիս մեծագոյն մասը անցուցած եմ դպրոցական պատերէն ներս՝ շրջապատուած աշակերտական աշխոյժ թոհուրոհով, դասագիրքերու բուրմունքով ու կրթական մշակներու անխոնջ նուիրումով: Ուսուցիչի կոչում...: Այս բառակապակցութիւնը երբեք սովորական չէ եղած ինծի համար. ան միշտ խորապէս յուզած է հոգիս, ստիպած է երկար խորհրդածել ու վերլուծել մեր առաքելութեան իսկական խորհուրդը: Այսօր, երբ կը

դիտեմ արդի աշխարհի սրընթաց փոփոխութիւնները, կը գիտակցիմ, որ ուսուցիչ ըլլալը այլեւս միայն գիտելիք ջամբել չէ: Նորագոյն մանկավարժութիւնը մեզմէ կը պահանջէ ըլլալ ճկուն, քայլ պահել արհեստագիտական թռիչքներուն հետ եւ դասարանը վերածել ստեղծագործական արուեստանոցի»: Ասլանեան այնուհետեւ նկատել կու տայ որ ուսուցիչը մեծագոյն գոհունակութիւնը կը զգայ այն պահուն՝ երբ «տարիներու դժուար աշխատանքէ ետք քու ցանած սերմերը կը տեսնես պտղաբերած, կամ երբ յաջողութեան հասած նախկին սան մը երախտագիտութեամբ կը սեղմէ ձեռքդ»...:

ՏԵՍԱԿԷՏ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԳՏՆԷ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ

ԱՐԴԱՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՇԻՆԻՉ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂԱՇԵԱՆ



Արդեօք ոեւէ մէկը կասկած ունէ՞ր, որ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները պիտի անցնին հանդարտաբարոյ, կայուն ու կարգապահական մթնոլորտի մը մէջ, նկատի ունենալով որ, առ այդ, կացութիւնը երբեք լաւատեսութիւն չէր ներշնչէր, մանաւանդ՝ ի լուր այն խանգարիչ տարրերուն, որոնք իրենց ժխտական, կարծրամետ եւ անկարգապահ

արարքներով ծանօթ էին եւ անպատկառօրէն կը վերաբերէին իրենց հակառակորդներուն ու մրցակիցներուն հետ:

Չենք կրնար հաւատալ ու հաստատել, որ ամէն ինչ հեզասահ ընթացաւ, առանց թոհուրոհի կամ մաքուր եւ արդար կարգավիճակներու իրականացումով:

Սակայն, պրկուածութիւնն ու լարուածութիւնը, ջղաձգութիւնը ու դիւրագրգռութիւնը, գրեթէ բոլորին մօտ ակնյայտ էին, ի մասնաւորի ընդդիմադիրներու շարքին, որոնք, մէկ կողմէն՝ վրէժխնդրութեամբ ու ռիսակալութեամբ լեցուած էին իշխանութեան դէմ, միւս կողմէն՝ դրդուած ու հրահրուած էին իրենց շարժումները կազմակերպողներու կողմէ:

Այդուհանդերձ, ո՞վ կը կասկածէր, որ յետ ընտրութիւնը, երբ արդիւնքները հետզհետէ յայտնի սկսէին դառնալ, «պոռթկում»ները լսելի պիտի չդառնային, յատկապէս՝ այն անկիւններէն, ուր պարտութիւնը զգալի էր կամ զգետնուողը յայտնի, հետեւաբար, յարձակողականութիւնը պատրաստ էր դիմացիներուն ճգմելու, խօսքով թէ այլապէս:



Բշխանութիւնը, իր զանազան թելերով, կարելիութիւններով ու միջոցներով, հրապարակները, գիւղերն ու քաղաքները ողողած էր, իր քարոզչական մեքենաներով ու լծակներով, առանց վարանելու ու գոռալու, որ յաղթանակը իր «գրպան»ն է, շուտով զայն վայելելու եւ աւետիսը տալու ու բաշխելու համայն հայութեան եւ աշխարհին:

Ընդդիմութիւնը ե՛ւս, իր վարչամեքենաները լարած էր եւ ամբողջ իր համակարգով, երթերով ու խճանկարային մասնակցութիւններով, կ'ուզէր իր գոյութիւնը բացայայտել ու ցուցադրել, փորձելով ինքզինք համոզել, թէ ինքն է մրցանակակիրը եւ իշխանութեան փոփոխութեան մնացած են ժամեր, ներքնապէս, սակայն, ապրելով մտահոգութիւնը, կորսնցնելու ամէն ինչ որ իր երազն է ու հետապնդած ճակատագիրը:

Այնքանով որ կարելի եղաւ հետեւիլ ընտրապայքարին, ելոյթները, հարցազրոյցները, կոչերը, յայտարարութիւնները, ոչինչով բարենշային էին, քաղաքավարական ու ժողովրդավարական առումներով, քանի անոնց մեծ մասը կը փայլէր փոխադարձ վիրաւորանքներով, անուանումներով, կոպտութիւններով, իսկ պոռչտութիւնները, աղմկարարութիւնները, անպատշաճութիւններն էւ անզսպուածութիւնները հասցնելով իրենց անբաղձալիութեանց գագաթնակէտին, խոտոր համեմատուելով քաղաքակրթեալ, հաղորդական ու տպաւորիչ երեսներուն, ի դէմս, այլ պետութիւններու մէջ կատարուած «նախանձելի» երեւոյթներուն հետ:

Ի տարբերութիւն ժողովրդային այս վանողական տեսարաններուն ու բղաւոցներուն, լրագրողներուն զրոյցները անցորդներուն ու քաղաքացիներուն հետ, շատ աւելի լուրջ ու կիրթ էր, անկեղծ եւ ազնիւ, համոզիչ ու պերճախօս արտայայտելով իրենց թեր ու դէմ այն միտքերը, գաղափարները կամ տեսակէտները, որոնք հիմնուած են իրենց տրամաբանութեան ու դատողութեան վրայ:

Յուցանշային էին այն կտրուկ ու դիպուկ արտայայտութիւնները, որոնց բնակիչներուն մեծամասնութիւնը կ'առաջադրէր Նիկոլ Փաշինեանի վարչապետութիւնը, ըստ իրենց, նկատի ունենալով անոր կառուցողական, խաղաղապաշտական ու բարեկարգչական ծրագիրներու իրականացումն ու դրսեւորումը:

Այս բոլոր ի՞նչ կը նշանակեն, կ'ակնարկեն կամ կը հետապնդեն, բացի այն իրողութենէն, որ հայաստանցիները կամ հայաստանաբնակները, հակառակ իրենց կրած ցաւերուն ու զրկանքներուն, վիշտերուն ու տառապանքներուն, կորուստներուն եւ անիրաւութիւններուն, իրենց դժգոհութիւններուն ու դժկամակութիւններուն, կը նախընտրեն մնալ դէպի ապագայն նայող առաջադրութիւններուն ու հայեցողութիւններուն վրայ, առանց մոռնալու իրենց հարազատներուն ու հոգեզաւակներուն նահատակութիւնը, ոչ ալ՝ զիջելու իրենց հողային ու տարածքային սեփականութիւններէն, բայց, միաժամանակ, գերադասելով եւ նախընտրելով իրենց հայրենիքին գերիշխանութեան եւ անկախութեան շինիչ տարբերակները:

Անկասկած, այս ընտրանքները իրենց համար, անփոխարինելի սրբութիւններ են անվիճելի կռուաններ, բայց, հայրենիքին գոյութիւնը, հզօրութիւնը, գերակայութիւնը եւ անժխտելիութիւնը, չեն կրնար վերածուիլ «աժան աճուրդիական» սակագիներու ու



մուրհակներու, որոնց կենսունակութեան եւ յարատեւութեան համար, կարելի չէ ընկրկիլ կամ նահանջել, որեւէ արգելքի կամ պատնէշի դիմաց, ուրկէ ալ ան բուսնի կամ աճի, որովհետեւ ան է միակ ճամբան, որ կրնայ հայրենիքը պահել իր ամբողջականութեան, ձկունութեան եւ էութեան վէմին վրայ, աներեր եւ անցնցող խարիսխներով:



Խորհրդարանական ընտրութիւններու 7 Յունիս 2026ի վերջնական (նոյնիսկ անմիջական) արդիւնքները տակաւին չամբողջացած, արդէն, ահաւոր ու խժալուր գոռոցները, իրենց զանազան ու բազմաբնոյթ արձագանգներով, ժխտրային իրարանցում ստեղծած էին, յատկապէս՝ ընդդիմադիրներու կողմէ, որոնք իշխանութիւնը կ'ամբաստանէին ու կը դատապարտէին անարդարութիւններու ու կեղծապատիրութիւններու հազար ու մէկ «մեղք»երով, առանց որեւէ շօշափելի ու գործնական ապացոյցներու:

Մինչ այդ, իշխանութիւնը կ'ոգեկոչէր ու կ'ողջունէր իր ԼԻԻՐԱԻ յաղթանակը ցոյց տալով, իր առաջնահերթութեան վարկանիշներով եւ իր առաւելութեանց ցցուն տուեալներով:

Իրականութիւն մը, որ որեւէ ձեւով եւ եղանակով, կարելի չէր շրջանցել կամ ուրանալ, այնքան ատեն, որ պատկերը յստակ է իր բովանդակ պարփակութեամբ եւ ամբողջական տնօրինութեամբ:

Այստեղէն եւ այս հանգրուանէն, արդէն «ծնունդ» կ'առնէր մեր մտավախութիւնը (որուն մասին լուսարձակած էի, մեր վերջին գրութիւններէն մէկուն մէջ), թէ՛ Հայաստանը ինքզինք պիտի գտնէ նոր ու վտանգաւոր մարտահրաւեր(ներ)ի մը առջեւ, երբ իշխանութիւնը, ԱՆԵՐԿԲԱՅ յաղթանակի յաջողութիւն կ'ոգեկոչէ, իսկ ընդդիմութիւնը՝ ԱՆՀԵՐՔԵԼԻ ձախողութիւն:

Պիտի չանդրադառնամ, ոչ ալ հետեւիմ կամ մեկնաբանեմ իշխանութեան տարած յառաջընթացին ու գրաւած դիրքաւորումին վրայ, բայց, չեմ կրնար անտարբերութեամբ անցնիլ կամ անտեսել այն վերիվայրումները, որոնց ենթարկուեցաւ եւ անոնց «բոց»երուն մէջ ինքզինք այրեց եւ այրեցուց «ընդդիմութիւն» կոչուած հոսանքը, իր աճապարարութեամբ, անձոռնիութեամբ ու խաղբութեամբ, իր համակիրները եւ հետետորդները առաջնորդելով ու մղելով, դէպի քարքարոտ ճանապարհներ:

Ինչո՞ւ այս հրատապ ընդգծումը ու անխուսափելի հաստատումը, պարզապէս անոր համար, որ՝ դո՛ւ ք, ընդդիմութիւն, երբեք չկրցաք ԻՍԿԱԿԱՆ ընդդիմութեան տարագով եւ ոգիով հանդէս գալ, ոչ երէկ, ոչ ալ՝ այս ընտրութիւններուն, այլ՝ կառչեցաք, փտած ու նեխած, այլասերած եւ անհաշտ հարուածներուն հետ, որոնցմէ (առաջինը եւ ոչ վերջինը) կը կոչուէր Ռոպերթ Քոչարեան, (ան)մարդ մը, (չ)նախագահ մը, (չ)կերպար մը եւ (չ)արարած մը, որ՝ նախ իրաւունք չունէր, ո՛չ Արցախի (որուն՝ դաւաճանեց), ո՛չ ալ Հայաստանի նախագահ հռչակուելու (որուն դաւադրեց) եւ այսօր, առանց խպնելու, ինքզինք կը յաւակնի յայտարարելու Հայաստանի (չ)վարչապետական թեկնածու:



Կա՛յ աւելի ստորնացուցիչ, վարկաբեկիչ ու նուաստացուցիչ որակում, երբ «Ռոպ»ը, իր հագուստով ու մերկութեամբ կը ցցուի բոլորին առջեւ, իբրեւ ՄԱՐԴԱԿԵՐՊ մը, երբ մարդիկ, ՀԱՅԵ՛Ր, մաքրագործած է, իր (չ)նախագահական դիմագիծով, այլանդակային արտաքինով, սոցիտային հայալեզուով, բարբարոսային վարուելակերպով, տակաւին յաւակնելով Հայաստանի եւ Արցախի (՞) պաշտպան կանգնիլ:

Այսպիսի ահաւոր հայասպան մը, ոճրագործ մը, հայադէմ մը, հայաբեկոր մը, ինչպէ՛ս կրնայ Հայաստանին (ալ ո՛ր մնաց Արցախին), օգտակար դառնալ, երբ ժամանակները ցոյց տուին, ան, եւ իր նմանները, ինչպիսի՛ ապերախստներ, ճիւղներ եւ անմարդկայիններ եղան:



Յետ ընտրական շրջանը սկսած ըլլալով, թեկուզ քուէներու վերհաշուարկներով, հոն ուր պատճառներ կան եւ անհրաժեշտ է արդար գտումներ, առիթը օգտագործելով, ներելի՞ է երկիրը ապակայունացնել, յատկապէս Քոչարեանի նման արկածախնդիրով մը, որ կը սպառնայ իշխանութենէն վրէժ (՞) լուծել, իշխանափոխութիւն մուրալ, իր կաշառակերային միջոցներով, ինչպէս ընտրական ստուգատեսի պարագային, իր կառքին լծելով պատեհապաշտ հետեւորդներ, նոյն իր ապօրինագանցութիւնները շարունակելու յամառութեամբ:

Մարդիկ, որքա՛ն հաւկոյր եւ անուղղայ պետք է ըլլան, դիմելու նման աճպարարութիւններու, ամբոխավարութեան եւ ոտնձգութեան, երբ աշխարհի մեծամեծ պետութիւնները եւ ուրիշներ, միջազգային չափանիշներով ողջունած ու շնորհաւորած են իշխանութեան յաջողութիւնները:

Վերջին հաշուով, մինչեւ ե՞րբ պիտի շարունակուին թունաւորումները, ժահրոտութիւնները ժողովուրդին ու հայրենիքին նկատմամբ, արհնոտ նկարագիրներու ձեռամբ, որոնց նկատմամբ այլեւս պետք է կիրարկուի խստագոյն եւ արագ պատժամիջոցներ, առաջին հերթին անոր դէմ, որուն կեանքը պատուած է սեւագոյն էջերով:

Խորհրդարանը կամ Ազգային Ժողովը, միակ տեղն է, ուր խնդրոյ առարկայ հարցերը կը քննարկուին ու կը լուծուին (կամ ոչ), հեռու փողոցային խոպոտ եւ անհաճոյ վարժանքներէն, որոնք ցարդ ոչինչ բերին հայրենիքին, բացի խայտաբղէտ պատուհասներէն:

Իշխանութիւնը, գլխաւորութեամբ վարչապետ Նիկոլ Փաշինեանի, պետք է այլեւս խուսափի կրքոտ ու ջղոտ յայտարարութիւններէ ու սպառնալիքներէ, այնքան ատեն որ՝ ատոնց ՓԱՓԿԱՆԿԱՍ տարբերակները աւելի հանրօգուտ ու պիտանի են,, քանի ոչ երկիրը, ոչ ալ ժողովուրդը կրնան այլեւս հանդուրժել որեւէ անիմաստ ու բուռն մագլցումներու կրկնութիւնները:

Ասոնք են հնարքներն ու մաղթանքները, որոնք կայունութիւն, բարեբերութիւն ու խաղաղամտութիւն կրնան պարգեւել բոլորին, եթէ կողմերը, ուղղակի թէ անուղակի մասնակիցները, լուրջ են, անկեղծ եւ իրապաշտ:

(Պէլրութ)

«ՈՐՔԱՆ ԿՈՒ ՏԱՆ». ԸՆՏՐԱԿԱՇՏԱՌՔԸ ՈՐՊԷՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԱՅԼԱՍԵՐՈՒՄ



✉ **ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ**

30/4/2026



Գրեթէ ամէն օր կաշառքի մասին նոր ձայնագրութիւն մը կը լսենք: Կարծես ռատիոյի յատուկ յայտագիր մը ըլլայ. եթէ քանի մը օր այդ նիւթին շուրջ «նորութիւն» չըլլայ, կը զարմանանք: Կը հայհոյենք, բայց նաեւ կը քննարկենք: Իսկ այսօր, երբ

Հայաստանի մէջ ընտրութիւններու (եւ կաշառքի նիւթին) մասին կը խօսուի, հազիւ թէ մէկը գաղափարներով սկսի: Խօսակցութիւնը կը սկսի տարբեր հարցումով մը. «Որքա՞ն կու տան»: Ասիկա պարզ կենցաղային արտայայտութիւն մը չէ. ասիկա քաղաքական իրականութեան մէկ ախտաճանաչումն է: Ասիկա հանրային մտածողութեան եւ բարոյականութեան տագնապ է: Դժբախտաբար, այդ տագնապը, որքան ալ զգուելի ըլլայ, ունի իր տրամաբանական պատճառները: Կաշառքը պատահական չի տրուիր, ոչ ալ բոլորին կը տրուի: Միջավայրը պէտք է պատրաստ ըլլայ ատոր համար, իսկ Հայաստանի մէջ հիմա «դրախտային պայմաններ» ստեղծուած են:

Այս քաղաքական աճուրդին մէջ, երբ քուէն դրամով կը չափուի, այլեւս ժողովրդավարութեան մէջ չենք ապրիր, նոյնիսկ եթէ ձեւական բոլոր հաստատութիւնները պահպանուած են: Մենք կ'ապրինք իրականութեան մը մէջ, ուր քաղաքացին աստիճանաբար կը վերածուի գործարքի մասնակիցի՝ դառնալով ապրանք, իսկ ընտրութիւնը՝ շուկայ: Բայց այս երեւոյթը դատապարտել՝ առանց անոր խորքային պատճառները հասկնալու, կը նշանակէ պայքարիլ ստուերին դէմ, ոչ թէ մարմնին, իսկիլ հետեւանքին դէմ, ոչ թէ պատճառին:

Կաշառքը որպէս հասարակական յարաբերութեան չափանիշ

Ընտրակաշառքը յաճախ կը ներկայացուի որպէս «անբարոյ արարք» կամ «քրեական յանցանք»: Ասիկա ճիշդ է, բայց ամբողջ ճշմարտութիւնը չէ: Ֆրանքֆուրթեան դպրոցի մտածողները վաղուց զգուշացուցած էին այն երեւոյթին մասին, գոր անոնք կը կոչէին գործիքային բանականութիւն: Այս տրամաբանութեան մէջ մարդը կը դադրի հարց տալէ՝ «ի՞նչ է ճիշդը» եւ կը սկսի միայն հարցնել՝ «ի՞նչն է օգտակարը», եւ օգտակարը միայն իրեն

համար եւ միայն այդ պահուն: Ֆրանսֆուրթեան քննադատութեան մէջ այս մտածողութիւնը «մարդիկը կը դիտէ որպէս միջոցներ»: Երբ այս տրամաբանութիւնը կը ներթափանցէ քաղաքականութիւն, տեղի կ'ունենայ ամենէն վտանգաւոր փոխակերպումը. քաղաքացին այլեւս չի դիտուիր որպէս արժէք, այլ որպէս ապրանք եւ միջոց:

Հայաստանի ընտրակաշառքը այս նոյն տրամաբանութեան տեղայնացուած դրսեւորումն է: Քաղաքացին՝ իր ձայնով, կուսակցութիւնը՝ իր դրամով՝ երկուքն ալ գործարքի մէջ: Եւ սահկա այլեւս քաղաքականութիւն չէ: Ասիկա ընկերային յարաբերութիւններու անկումային եւ այլասերած ձեւ մըն է:

Երբ հասարակութիւնը կը դառնայ «ապրանքներու աշխարհ»

Ֆրանսֆուրթեան քննադատութիւնը կը խօսի նաեւ այլ կարեւոր երեւոյթի մը մասին՝ առարկայացումի: Այսինքն՝ երբ մարդկային յարաբերութիւնները կը սկսին երեւիլ որպէս առարկաներու միջեւ յարաբերութիւններ:



Այս պարագային քուէն կը վերածուի ապրանքի, քաղաքացին՝ այդ ապրանքին տիրոջ, իսկ ընտրութիւնը՝ շուկայի մը, ուր ամէն բան իր գինը ունի: Երբ այս մէկը կը հաստատուի որպէս բնական երեւոյթ, հասարակութիւնը կը սկսի ապրիլ իրականութեան մը մէջ, ուր ամէն բան գին ունի, բայց այլեւս ոչինչ արժէք ունի: Ասիկա ճիշդ այն է, ինչ որ տեղի կ'ունենայ այսօր

Հայաստանի մէջ: Մարդիկ չեն հաւատար, որ իրենց քուէն կրնայ փոխել իրականութիւնը, բայց կը տեսնեն, որ սահկա կրնայ վաճառուիլ: Եւ կը վաճառեն զայն: Թէ որքանով՝ նշանակութիւն չունի: Ասիկա առեւտուր մըն է: Ահա հոս կը ծագի ամենէն վտանգաւոր հակասութիւնը. ան, որ չի հաւատար ընտրութիւններուն, կը մասնակցի անոնց՝ որպէս ապրանք:

Հապերմասի «հանրային ոլորտի» փլուզումը

Եուրկէն Հապերմաս ժողովրդավարութիւնը կը հասկնար ոչ միայն իբրեւ ընտրութիւններ, այլեւ իբրեւ հանրային բանավեճի տարածք մը, ուր քաղաքացիները հաւասար են եւ կը քննարկեն հանրային հարցեր: Մակայն ան նաեւ կը զգուշացնէր, որ արդի հասարակութիւններու մէջ այս տարածքը կրնայ քայքայուիլ, երբ քաղաքացիները վերածուին «կրաւորական սպառողներու»: Այսինքն, երբ անոնք պարզապէս նստած կը սպասեն՝ առանց որեւէ նախաձեռնութեան, պատրաստ՝ միայն ընդունելու կամ մերժելու իրենց ներկայացուած առաջարկները, բայց երբեք՝ քննարկելու զանոնք:



Ճիշդ ասիկա է իրավիճակը Հայաստանի մէջ, բայց շատ անելի կոպիտ ու անբարոյ ձեւով: Հայաստանի մէջ քաղաքացին ոչ միայն պատրաստի քաղաքականութիւն «կը սպառէ», այլև անձամբ կը մասնակցի ստոր առուտութիւն: Ան ինքնին կը վերածուի ապրանքի: Հանրային բանավեճը կը փոխարինուի լուռ համաձայնութեամբ, համոզումը՝ վճարումով, իսկ բարը՝ դրամով: Ասիկա հասարակութեան քայքայումն է:

Աղքատութի՞ւն, թէ արժանապատուութեան տագնապ

Եւ ամէն անգամ, ընտրակաշառքը կը բացատրուի ընկերային ծանր վիճակով: Ասիկա մասամբ ճիշդ է, բայց վտանգաւոր է, եթէ միայն կիսատ ըսենք: Աղքատութիւնը կրնայ բացատրել որոշ վարքագիծ մը կամ քանակ մը, բայց անիկա չի կրնար արդարացնել այդ երեւոյթին զանգուածայնութիւնը, տարածուածութիւնը եւ զայն իբրեւ բնականոն ընկալելու ինտելեկտութիւնը: Ասիկա արժանապատուութեան աստիճանական մաշումն է: Երբ մարդ երկար ժամանակ կ'ապրի համակարգի մը մէջ, ուր հարցերը կը լուծուին ծանօթ-բարեկամով, ուր արդարութիւն չկայ, իսկ պետութիւնը «մերը չէ, այլ պաշտօնէայինն է», ան արդէն թքած ունի ամէն ինչի վրայ: Ան այլևս քաղաքացի չէ, այլ գոյատեւող անհատ մը: Անոր համար քուէարկութիւնը կը դադրի արժէքային արարք ըլլալէ. անիկա կը դառնայ «միքրօ-գոյատեւման» ռազմավարութիւն մը: Ընդամենը:

Մինիզմի հաստատութենականացումը

Մակայն ամենէն վտանգաւորը այն չէ, որ մարդիկ կաշառք կ'առնեն, այլ այն, որ զայն կ'արդարացնեն եւ կը հաւատան իրենց իսկ արդարացումներուն: Ասիկա ճիշդ այն է, ինչ որ Ֆրանսֆորթեան դպրոցը կը նկարագրէր իբրեւ գիտակցութեան ձեւափոխում, ուր անհատը կը յարմարի համակարգին եւ կը սկսի զայն վերարտադրել: Երբ հասարակութեան մէջ կը տարածուի այն համոզումը, թէ «բոլորն ալ նոյնն են», «ոչինչ պիտի փոխուի», «գոնէ այսքանը առնենք», «եթէ ես չառնեմ՝ ուրիշը պիտի առնէ», այդ պահուն կաշառակերութիւնը կը դադրի շեղում ըլլալէ եւ կը դառնայ բնական երեւոյթ (նորմ): Եւ հոս է, որ տեղի կ'ունենայ ամենէն սարսափելին. չարիքը այլևս չ'ընկալուի իբրեւ չարիք:

Անխուսափելի ճշմարտութիւն

Շատ դիրին է ամբողջ մեղքը բարդել իշխանութիւններուն կամ կաշառք տուողներուն վրայ: Եւ անշուշտ, անոնք հսկայական պատասխանատուութիւն ունին: Մակայն կայ կոպիտ ու անհանգստացնող ճշմարտութիւն մը. ոչ մէկ կաշառք կրնայ տալ, եթէ զայն ընդունող չըլլայ: Ասիկա չի նշանակէր թէթեւամտօրէն մեղադրել հասարակութիւնը եւ անտեսել անոր խնդիրները:

Ասիկա կը նշանակէ ընդունիլ, որ համակարգը գոյութիւն ունի երկկողմանի մասնակցութեամբ. հասկնալ, որ մետալը երկու երես ունի, իսկ պարանը՝ երկու ծայր:

Կաշառքը կը տրուի վերէն, բայց կ'ընդունուի վարէն:

Եւ քանի դեռ այդ երկրորդ օղակը չէ կտրուած, առաջինը միշտ պիտի վերարտադրուի:



Հայաստանի ներկայ վիճակը՝ իբրեւ խորքային տագնապ

Այսօր Հայաստանի մէջ ընտրակաշառքը պարզապէս արհեստագիտութիւն մը չէ: Անիկա դարձած է համակարգի լեզու: Ասիկա կը վկայէ, որ քաղաքականութիւնը կորսնցուցած է իր գաղափարական հիմքը, քաղաքացին կորսնցուցած է իր ենթակայականութիւնը, իսկ հանրութիւնը՝ իր ներքին վստահութիւնը: Եւ այս բոլորը միասին կը ստեղծեն իրավիճակ մը, որ կարելի է բնութագրել ոչ թէ պարզապէս իբրեւ փտածութիւն, այլ իբրեւ հանրային կեանքի այլասերում եւ անկում:

Կը կարծենք, թէ կարելի է կաշառակերութիւնը վերացնել օրէնքներով, վերահսկողութեամբ եւ պատիժներով: Սակայն ատիկա միայն մակերեսն է: Իրական յաղթանակը կը սկսի երբ անհատը ներքնապէս կը մերժէ զայն արդարացնել: Որովհետեւ ընտրակաշառքը կը սկսի ոչ թէ դրամի փոխանցումով, այլ լռելեայն այն միտքով, թէ՛ «ասիկա բնական է»: Եւ անիկա կ'աւարտի միայն այն պահուն, երբ այդ միտքը դադրի գոյութիւն ունենալէ: Մինչ այդ, իւրաքանչիւր ընտրութիւն կը մնայ ոչ թէ ապագայի ընտրութիւն, այլ համաձայնութիւն՝ գինի շուրջ: Եթէ հասարակութիւնը իր մտքին մէջ համակերպած է այս ախտին հետ, ապա զարմանալու կարիք չկայ: Կաշառակերութիւնը արդէն կը դառնայ կոպիտ, բայց տարօրինակօրէն «արդար» թուացող համակարգ մը: Երբ կայ առաջարկ, կայ պահանջարկ: Ասիկա նաեւ մարմնավաճառութեան տեսակ մըն է, բայց այն տարբերութեամբ, որ կաշառքին յարմարած մարդը կը հրաժարի իր ներկայէն եւ ապագայէն. ան կը դառնայ թոյլ, յարմարող, լպրծուն եւ վտանգաւոր: Այս կը նշանակէ, որ ան սկզբունքօրէն պատրաստ է վատ բան մը ընելու: Հարցը կը մնայ գինի եւ արդարացման մէջ: Ընդամենը: Իսկ նման հասարակութիւն մը չի կրնար առողջ միտք վերարտադրել:

Կաշառքը քաղցկեղ է, դատավճիռ է...ինքնակամ:

ԵՐԲ ՄԱՐԴԻԿ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻՆ ՃԱՏՐԱԿԻ ՔԱՐԵՐՈՒ



ՎԱՐՈՒԺ ԹԷՆՊԵԼԵԱՆ

25/5/2026



Պատմութիւնը յաճախ կը թուի անվերջ կրկնուող խաղ մը: Դէմքերը կը փոխուին, կայսրութիւնները կը կործանին, նոր սահմաններ կը գծուին, բայց ուժի տրամաբանութիւնը ընդհանրապէս կը մնայ նոյնը: Մարդկութիւնը կը շարունակէ շարժիլ մեծ ուժերու, պատերազմներու, գաղափարախօսութիւններու եւ տնտեսական շահերու միջեւ՝ կարծես հսկայական ճատրակի տախտակի մը վրայ:

Այս միտքերը սկսան տողանցել, երբ առաջին անգամ ըլլալով ծանօթացայ եգիպտահայ արուեստագէտ Աննա Պողիկեանի եւ անոր նշանաւոր գործին՝ «The Chess Game»-ին (Տարբերակ21, 23 Մայիս 2026), ուր պատմական դէմքեր, ղեկավարներ, մտածողներ, զինուորականներ եւ անանուն մարդիկ, կանգնած ճատրակի նոյն տախտակին վրայ, կ'որոշեն պատմութեան հոլովոյթը: Անոնք բոլորը տարբեր ժամանակաշրջաններէ եկած են, բայց միեւնոյն պատմութեան մէջ փակուած կը թուին: Ոմանք շարժողներն են, ուրիշները՝ շարժուողները: Այս գործին ուժը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ անիկա պատերազմն ու քաղաքականութիւնը չի ներկայացներ որպէս հեռաւոր պատմութիւն: Անիկա ցոյց կու տայ, թէ ինչպէ՛ս ուժն ու իշխանութիւնը դարեր շարունակ մարդոց ճակատագիրները վերածած են ռազմավարական հաշիւներու:



Աննա Պողիկեան. «The Chess Game»

Այսօր, երբ աշխարհը կ'ապրի նոր պատերազմներու, տնտեսական մրցակցութեան եւ արուեստական իմացականութեան (ԱԻ) սրնթաց զարգացման դարաշրջան մը, ճատրակի տախտակին պատկերը կը թուի աւելի իրական, քան երբեք:

Մեծ պետութիւնները կը պայքարին ազդեցութեան համար, փոքր երկիրները յաճախ կը վերածուին բանակցութիւններու կամ բախումներու թատերաբեմի, իսկ սովորական մարդիկ կը շարունակեն վճարել այս մրցակցութիւններուն գինը: Ուքրանիոյ պատերազմը, Կազախի աղէտը, Միջին Արեւելքի լարուածութիւնները, տնտեսական պատժամիջոցները եւ աշխարհաքաղաքական դաշինքներու վերադասաւորումը կը յիշեցնեն, որ մարդկութիւնը տակաւին ամբողջութեամբ չէ հրաժարած ուժի ու իշխանութեան հին տրամաբանութենէն:

Բայց մեր ժամանակներու խաղատախտակը աւելի բարդ դարձած է:

Նախորդ դարերուն, ուժն ու իշխանութիւնը մեծ մասամբ զինուորական կամ տնտեսական բնոյթ ունէին: Այսօր, տեղեկատուութիւնն ու թուային համակարգերը նոյնքան կարեւոր դարձած են: Արուեստական իմացականութիւնը, հսկայ տուեալներու վերահսկողութիւնը եւ ակորիթները աստիճանաբար կը վերածուին ուժի եւ իշխանութեան նոր ձեւերու:

Մարդիկ այսօր ոչ միայն զենքերով, այլ նաեւ տեղեկատուութեամբ կը կռաւարուին:

Ընկերային ցանցերը կրնան հանրային կարծիք ձեւաւորել, վախ տարածել, բեւեռացում յառաջացնել կամ ազդել ընտրութիւններու ընթացքին: Ակորիթները կը հետեւին մարդոց վարքագիծին, նախասիրութիւններուն եւ վախերուն: Ժամանակակից մարդը յաճախ, առանց անդրադառնալու, կը դառնայ թուային ռազմավարութիւններու մասնակից մը:



Այս իմաստով, ճատրակի խաղը այլևս միայն պետութիւններու միջեւ չէ: Ան նաեւ պայքար մըն է մարդկային ուշադրութեան, յիշողութեան եւ գիտակցութեան համար:

Արուեստական իմացականութեան զարգացումը ա՛լ աւելի խորացուցած է այս հարցերը: ԱԻ-ն այժմ կրնայ վերլուծել պատերազմներ, նախատեսել վարքագիծեր, պատրաստել քարոզչական բովանդակութիւն եւ նոյնիսկ ազդել քաղաքական որոշումներու վրայ: Ոմանք այս բոլորը կը նկատեն մարդկային յառաջդիմութեան նոր փուլ մը, իսկ ուրիշներ՝ վերահսկողութեան աւելի նուրբ ու քողարկուած համակարգ մը: Հոս հարցը միայն արհեստագիտական չէ, այլ՝ բարոյական: Ո՞վ պիտի վերահսկէ այս համակարգերը: Ո՞ւր կ'աւարտի որոշումներ կայացնելու մարդուն դերը, եւ ո՞ւր կը սկսի մեքենային միջամտութիւնը: Երբ ալկոհիթմները կը սկսին որոշել, թէ մարդիկ ի՞նչ պիտի կարդան, ինչէ՛ն պիտի վախնան կամ ինչպէ՛ս պիտի մտածեն, ազատութիւնը կը դառնայ աւելի խրթին ու բարդ հասկացողութիւն մը:

Այս բոլորին մէջ ամենէն մտահոգիչը թերեւս այն է, որ ժամանակակից մարդը կամաց-կամաց կը վարժուի այս խաղին: Պատերազմները կը վերածուին առօրեայ լուրերու: Մահերը՝ վիճակագրութեան: Տեղահանութիւնները՝ քաղաքական վերլուծութիւններու: Մարդկային ողբերգութիւնները արագօրէն կը սպառին տեղեկատուական հոսքին մէջ: Մարդ արարածը կը շարունակէ դիտել աշխարհը այնպէս, կարծես անիկա հեռուէն դիտուող խաղ մը ըլլար:

Բայց իրականութեան մէջ, ճատրակի տախտակին վրայ գտնուող քարերը իրական մարդիկ են: Անոնք ընտանիքներ ունին, յիշողութիւններ, կորուստի փորձառութիւններ եւ վախեր՝ ապագային հանդէպ: Երբ մեծ պետութիւնները կը մրցին, ամենէն ծանր գինը շատ անգամ կը վճարեն անոնք, որոնք որոշումներ կայացնողները չեն եւ ոչ մէկ կապ ունին այդ խաղին հետ:

Աննա Պողիկեանի գործին մեծագոյն ուժը հաւանօրէն կը կայանայ հոն, որ ան դիտողին կը պարտադրէ հասկնալ, թէ պատմութիւնը վերացական հասկացողութիւն մը չէ: Անիկա մարդկային ճակատագիրներու ամբողջութիւն մըն է: Եւ թերեւս մեր ժամանակներու ամենէն վտանգաւոր պատրանքը այն է, երբ մարդիկ կը սկսին կարծել, թէ իրենք խաղատախտակէն դուրս են:

Որովհետեւ պատմութիւնը բազմիցս ցոյց տուած է, որ ճատրակի խաղերուն մէջ, երբեմն նոյնիսկ հանդիսատեսները ի վերջոյ կը վերածուին ճատրակի քարերու:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՑՈՒՄԸ. ԾԻՍԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԵՆԷՆ ԴԵՊԻ ԱՊՐՈՂ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



✉ **ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ**

18/5/2026



Հայ ժողովուրդի կեանքին մէջ, դարեր շարունակ եկեղեցին ունեցած է բացառիկ դեր մը: Ան ոչ միայն աղօթավայր մը եղած է, այլև՝ դպրոց, մշակութային կեդրոն, ազգային յիշողութեան պահապան եւ հաւաքական ինքնութեան կարելոր սիններէն մէկը: Մանաւանդ պետականութեան բացակայութեան շրջանին, եկեղեցին շատ անգամ ստանձնած է այնպիսի դերեր, որոնք սովորաբար պետութեան կամ հանրային հաստատութիւններուն կը պատկանին: Այս պատճառով, եկեղեցւոյ նկատմամբ հայ ժողովուրդին կապը միայն կրօնական

չէ, այլև պատմական, մշակութային եւ զգացական: Մակայն ժամանակակից աշխարհին մէջ աւելի ու աւելի կը բարձրանայ կարելոր հարց մը. ինչպէ՞ս կարելի է եկեղեցին եւ հաւատքը դարձնել աւելի ժողովրդային, մասնակցային եւ ապրող իրականութիւն մը՝ առանց կորսնցնելու անոնց հոգեւոր խորքը:

Առաջին հերթին պէտք է յստակացնել, թէ եկեղեցին ժողովրդականացնել չ'ենթադրեր վերացնել անոր հոգեւոր հեղինակութիւնը կամ զայն պարզ ընկերային ակումբի վերածել, այլ՝ ինչպէ՞ս եկեղեցին կրնայ աւելի ընկալունակ դառնալ ժողովուրդի ձայնին, մտահոգութիւններուն եւ մասնակցութեան նկատմամբ: Որովհետեւ շատերու մօտ այսօր ստեղծուած է այն տպաւորութիւնը, թէ եկեղեցին հեռացած է առօրեայ մարդէն եւ սկսած է ապրիլ ինքն իր փակ շրջանակին մէջ, իսկ եկեղեցւոյ գործերուն մէջ կարծես տեղ ունին միայն «Աբիսողոմ աղաները եւ կարգ մը մենաշնորհեալներ: Երբ հաւատացեալը այլևս ինքզինք դերակատար չի զգար, հաւատքը աստիճանաբար կը վերածուի սովորութեան, իսկ եկեղեցին՝ հաստատութեան մը:

Ժողովրդականացման առաջին քայլերէն մէկը լեզուի հարցն է: Շատերու համար եկեղեցական լեզուն այսօր դժուար հասկնալի է, մանաւանդ երիտասարդ սերունդներուն: Անշուշտ, եկեղեցական լեզուն մեր մշակութային ժառանգութեան կարելոր մասն է եւ պէտք չէ պարզապէս վերացուի: Մակայն կարելի է աւելի մատչելի ձեւերով բացատրել պատարագը, քարոզները եւ աստուածաբանական գաղափարները, որ ժողովուրդը ոչ միայն լսէ, այլև հասկնայ եւ ներքուստ ապրի հաւատքը: Երբ հաւատքը կը դադրի միայն ձեւ ըլլալէ եւ կը դառնայ գիտակցուած փորձառութիւն, ան աւելի կենդանի եւ ազդու կը դառնայ: Անշուշտ, ակնարկութիւնը կ'երթայ գրաբարին, բայց ոչ միայն գրաբարին, այլև խօսողին՝ հաւատքը փոխանցելու եւ սիրցնելու ոճին: Խօսքը նաեւ կը վերաբերի եկեղեցականներու գործածած լեզուին՝ անոր բովանդակութեան, մատչելիութեան եւ հոգիները շարժելու



ներուծին: Քարոզը պետք չէ միայն անդրադառնայ սուրբգրային պատմութիւններուն, այլ Եւ այսօրուան մարդը յուզող հարցերուն՝ ընտանեկան տագնապներէն մինչեւ ընկերային անարդարութիւններ:

Եկեղեցւոյ Ժողովրդականացումը նաեւ կը պահանջէ աւելի լայն մասնակցութիւն: Բազմաթիւ համայնքներու մէջ որոշումները կը կայացուին փոքր շրջանակներու կողմէ, մինչ հասարակ հաւատացեալները հիմնականին մէջ կը մնան դիտորդներ: Սակայն եկեղեցին միայն հոգեւորականութեան սեփականութիւնը չէ, ոչ ալ քանի մը աշխարհական մենաշնորհեալներու: Ան համայնք է: Երբ ժողովուրդը մասնակցի մշակութային, կրթական, բարեսիրական եւ կազմակերպական կեանքին, եկեղեցին կը դառնայ ոչ թէ վերէն դեկավարուող կառոյց, այլ միասին ապրուած իրականութիւն: Ո՛չ մեր երիտասարդները, ո՛չ ալ մեր ժողովուրդին մեծամասնութիւնը ծանօթութիւն ունի հայ եկեղեցւոյ մէջ գոյութիւն ունեցող ժողովներուն մասին, ո՛չ թափանցիկութեան, ո՛չ ալ որոշումներ կայացնելու ձեւերուն մասին: Իսկ մեծագոյն գաղտնիքը կը մնայ ժողովներու ներկայացուցչական բնոյթը: Ո՞վ կ'ընտրէ, ո՞վ կը նշանակէ եւ որոնք կրնան նշանակուիլ: Եթէ այս բոլորը ժողովուրդին անունով եւ ժողովուրդին համար ըլլալու յաւակնութիւնը չունենային, մենք մեզի իրաւունք պիտի չտայինք խօսելու եկեղեցւոյ ներքին հարցերուն մասին, բայց նշուածները ներքին հարցեր չեն. անոնք ժողովուրդի աշխարհին կապուած են, ժողովուրդին անունով եւ ժողովուրդին համար կ'ըլլան, մինչ ժողովուրդին մէկ կարեւոր հատուածը աստիճանաբար կը հեռանայ հոգեւոր եկեղեցիէն՝ առաւելագոյն պարագային կապը չկտրելով ծիսական եւ տօնական եկեղեցիէն:

Այս մէկը յատկապէս կարեւոր է երիտասարդներուն պարագային: Բազմաթիւ երիտասարդներ չեն մերժեր հոգեւորութիւնը, բայց կը հեռանան այն միջավայրերէն, ուր ազատ չեն զգար մտածելու, հարցումներ տալու կամ իրենց տեղը գտնելու հնարաւորութիւնը: Ժողովրդային եկեղեցին պետք է կարենայ լսել երիտասարդները, անոնց մտահոգութիւնները եւ ժամանակակից աշխարհին հետ անոնց ունեցած հարցերը: Ան պետք է ընդունի, թէ հաւատքը չի խորանար միայն հրահանգներով, հռետորական ճառերով, այլ նաեւ երկխօսութեամբ, վստահութեամբ եւ մասնակցութեամբ:

Հաւատքը ժողովրդականացնել նաեւ կը նշանակէ զայն վերադարձնել մարդու առօրեայ կեանքին: Յաճախ կրօնքը կը ներկայացուի իբրեւ միայն եկեղեցի երթալու կամ որոշ ծեսեր կատարելու հարց: Սակայն իրական հաւատքը նաեւ բարոյական եւ հասարակական պատասխանատուութիւն է: Երբ եկեղեցին խօսի արդարութեան, աղքատութեան, արտագաղթի, երիտասարդութեան տագնապներուն կամ հասարակական անարդարութիւններու մասին, ան աւելի մօտ կը դառնայ մարդոց իրական կեանքին: Հաւատքը այդ ժամանակ կը դադրի վերացական գաղափար ըլլալէ եւ կը դառնայ ապրուած փորձառութիւն:

Ժողովրդականացումը նաեւ կը պահանջէ որոշ չափով թափանցիկութիւն եւ ինքնաքննադատութիւն: Ոչ մէկ հաստատութիւն կրնայ վստահութիւն ներշնչել, եթէ ամբողջովին փակ մնայ քննադատութեան առջեւ: Եկեղեցին պատմութեան ընթացքին ունեցած է մեծ արժանիքներ, բայց նաեւ սխալներ եւ մարդկային թուլութիւններ ու թերութիւններ: Երբ հաստատութիւնը կը համարձակի ընդունիլ իր սխալները եւ աւելի բաց կերպով հաղորդակցիլ ժողովուրդին հետ, վստահութիւնը ոչ թէ կը սկարանայ, այլ կը



խորանայ: Որովհետեւ անկեղծութիւնը շատ անգամ աւելի հոգեւոր է, քան անսխալականութեան պատրանքը:

Մփիւռքի պարագային այս հարցը աւելի զգայուն է: Շատ մը հայկական համայնքներու մէջ եկեղեցին տակաւին կը մնայ ինքնութեան պահպանման գլխաւոր կառոյցներէն մէկը: Սակայն եթէ ան չափազանց փակ կամ միայն անցեալով ապրող կառոյց դառնայ, երիտասարդ սերունդները կրնան աստիճանաբար օտարանալ կազմակերպուած կրօնական կեանքէն: Այս պատճառով ժողովրդակացնել եկեղեցին նաեւ կը նշանակէ զայն վերածել մշակութային եւ հոգեւոր բաց միջավայրի մը, ուր տարբեր սերունդներ եւ մտածողութիւններ կրնան իրարու հանդիպիլ՝ առանց վախի կամ պարտադրանքի, համոզումով:

Անշուշտ, ժողովրդականացումը չի նշանակէր հաւատքի մակերեսայնացում: Ընդհակառակը, իսկական ժողովրդային հաւատքը կրնայ աւելի խոր ըլլալ, որովհետեւ ան հիմնուած կ'ըլլայ գիտակցուած մասնակցութեան վրայ, ոչ թէ միայն ժառանգուած սովորութեան: Մարդիկ աւելի խոր կապ կը հաստատեն այն հաւատքին հետ, որուն մէջ իրենք իրենց ձայնը, տառապանքը եւ յոյսերը կը տեսնեն:

Թերեւս այսօր եկեղեցւոյ առջեւ ծառացած մեծագոյն մարտահրաւերը հետեւեալն է. ինչպէ՞ս պահպանել հոգեւոր խորութիւնը՝ առանց ժողովուրդէն հեռանալու, եւ ինչպէ՞ս բացուիլ ժամանակակից աշխարհին՝ առանց ինքնութիւնը կորսնցնելու: Այս հաւասարակշռութիւնը դիւրին չէ: Սակայն եկեղեցին պատմութեան ընթացքին միշտ գոյատեւած է այն ժամանակ, երբ կրցած է լսել ժողովուրդին ձայնը եւ միաժամանակ պահպանել իր հոգեւոր էութիւնը: Հետեւաբար ժողովրդակացնել եկեղեցին ու հաւատքը վերջին հաշուով չի նշանակէր սրբութիւնը նուազեցնել, այլ հաւատքը վերադարձնել մարդո՛ւն եւ համայնքի՛ն:

ԵԿԵՂԵՑԻՆ ՍՐԲԱՎԱՅՐ Է, ՈՉ՝ ՑՈՒՑԱՍՐԱՀ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ

Եկեղեցին Աստուծոյ ներկայութիւնն է մեր մէջ: Արարիչին եւ մահկանացուներուս հանդիպման վայրն է:

Երբ մոմ մը կը վառենք, իրականութեան մէջ մեր ներքին մթութիւնն է, որ կը փորձենք լուսաւորել: Երբ աղօթք մը կը բարձրացնենք, մեր հոգին է որ կը ձգտինք բարձրանել:

Եկեղեցին կը պահանջէ խոնարհութիւն ո՛չ շռայլութիւն: Աղօթքը՝ խաղաղութիւն: Պատշաճ հագուածքը կը շեշտէ այդ խաղաղութիւնը:

Եկեղեցին այն վայրն է, ուր մարդ արարածը խոնարհ հոգիով կը ներկայանայ Աստուծոյ՝ մերժելով ամէն ցուցադրութիւն, եւ վայելելով հոգիի խաղաղութիւնն ու սրբութիւնը: Այսօր, յատկապէս որոշ կանանց պարագային կը տեսնենք հակառակ երեւոյթը:



Հագուածքը լեզու մըն է, որ կ'արտայայտէ անհատին ներաշխարհը: Անպատշաճ կամ գաղթակղիչ հագուածքի ոճը, անձոնի նստելաճը կը խաթարէ սրբութեան մթնոլորտը: Իսկ անվերջ բանող բջիջային հեռաձայնները... մարդ զբօսարանի մէջ գտնուելու տպաւորութիւն կ'ունենայ յաճախ...:

Մեր ժամանակներուն շփոթը այնքան խորացած է, որ մարդ այլեւս դժուար կը գանազանէ սուրբը՝ աշխարհիկէն, խորանը՝ բեմէն, աղօթքը՝ ցուցադրութենէն: Եկեղեցին, որ պէտք է ըլլայ լռութեան, խոկումի եւ խոնարհումի վայր, շատերու

համար կը վերածուի տպաւորութիւն ստեղծելու եւ յարդարանքով արժեւորելու թատերավայր:

Յատկապէս անտանելի կը դառնայ, խորապէս կը վիրաւորէ, երբ ոմանք—եւ աւելի յաճախ՝ իգական սեռէն—եկեղեցի կը մտնեն այնպիսի հագուածքով, որ ոչ միայն չի յարգեր վայրին սրբութիւնը, այլ կը հակասէ անոր էութեան: Կարճ, բաց, մարմինը շեշտող հագուստներ, երանգային ու ձեւային անճաշակութիւն, յաճախ ալ՝ ակնյայտ ցուցադրականութիւն: Որո՞նք համար այս բոլորը: Ո՞վ կը փորձեն զարմացնել կամ հրապուրել: ԶԱստուա՞ճ, թե՞ մարդիկը:

Աւելի յաճախ՝ կիներ ըսինք վերը. սակայն չմոռնանք, որ ամառը կարճ տափաստով եկեղեցի յաճախող տղամարդիկ ալ կը տեսնենք:

Եկեղեցին թատերաբեմ չէ: Խորանը լուսարձակներու տակ գտնուող հարթակ մը չէ, ուր մարդ ներկայանայ իբրեւ ցուցանմոյշ: Եկեղեցին սրբավայր է, ուր մարդ կը խոնարհի Արարիչին առջեւ՝ իր բոլոր խոցելիութեամբ, մեղքերով, աղօթքով: Այդ խորհրդաւոր պահուն արտաքին շոայլութիւնը ոչ միայն անտեղի է, այլեւ վիրաւորական:

Աւելի մտահոգիչը այն է, որ շատեր կ'անտեսեն պատշաճութեան սահմանը, չեն գիտակցիր, թէ իրենց այս վարքով կը խաթարեն եկեղեցոյ խոր հոգեւոր նշանակութիւնը, կը պղծեն անոր սրբութիւնը, զայն կը վերածեն սովորական վայրի մը:

Անոնք կը մօտենան խորանին, օրհնութիւն կը խնդրեն, մոմ կը վառեն: Բայց միաժամանակ իրենց հագուածքով կը խաթարեն նոյն այդ սրբութեան մթնոլորտը: Ոմանք ձիւթ ծամելով կը ներկայանան հաղորդութեան ...: Աղօթքը խաղաղութիւն կը պահանջէ: Անպատշաճ հագուածքը կը շեղէ ուշադրութիւնը եւ կը խանգարէ այդ խաղաղութիւնը: Աստուծոյ տուն ոտք կը դնեն իրենց հոգւոյն մագրութեան եւ սրբութեան, աղօթք մը ընելու, ապաշխարհութեան փոքր խայծ մը ունենալու... եւ ի՛նչ տեսակ հագուստներ... հագնելու չեն ամչնար, մարդ նայելու կ'ամչնայ... եւ այս բոլորը եկեղեցիին մէջ:



Այս իրավիճակը հոգեւորականներուն վրայ ծանր պատասխանատուութիւն կը բարդէ: Անոնք, որոնք կոչուած են քարոզելու համեստութիւն, բարոյականութիւն եւ հոգեւոր կարգապահութիւն, ակամայ հակառակ պատկերներու ականատեսը կը դառնան՝ նոյն խորանին առջեւ: Այս արդէն հոգեւոր արժէքներու հանդէպ լուրջ անտարբերութեան արտայայտութիւն է:

Միայլը ոչ թէ անձին մէջ է, այլ այն մտածողութեան եւ վերաբերմունքին, որ կը խեղաթիրէ հոգեւոր արժէքները եւ եկեղեցոյ սրբութիւնը:

Իգական սեռի ռեւէ ներկայացուցիչ իր էութեամբ կրնայ մարմնաւորել գեղեցկութիւն, պատիւ եւ խոհեմութիւն՝ առանց երբեւէ անցնելու պատշաճութեան սահմանները: Իրական գեղեցկութիւնը չի պարտադրուիր: Չափաւորութեան մէջ անգամ կը շողայ եւ փայլի:

Մենք պէտք է վերագտնենք չափի զգացումը: Վերադառնանք այն պարզ ճշմարտութեան, որ սրբութիւնը կը պահանջէ համեստութիւն, իսկ հաւատքը՝ ներքին լռութիւն: Եկեղեցին սրբավայր է, ոչ ոք իրաւունք ունի խաթարելու անոր անդորրը:

Այսօր, դժբախտաբար, շատեր եկեղեցիէն հեռացած են, խորհելով, թէ հաւատքը անձնական համոզում մըն է եւ կարելի է ապրիլ առանց աղօթքի խոհական շունչին: Բայց ճշմարտութիւնը հակառակը կ'ըսէ. հաւատքը երբ մեկուսանայ, կը սկարանայ: Ինչպէս կրակը՝ երբ բաժնուի իր բոցերէն, կամաց-կամաց կը մարի:

Եկեղեցի յաճախելու գիտակցութիւնը մեր ներաշխարհէն լսուող կանչ մըն է: Կանչ մը՝ որ կու գայ խորքէն, լուռ բայց անզիջում, մերթ խղճի ձայնով, մերթ կարօտով, մերթ ալ՝ կորսուած խաղաղութիւնը վերագտնելու տենչով:

Հարցումը պարզ է.

երբ մարդ մուտք կը գործէ Աստուծոյ տունը, ի՞նչ կը բերէ իր հետ. հոգի՞, թէ՞ ցուցադրութիւն:

Եկեղեցին ցուցասրահ չէ:


Պէտք է յիշենք՝ Աստուծոյ առջեւ ներկայանալը պատիւ է, ո՛չ սովորական գործողութիւն: Այդ պատիւը կը պահանջէ պատշաճութիւն՝ թէ՛ հոգիով, թէ՛ արտաքինով:

Ի վերջոյ, պատշաճութեան մէջ է ճաշակը, հոգիի եւ արտաքինի ներդաշնակութեամբ:

ՊԱՅՔԱՐ 477

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԱՂՕԹՔ ԱՌԱԻՕՏԵԱՆ

Լո՛յս առտուան,
Լոյսդ տեղա՛ հոգիէս ներս,
Մտի՛ր բոլոր բջիջներէս,
Տեղ մի՛ թողուր մութին խաւար,
Ողողէ՛ զիս ողջ էութեամբ...
Լո՛յս առտուան,
Լոյսդ ծագէ՛ իմ միտքէս ներս,
Թող ան խորհի լաւը, բարին,
Մի՛ թողուր որ ստուերը չարին
Յաճի խոնարհ անօթիս մէջ...
Լո՛յս առտուան,
Լոյս ողողէ՛ իմ սիրտէս ներս,
Միրոյ բաժակ մ'ան թող ըլլայ,
Բալասանէ՛ այլոց վերքերն,
Միրոյ դարման մ'ան թող ըլլայ...
Լո՛յս առտուան,
Լո՛յս հեղեղէ՛ անապական,
Թող մաքրուի աշխարհը պիղծ՝
Չարեաց տիղմէն ու ժանգէն ալ,
Դառնայ անբիծ ու մաքրաջինջ...
Լո՛յս առտուան,
Լո՛յս հեղեղէ՛ խաղաղարար,
Լռե՛ն ռումբերն կործանարար,
Համբոյրդ թող դառնայ ծիածան,
Ողջագուրեն մարդիկ իրար...
26/3/2025



.....

ԱՐԱՐԱՏԻՆ

Հայեացքիս դէմ լոյսի ցոլանք, լոյսի բարձունք ես հանապազ,
Որուն հոգիս միշտ կը ձգտի, որ մաքրանայ, բիրեղանայ,
Լո՛յսդ ըմպէ, լուսարբենայ, հասնի կատարդ երկնամե՛րձ
Եւ համբո՛յր տայ վառ աստղերուն, երկնին անհուն, ճանճանջահեւ:

Առօրեայի գորշ տաղտուկէն կը բաղձայ ան ազատագրո՛ւիլ,
Քեզ կը դիմէ որ բարձրանայ ան հե՛ւք առ հե՛ւք ու քա՛յլ առ քա՛յլ,
Թօթափելով ամէն տազնապ, խռովքներ բազում ու տանջալից,
Վե՛ր սրլանայ աչքը յառաձ վեհ գագաթիդ լուսանճանջ...

Եւ հոն գտնէ իր ջինջ հոգին աստուածարեալ ի սկզբանէ,
Քեզ հետ շնչէ անապական օդը վճիտ ու անաղարտ,
Մաքրէ խիղճը մեղաց տիղմէն որպէս անկեղծ խոստովանանք,
Որպէս աղօթք սրտին խորքէն անհաս փառքիդ արեւափայլ:
13/4/2026

.....

ԵՍ ՍԻՐԵՑԻ

Ես սիրեցի պահն այն հրեղէն,
Երբ սրտիդ զարկն թրթիռ դառնայ,
Հոգիդ սլանայ անհունն ի վեր,
Աճի, շատնայ... աշխարհն համակ
Տիեզերքն ամբողջ գրկելու չափ...

Երբ թելերդ լայն տարածես
Եւ քեզ թուի որ դուն կրնաս
Երկնի աստղերն ավիդ բռնել,
Լուսանառագ կեռոն դառնալ,
Աշխարհն ամբողջ լուսաւորել...

Երբ սրտիդ դողն կլանէ հոգիդ
Միրոյ վարար հրավառութեամբ,
Ինչպէս շանթը ճեղքէ երկինքն՝
Հրացայտ լեզուակ կայծակնահար...

Յայնժամ կարծես համակ կեանքդ
Կը դառնայ մէկ լոյս ակնթարթ,
Եւ կանգ կ'առնէ ժամանակը
Ակնթարթին մէջ լուսացայտ...
12/5/2017

.....

ԵՍ ԻՆՉ ՀԵՏ

Կեանքի դաժան խաղին մէջ, կամքիդ ոյժը պիտ' լարես,
Որ չընկրկիս յուսահատ, այլ պայքարիս անվեհեր...



Յամառօրէն պիտ'ձգտիս նպատակիդ սրբագան
Եւ պիտ'ընտրես քու ճամբադ առանց դոյզն վարանման...

Խարդաւանքին դէմ մարդկանց դուն անխարդախ պիտ' մնաս,
Հոգւոյդ մէջ վա՛ռ պիտ' պահես լոյսը բարւոյն շողափայլ...

Թէ չարութիւն դուն խառնես սրտիդ լուսէ բաժակին,
Անոր թոյնով դուն եւս թունաւորուիս դառնասիրտ...

Պիտի յիշես դուն միշտ ալ որ չարը նենգ կը մեռնի,
Ամէն անգամ որ բարիդ փայլատակէ ցնծագին...

Յաղթանակի լոյս դափնին կը զարդարէ ճակատըդ,
Թէ վերջինը դուն պահես վսեմափայլ զերթ սարըդ...

Սարիդ պէս կը մերձենաս անհաս փառքին լուսեղէն,
Թէ ոգիիդ սանձով պիրկ դուն սլանաս բարձունքներ...

Եւ օր մըն ալ, ո՞վ գիտէ, Լոյսի ակունքին հասնիս
Եւ անոր հետ դուն ձուլուիս, դառնաս լոյսի շող վճիտ...

30/5/2023

.....

ԺԱՄԱՆԱԿԸ

Ժամանակը շատ բան տարաւ
Իմ հուրքերէս արեւավա՛ռ,
Պաղ ալիքներ խառնեց կրակիս
Բոցավառ՝ դ տենչերուս հին...

Ո՞ւր է հիմա տասնութամեայ
Պարմանուհին այն հըրածին,
Վարսերով բորբ եւ հուրհրան,
Կենսաժպի՛տ ու կենսախի՛նդ...

Ո՞ւր են աչքերն իր հրավա՛ռ,
Ուր կարծես թէ արեգակներ
Կը շողային արեւափայլ
Ներքին լոյսով ճաճանչագե՛ղ...

Անցաւ-գնաց պարմանուհին,
Մնացին լոկ հետքեր լուսէ,
Զոր ժամանակն դէռ չջնջեց
Հարուածովն իր անգութ ու բիրտ...

Եւ չեմ գիտեր՝ իմաստնացա՞յ,
Թէ՛ խաբկանք է ցնորածին,



Իմաստուն չե՛ն դառնար բնաւ,
Լոկ կը շալկեն բե՛ռն անցեալի...

Երեխա՛ն է կամ պարմա՛նը,
Որ հայեացքով թարմ ու վճիտ,
Աւելի՛ն է քան աւագը
Թոնչքով վսե՛մ, արեւածի՛ն:
7/6/2022

.....

ՓՈՔՐԻԿ ՄՐՏԻՍ ՄԷՋ

Փոքրիկ սրտիս մէջ ամաչափ,
Միրոյ վարդեր ես ցանեցի
Հրակարմիր ու բոցավառ,
Խորշակն եկաւ լուռ ու յուշիկ,
Խանձեց, կիզեց վարդերս ալուան...

Սրտիս փոքրիկ անօթին մէջ,
Ես վառեցի բիր-բիր ջահեր
Երկնի անթիւ, ջինջ աստղերէն,
Միրտերը բուր ու մթամած
Խափանեցին լոյսը վառման...

Միրտս փոքրիկ երկինք ըրի,
Լուսին, աստղեր հոն ցոլացին,
Երկնէն հուրքեր կաթեցուցի,
Երգ հիւսեցի արեւածին,
Շանթ ու հուր զայն պատառեցին...

Միրտս՝ թռչուն մը գեղանի,
Դեռ կ'երգէ երգն իր սիրավառ,
Կեանքի սիրով արբշիտ մնայ
Ու տրոփիւնով սիրափթիթ,
Թէ հազար փուշ խոցէ զանի...
18/6/2022

«ՏԱՂԱՐԱՆ»Ը ՆՇՈՒՄ Է ԻՐ 45-ԱՄԵԱԿԸ



Տարին յոբելենական է «Տաղարան»-ի համար. Հնագոյն երաժշտութեան անսամբլը սօնում է իր 45-ամեակը՝ գեղարուեստական ղեկավար եւ դիրիժօր՝ Հ.Հ. մշակոյթի վաստակաւոր գործիչ Մեղրակ Երկանեան: Մօտ կէտարեայ պատմութիւն կերտած այս բացառիկ անսամբլը, իր տաճարային երաժշտութեամբ, անտարբեր չի թողնում անզամ ամենաբժախնդիր հանդիսատեսին: Իւրաքանչիւր

համերգի «Տաղարան»-ը ներկայանում է նոր շնչով, ժամանակին համընթաց, ակադեմական բեմահարթակից հնչեցնելով 5-15-րդ դարերի հայ ազգային մշակոյթի բացառիկ արժէքներ. շարականներ, տաղեր, հոգեւոր ու աշխարհիկ գոհարներ ու համաշխարհային հնագոյն երաժշտութիւն:

«Տաղարան»-ը 45 տարիների անբասիր աշխատանքային գործունէութեամբ, ազգային ու համամարդկային մշակութային ժառանգութիւնը պահում, պահպանում, հանրայնացնում ու փոխանցում է սերունդներին: Անգնահատելի է անսամբլի դերը մերօրեայ մշակութային պատմութեան կերտման, կայացման, հայի ու ազգայինի դաստիարակման գործում:

2026 թուականի իւրաքանչիւր համերգ սպասուած տօնակատարութիւն է լինելու, հանդիսատեսի համար՝ իր ուրոյն ձեռագրով ապահովելով մշակութային հրավառութիւն:

Դէ իսկ սկիզբը 1981 թուականին էր, երբ Գրիգոր Դանիէլեանը, նոյն ինքը Դանիէլ երաժիշտը, հիմնեց «Շարական» հնագոյն երաժշտութեան անսամբլը՝ ղեկավարելով այն մինչեւ 1985 թուականը: Անսամբլի անուանումը յուշել է իր ուսուցիչ՝ երաժշտագետ Ռոբերտ Աթայեանը: Մաէստրօն առաջնորդուել է այն գաղափարով, որ, եթէ 200-300 տարուայ մշակութային պատմութիւն ունեցող երկրները կարող են հնագոյն երաժշտութեան անսամբլներ ունենալ, ապա հազարամեակների պատմութիւն ու մշակոյթ ունեցող հայ ազգը աներկբայօրէն պետք է ունենայ իր հնագոյն երաժշտական ստեղծագործութիւնները պրոֆեսիօնալ կատարմամբ ներկայացնող եւ աւետող անսամբլ: 1985 թուականին «Մելոդիա» ֆիրմայի կողմից՝ Արամ Խաչատրեան համերգասրահում, տեղի է ունենում Շարական անսամբլի ձայնագրութիւնը: 1986 թուականին թողարկում է «Շարական» հնագոյն երաժշտութեան անսամբլի ձայնասկաւառակը: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ն, խորապէս կարեւորելով անսամբլի տեղը եւ դերը, որոշում է կայացնում անսամբլը ընդգրկել եկեղեցական միջոցառումների շարքում, տալով իր օրհնութիւնն ու բարեմաղթանքը: Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեան առաջարկով հնագոյն երաժշտութեան «Շարական» անսամբլը անուանակոչուել է «Տաղարան», քանի որ անուանումն ունէր կրօնական ու հոգեւոր բնոյթ:

«Տաղարան»-ի առաքելութիւնն ի սկզբանէ եղել է վեր հանել ու հանրահռչակել մեր ժողովրդի հնագոյն երաժշտութիւնը: 1987 թուականին «Տաղարան» հնագոյն երաժշտութեան անսամբլի ղեկավարութիւնը ստանձնում է կոմպոզիտոր Երուանդ Երկանեանը: 1988



թուականին «Տաղարան»-ը ստացել է պետական կարգավիճակ: Այս տարիներին անսամբլը ծաղկունք ապրեց, ներկայացաւ այլ հարթութեան բարձունքից՝ հաղորդելով նոր շունչ ու որակ: Երուանդ Երկանեանը «Տաղարան»-ի համար մշակել է 350-ից աւելի հայ հոգեւոր, ժողովրդական, ազգային, հայրենասիրական ստեղծագործութիւններ, որոնք առանձնանում են բարձրաճաշակ, երկանեանական հոգու նուրբ ձեռագրով: Երուանդ Երկանեանի մշակումները առանձնայատուկ են հայ հոգեւոր երգարուեստի ոճի ճշգրիտ ըմբռնմամբ, կոմպոզիտորական բարձր վարպետութեամբ: Այդ տարիներին «Տաղարան»-ը, առաջին անգամ, հանդիսատեսին է ներկայացրել Կլաուդիօ Մոնտելերդիի «Պոպէլայի թագադրութիւնը»-ը, Քրիստոֆ Գլիկի «Օրփէոս եւ Էւրիդիկէ» եւ Ա. Տիգրանեանի «Անուշ» օպերաները՝ համերգային ձեւաչափով: Երուանդ Երկանեանի ղեկավարութեան օրօք, 1990 թուականին «Մելոդիա» ֆիրմայի կողմից՝ Մոսկուայում «Տաղարան»-ը ձայնագրուում ու թողարկուում է ձայնասկաւառակ:

1994 թուականից անսամբլը ղեկավարում է լաւագոյն մատերոններից մէկը՝ դաշնակահար, Հ.Հ. մշակոյթի վաստակաւոր գործիչ Սեդրակ Երկանեանը , որը ոչ միայն պահում է անգուգական ու մաքրամաքուր բարձր արուեստ ներկայացնելու իր առաքելութիւնը, այլ նաեւ բեմ է բարձրացնում այնպիսի գոհարներ, որոնց մշակումներն ու գործիքաւորումները տասնամեակներ շարունակ ունկնդրին ուղեկցում եւ տեղափոխում են երաժշտութեան տիեզերական աշխարհ:

Մատերօ Սեդրակ Երկանեանի ձեռամբ «Տաղարան»-ը հսկայական գործունեութիւն է ծաւալում՝ ներակայացնելով հայ հոգեւոր միջնադարյան երաժշտութիւնից մինչեւ եւրոպական մինչդասական ու բարոկկօ շրջանի երաժշտութիւն: Հայ մշակութային գանձերին զուգահեռ հնչում է նեգրական սպիրիչուէլներ, սպանական, ֆրանսական, իտալական, գերմանական, չինական հնագոյն երաժշտութեան ամբողջական պատկերներ: «Տաղարան»-ը, լինելով միակը՝ գրեթէ կէս դար երաժշտական ոճային առանձնայատկութիւնով, բարձր վարպետութեամբ, մենակատարների ու նուագախմբի համահունչ ներդաշնակութեամբ, միշտ բարձրակէտում է: Այս անսամբլը ակադեմական բեմից, ակադեմական հնչողութեամբ ճշմարիտ արուեստով կրթում ու դաստիարակում է որակեալ հասարակութիւն: Հիրաւի, անսամբլի առաքելութիւնը մեր օրերում բարդ է, բայց Ս. Երկանեան մատերոն գիտի, որ իւրաքանչիւր ճշմարիտ արուեստագէտ ինքն է իր ուղին հարթում, յաղթահարելով բազմաթիւ խոչընդոտներ՝ ի շահ «Տաղարան»-ի: Մատերոն, հաւատարիմ մնալով իր գենետիկ կողին, կոմիտասեան ուղենիշը այցեքարտ դարձրած, կերտում է «Տաղարան»-ի իր ղեկավարութեան եռահատորը: Նա քարտեզագրել, մշակել ու «Տաղարան»-ի երկացանկը հարստացրել է հորովելների, քոչարիների, հայկական խճանկարների, հարսանեկան յայտնի ու անյայտ երգերի ու պարեղանակների շարքերով: Անսամբլը ներկայացրել է «Կարոս խաչ» վիպերգութիւնը եւ Յովհաննէս Թումանեանի հեքիաթների հիման վրայ գրուած «Վարք հիմարաց» խաղերգութիւնը (կոմպոզիտոր՝ Դ. Սարոյեան):

«Տաղարան» հնագոյն երաժշտութեան անսամբլն իր 45 տարիների կարեւոր ու բեղմնաւոր գործունեութեան ընթացքում մասնակցել է մի շարք միջազգային փառատօների, յայտնի ստուդիաների կողմից ձայնագրուել՝ թողարկելով ձայնասկաւառակներ, նկարահանել տեսաեռուկակներ, մշտապէս արժանացել հեղինակաւոր հեռուստայ եւ ռադիօ ծրագրեր ուշադրութեանը, միջազգային ու տեղական մամուլի անդրադարձների: Անսամբլը

համերգային ծրագրերով հանդես է եկել աշխարհի բազմաթիւ երկրներում, ներկայացնելով հայկական մշակոյթը, բարձր հնչեցնելով Հայաստան անունը:

ՄԱՐԻԱՆՆԱ ԳԷՈՐԳԵԱՆ

ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ԽՈՂԵՐԷՆ

Գեորգ Պետիկեան



«Կը կարծէ՞ք, որ նոր հայրենիքի մը կարիքը ունինք, թէ ոչ՝ նոր ժողովուրդի...»: Մահմուտ Տարուիշ (1941-2008,

Տաղանդ եւ գրիչ ունեցող Պաղեստինի ազգային մեծագոյն եւ հանրայայտ բանաստեղծ-գրող: Արաբական ժամանակակից գրականութեան ազդեցիկ

դէմքերէն մէկը, որ նաեւ համարուած է Պաղեստինեան դատին, աքսորի, կորսուած հայրենիքի եւ սիրոյ խորհրդանիշը) Պաղեստինցի հանրայայտ իմաստասէր, մտաւորական, գրող՝ Մահմուտ Տարուիշի այս խոհին կամ խօսքին երբ աչքերս հանդիպեցան, վայրկեանին մտքիս մէջ նոր հարցեր եւ հարցումներ սկսան ծնունդ առնել: Մարմաջ մը կայ այս խօսքին մէջ: Ինձի կը թուէր, թէ այս գրութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ զգացող սրտէ մը մեծ պտոթկում մը, մաքուր տեսակէտ մը ու մեծագոյն ափսոսանքէ մը ծնունդ առած՝ արդար պահանջք մը: Անկեղծօրէն ըսեմ որ ինչպէս միշտ, նախ հաճոյքով կարդացի տողերը, որուն բառերը զիս անմիջապէս կապեցին: Ապա միտքս սկսաւ այս խօսքին շուրջ պտոյտներ անհանդարտ կատարել: Անհանգիստ որոնում: Ու իբրեւ այս անկայուն հոգեվիճակին իբրբեւ հարազատ արդիւնք, սենեակէս ներս խոր խաղաղութիւնը փուլ եկաւ: Ուստի ինձի կը մնար ցանկութիւնը ընդունելու այս «ճշմարտութիւնը»:

Տարուիշի այս խօսքէն նաեւ կարելի էր եզրակացնել, թէ տողերը իր ապրած տառապալից կեանքի անմիջական մտահոգութենէն ծնունդ առած գաղափարի մը արտայայտութիւնն էր, ինչպէս նաեւ իր ազգակիցներուն ուղղուած զգաստութեան կանչող լռելեայն անմեղ հրաւեր մը: Տակաւին՝ մաքուր խորհուրդ: Գիտակցութեան կառչելու՝ կանչ:

Առանձնութեանս մէջ միտքս հետզհետէ այս նոր «բաներով» սկսած էր խճողուիլ: Միւս կողմէ ինձի համար ալ լաւ առիթ մըն էր մտածելու եւ խոկալու, - կ'սէի մտովի: Նոր մտածումներ կեանքի կոչելու: Նոր գաղափարներ պարզելու: Կարծիքներ փոխանակելու: Նոր եզրակացութիւններու յանգելու: Անոր համար ուզեցի այդ բոլոր մտածումներս բառերու վերածել: Միտքերս շարեցի, դասաւորեցի, բաղդատականներս կարգի բերի ու այս բոլորը սետով ճերմակի վրայ միանուագ՝ ընթերցողին տրամադրութեան ահա յանձնեցի:

Արդ, առաջին իսկ հերթին, այս իր խօսքով, ի՞նչ էր իր պատգամը, թելադրանքը, կամ ի՞նչ ըսել կ'ուզէր արաբ այս տաղանդաւոր գրիչը, որ տարիներով իր երազը իր հետ պտոցնելով, պահելով, հայրենիքէն հեռու զանազան օտար երկիրներու մէջ պարտադրաբար ապրած էր, իբրեւ տարագիր, գաղթական եւ աքսորեալ, իսկ վերջին օտարութեան մէջ մահացած: Ինձի համար, կը կարծեմ որ այս խոհը թելադրանք մը ըլլալէ առաջ եւ աւելի, պահանջք մըն ալ էր, կեանքի դառնութեան բառերով հիւսում: Տեսակ մը շարժումի եւ մտածումի



արտայայտութիւն: Յուսախաբութեան ծնունդ եւ մանաւանդ ինքնագիտակցութեան մղելու միջոց:

Իսկ հիմա... , ուրկէ սկսիլ... : Թէեւ օրերս, երկար ու կարճ ժամերուս շարանով յոգնած էին... քայց իբրեւ գլխաւոր թելադրանք, մտածողութեան պահանջք զգացած էի, ուստի որոշեցի ընթերցողին տրամադրութեան յանձնել բոլոր միտքերս: Թերեւս, շատերուն համար բառերս դառնութեան ձայներէն հիւսուած ըլլան, իսկ տողերս ալ՝ անօրինակ: Բայց մեր կեանքի անկայուն վիճակէն մեկնած, որպէսզի ես ալ չ'իյնայի նոյն խոհին մէջ ու նոյն անկայուն վիճակէն դուրս գայի, փորձեցի ես ինծի վերլուծել հրամցուած խոհը այս հսկայ մտաւորականին ու բաղդատական մը ընել իր եւ մեր ժողովուրդին, իր եւ մեր հայրենիքին հետ: Իրը՝ Պաղեստինը, մերը՝ Հայաստանը: Իրը՝ պաղեստինցին, մերը՝ հայը: Ուստի ինչո՞ւ այս տողերը... որովհետեւ տխուր եւ խոր խաղաղութիւն մըն է, որ կը տիրէ մեր հայրենիքէն ներս: Տեսակ մը անօրինակ տագնապով գալարուող երկիր, ուր կեանքը սկսած է ծանրանալ: Տակաւին նաեւ թունաւոր ատելութեամբ լեցուն երկիր մը ուր ժողովուրդը կշտացած է բառերու հացով եւ գաղափարներու գինիով ալ տարիներէ ի վեր՝ արբեցած:

Կեանքի բազկերակը անկանոն սկսած է գործել: Երկիրը զինաթափ կեցած է կեանքի անակնկալներուն դիմաց եւ կախուած մեծ երկիրներու քմահաճ խոստումներէն: Տխուր իրականութիւն: Մտահոգութեան ալիքներով լեցուն երկիր մը դարձած ըլլալով, անորոշութեան եւ շուարումի մթնոլորտով է լեցուած: Ինքնութեան պահպանման հարց կայ: Գիտենք որ պարտուած ենք ամէն ճակատի վրայ, եւ կը հեւանք ու ամէն օր նոյն յոյսին կը սպասենք: Հաւատաւոր եւ անկեղծ դաշնակից կամ դաշնակիցներ չունինք: Ուստի ի՞նչ պէտք է ընել որպէսզի լաւին սպասումը կարօտի չվերածուի:

Հաստատ պահել հայրենիքն ու իր սահմանները: Ահա ...հրամայականը: Ապա...նոր ժողովուրդ.- Այս մէկուն համար էական է ստեղծել եւ տեսնել նոր հայր: Հայ կեանքը իմաստաւորող հոգեկան կապին էականութիւնը առաջնահերթ նկատել: Ունինք տեսանելի եւ այրող հարցեր: Պէտք է ներկան մերը դարձնենք, որպէսզի մեր երագներուն վրայ մոխիրը չնստի: Աւելին՝ պահել հայ կեանքի ջերմութիւնն ու իր աստիճանը: Նաեւ էական է տեսնել արթուն եւ գիտակից մտքեր: «Ես»-էն աւելի եւ առաջ՝ «մենք»-ի մասին մտածել: Միաւորուիլ: Եւ որպէսզի մեր հայրենիքը կատարեալ եւ բոլորիս հայրենիքը դարձնենք նախապայման է նախ մենք զմեզ «շտկենք»: Իմ կարծիքով...ահա Տարուիշի խօսքէն մեզի հասնող եւ թելադրող ու ականջի օղ դարձնող գլխաւոր պատգամը:

bedig43@aol.com

ՀՐԱՅԿԱՅ ԱՃԱՌԵԱՆ՝ ԼԵՉՈՒԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿԸ

5/6/2026

(ԾՆՆԴԵԱՆ 150ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

ՅԱԿՈՒ ԾԱՆՊԱԶԵԱՆ



Հայ ժողովուրդի պատմութիւնն ու գոյատեւումը միայն սուրով ու արիւնով չէ պահպանուած, այլ նաեւ գիրով, լեզուով, բառով եւ յիշողութեամբ: Երբեմն ամբողջ ազգի մը գոյատեւումը կախեալ եղած է մէկ մարդու մոմավառ ճիգէն՝ ինչպէս Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, որ խոնարհ լռութեամբ կրցաւ փրկել այն, ինչ պատերազմներն ու բռնութիւնները կը փորձէին ջնջել: Այդպիսի բացառիկ հոգեմտաւոր պահպաններէն մէկն էր նաեւ Հրաչեայ Աճառեան:

2026ին կը լրանայ հայ լեզուաբանութեան մեծաքանակ հսկային՝ Հրաչեայ Աճառեանի ծննդեան 150ամեակը: Այս յորելեակեան հանգրուանին, մենք ոչ միայն կը յիշենք մեծ գիտնական մը, այլեւ կը խոնարհինք այն

մարդուն առջեւ, որ բառերը վերածեց ազգային գոյապայքարի սրբազան զէնքի:

Աճառեան հայոց լեզուն չէր ուսումնասիրեր միայն որպէս գիտական նիւթ: Անոր համար հայերէնը կենդանի էութիւն մըն էր՝ ժողովուրդի հոգին, պատմութիւնն ու ճակատագիրը իր մէջ ամբարոյ:

Իւրաքանչիւր բառի մէջ Աճառեան կը փնտռէր դարերու շունչը, գաղթերու ոտնաձայնը, վանքերու համբացած զանգերը, զաւառներու հնամաշ բարբառները, ժողովուրդի ցաւն ու յոյսը:

Ան բառեր չէր հաւաքեր միայն, ան կը փրկէր ազգային ինքնութիւնն ու յիշողութիւնը:

Հրաչեայ Աճառեան ծնած է 8 Մարտ 1876ին՝ Կոստանդնուպոլսոյ մէջ, նահապետական հայ ընտանիքի մը յարկի տակ: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Կեդրոնական վարժարանին մէջ: Փոքր տարիքէն իսկ ան ասքի ինկած է լեզուներու հանդէպ իր բացառիկ հետաքրքրութեամբ եւ զարմանալի յիշողութեամբ:

Անցեալէն եկող անձկագին յիշողութեամբ մը կը պատմէ տղաս՝ Ռուբէնը, թէ Կեդրոնականի դասարաններէն մէկուն պատին վրայ մինչեւ այսօր կը պահպանուի աւարտական դասարանի խմբանկար մը, ուր կը յատկանշուին ապագայի երեւելիներ, որոնց շարքին՝ Հրաչեայ Աճառեան, Բարզէն Սիւնի եւ ուրիշներ: Այդ լուսանկարը կարծես լուռ վկայութիւնն է այն սերունդին, որ պիտի դառնար հայ մտքի եւ մշակոյթի փայլուն դրօշակակիրը՝ մշտաբար մը դոզանջ մը հայութեան մտահոգեւոր կեանքին մէջ:

Նախնական ուսումը ստանալէ ետք, Աճառեան հետեւեցաւ բարձրագոյն ուսման՝ մասնագիտանալով լեզուաբանութեան, հայագիտութեան եւ արեւելեան լեզուներու մէջ: Իր գիտական ճամբորդութիւնը զինք առաջնորդեց դէպի Եւրոպայի նշանաւոր համալսարանները, ուր ուսումնասիրեց համեմատական լեզուաբանութիւն, հնդեւրոպական լեզուներ եւ բառագիտութիւն:

Աճառեան ուսանեցաւ Փարիզի «Սորպոն», ապա Վիեննայի եւ Սթրասպուրկի համալսարաններուն մէջ, ուր հարստացուց իր գիտական պատրաստութիւնը ժամանակի մեծագոյն լեզուաբաններուն մօտ: Ան տիրապետեց բազմաթիւ լեզուներու, ներառեալ՝ հայերէնի տարբեր բարբառներ, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն, յունարէն, պարսկերէն, արաբերէն, թրքերէն եւ այլ լեզուներ, որոնք հետագային անոր պիտի օգնէին հայ բառագիտութեան մէջ աննախադէպ յայտնագործութիւններ կատարելու:

Աճառեան իր կեանքին ընթացքին դասաւանդեց տարբեր կրթական հաստատութիւններու մէջ եւ ամբողջ էութեամբ նուիրուեցաւ լեզուագիտական աշխատանքին:

Հայոց Յեղասպանութենէն եւ ազգային աղէտներէն ետք, ան վերջնականապէս հաստատուեցաւ Հայաստան եւ դարձաւ Երեւանի Պետական համալսարանի ամենայարգուած դասախօսներէն ու հայ լեզուագիտութեան հիմնասիւններէն մէկը: Հետագային ան արժանացաւ ակադեմիկոսի բարձր կոչումին՝ իր բազմամեայ վաստակին եւ համաշխարհային մակարդակի գիտական աւանդին համար:

Հրաչեայ Աճառեան հեղինակեց հարիւրաւոր ուսումնասիրութիւններ, գիտական յօդուածներ եւ բազմահատոր աշխատութիւններ, որոնց մէջ առանձնայատուկ տեղ կը գրաւեն «Հայերէն Արմատական Բառարան»ը, «Հայոց Անձնանուններու Բառարան»ը, «Հայ Բարբառագիտութիւն»ը եւ հայ լեզուի պատմութեան վերաբերող իր բացառիկ ուսումնասիրութիւնները: Անոր գործերը մինչեւ այսօր կը նկատուին հայ լեզուաբանութեան անփոխարինելի հիմքերը:

1953ին, իր երկրային կեանքը աւարտելով, Աճառեան թողուց ոչ միայն գիտական ժառանգութիւն մը, այլ նաեւ ազգային հոգեւոր կտակ մը՝ սերունդներուն յանձնելով մայրենի լեզուի պահպանման եւ մաքրութեան սրբազան պարտականութիւնը:



Հրաչեայ Աճառեան այն եզակի մտաւորականներէն էր, որոնց աշխատասիրութիւնը կը թուի ըլլալ մարդկային կարելիութիւններու սահմաններէն անդին: Տասնամեակներ շարունակ ան գրասեղանին առջեւ անխոնջ աշխատեցաւ՝ ստեղծելով հայ լեզուագիտութեան այնպիսի մեծարժէք գործեր, որոնք մինչեւ այսօր կը մնան անփոխարինելի աղբիւրներ:

Իր բազմահատոր «Հայերէն Արմատական Բառարան»ը միայն բառագիտական աշխատութիւն չէ. անիկա ամբողջ քաղաքակրթութեան մը հոգեմտաւոր պատմութեան խորհրդանիշ մըն է:

Այդ էջերուն մէջ ապրող բառերը կարծես կը

դառնան ժամանակի վկաներ, որոնք Աճառեանի ձեռքով կը վերագտնեն իրենց ծագումն ու ճակատագիրը:

Սակայն Աճառեանի մեծութիւնը միայն իր գիտական հանճարին մէջ չէր: Ան նաեւ ազգային նկարագրի տիպար մըն էր՝ համեստ, անձնուէր եւ անշահախնդիր: Իր կեանքը շքեղութենէ հեռու էր, բայց անոր մտքի հարստութիւնը՝ անհուն էր:

Ան կը պատկանէր այն սերունդին, որ գիտութիւնը կը դիտէր որպէս ծառայութիւն եւ ոչ թէ փառքի միջոց: Իր աշխատանոցը լուռ մատուռ մըն էր, ուր բառերը կը դառնային աղօթք:

Աճառեան ապրեցաւ հայ ժողովուրդի ամենաձանր ժամանակաշրջաններէն մէկուն մէջ: Ան ականատես եղաւ Յեղասպանութեան, հայրենագրկութեան, մշակութային կործանումներու եւ ազգային ցնցումներու: Բայց նոյն այդ արհաւիրքներուն մէջ ան աւելի ամուր կառչեցաւ լեզուին, որովհետեւ խորապէս կը գիտակցէր, թէ ազգ մը կրնայ կորսնցնել հոգ, բայց եթէ կորսնցնէ լեզուն, կը կորսնցնէ իր գոյութիւնն ու հոգին:

Այսօր, օտարացնող այս ափերուն վրայ, երբ օտարալեզու բառերու հեղեղը, անտարբերութիւնն ու լեզուական աղքատացումը հետզհետէ կը նսեմացնեն մեր մայրենին, Աճառեանի պատգամը աւելի այժմէական կը հնչէ:

Ան մեզի կը յիշեցնէ, թէ լեզուն միայն հաղորդակցութեան միջոց չէ, այլ ազգային ինքնութեան տաճար:

Լեզուն աղաւաղողը կամ անտեսողը անգիտակցաբար կը խամբեցնէ նաեւ իր ժողովուրդի յիշողութիւնն ու գոյատեւումը:

Յարգելի՛ ընթերցող,

Հրաչեայ Աճառեանի 150ամեակը պէտք չէ սահմանափակուի յոբելենական հանդիսութիւններով կամ պաշտօնական խօսքերով, այլ պէտք է վերածուի հոգեւոր վերանորոգման առիթի՝ մանաւանդ նոր սերունդին համար:



Պէտք է վերադառնանք գիրքին, բառին, ընթերցանութեան եւ մաքուր հայերէնի արժէքին, որովհետեւ Աճառեան մեզի միայն բառարան չձգեց. ան մեզի ձգեց լեզուական արժանապատուութիւն:

Երբ այսօր կը խոնարհիմք այս մեծ հայուն յիշատակին առջեւ, կը զգանք, թէ ան դեռ ներկայ է մեր լեզուի իւրաքանչիւր մաքուր բառին մէջ:

Ամէն անգամ, երբ հայ մարդ մը սիրով եւ գիտակցութեամբ կը գործածէ իր մայրենին, ան անուղղակիօրէն յարգանքի տուրք կը մատուցանէ մեծանուն Հրաչեայ Աճառեանին:

Եւ թերեւս մեծագոյն յուշարձանը, զոր կրնանք կանգնեցնել անոր յիշատակին, քարակերտ կամ պրոնզաձոյլ արձանը չէ, այլ մեր լեզուին հանդէպ վերագտնուած սերն ու պատասխանատուութիւնը:

Խոնարհում՝

հայ լեզուի անխոնջ մշակին,

բառերու ճգնաւորին,

եւ ազգային յիշողութեան անմահ պահապանին՝

Հրաչեայ Աճառեանի անմեռ յիշատակին առջեւ:

Թորոնթօ

Աղբիւր՝ ԱՍՊԱՐԷՉ

ՄԵՐԺԵ՛Ն ՄԱԿԵՐԵՍԱՅՆՈՒԹԻՒՆԸ. ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԳԻՐՔԸ



ՎԱՆՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

3/6/2026



Կար ժամանակ, երբ տուն մը մտնելուդ պէս, աչքերդ բնագոյաբար կը փնտռէին գրադարանը: Անիկա տան ձեւաւորման պարզ մէկ մասը չէր, այլ՝ անոր բնակիչներուն մտաւոր աշխարհի հայելին: Գիրքերու շարքերը, անոնց մաշած կողքերը, էջերու մէջ պահուած թղթիկները կը պատմէին մարդոց նախասիրութիւններուն, հետաքրքրութիւններուն եւ մտահոգութիւններուն մասին:

Գրադարանը տան յիշողութիւնն էր:

Այսօր, այդ տեսարանը սկսած է հազուադէպ դառնալ:

Գրադարաններու տեղը գրաւած են պատկերասփիւռները, ինելախօսները եւ թուային այլ սարքեր: Շատեր նոյնիսկ չեն ուզեր գրադարանները իբրեւ զարդարանք ու յարդարանք պահել, իսկ գիրքերը «տեղ գրաւող» եւ «անպէտք» առարկաներ կը նկատուին: Եւ յաճախ կը լսենք. «մեր տան գիրքերը պիտի թափենք, գիտէք մէկը կրնա՞յ վերցնել զանոնք»:

Բարեբախտաբար՝ դեռ կա՞ն: Մենք կ'ապրինք աննախադէպ ժամանակաշրջանի մը մէջ, ուր օրական աւելի շատ տեղեկութիւն կը ստանանք, քան նախորդ սերունդները երբեմն ամբողջ ամիսներու ընթացքին: Սակայն, տեղեկատուական այս առատութեան զուգահեռ,



արձանագրուած է տարօրինակ երեւոյթ մը. մարդիկ հետզհետէ աւելի քիչ գիրք կը կարդան, դժուարութիւն ունին երկար ժամանակ կեդրոնանալու եւ աւելի ու աւելի կը հեռանան խորքային ընթերցումէ: Մակերեսայնութիւնը դարձած է տիրական:

Արդեօք այս կը նշանակէ՞, որ գիրքը կորսնցուցած է իր արժէքն ու իմաստը: Պատասխանը այդքան ալ պարզ չէ:



Նախ պէտք է հասկնալ, թէ ինչն է մեր ուշադրութիւնը եւ կեդրոնացումը այսօրան ցրուած են: Ընկերային ցանցերու եւ թուային հարթակներու տրամաբանութիւնը հիմնուած է արագութեան վրայ: Տեղեկութիւնը կը հասնի կարճ տեսագրութիւններու, արագ պատկերներու եւ քանի մը տողի մէջ ամփոփուած

կարծիքներու ձեւով: Մենք սորված ենք անմիջապէս արձագանգել, բայց երկար մտածել՝ սկսած ենք դժուարանալ: Ուղեղը կամաց-կամաց սկսած է վարժուիլ մակերեսայինին: Մարդը այսօր շատ տեղեկութիւն ունի, բայց գրկուած է զանոնք իրարու միացնող եւ կողմնորոշող ներքին դատողութենէն: Ան հազարաւոր մանրամասնութիւններ գիտէ, բայց դժուարութիւն ունի ամբողջական պատկեր մը կազմելու: Հետեւաբար, գիրք չկարդալը պարզապէս մշակութային սովորութեան մը կորուստ չէ: Անիկա քննական եւ համադրական մտածողութեան նահանջի մէկ դրսեւորումն է:

Հոս է թերեւս ժամանակակից աշխարհի մեծ հակասութիւնը: Մինչ մեր շուրջը ամէն ինչ արագացած է, գիրքը տակաւին համբերութիւն կը պահանջէ: Մինչ ընկերային ցանցերը մեզի քանի մը վայրկեանէն նոր նիւթի անցնիլ կը սորվեցնեն, գիրքը մեզ կը հրաւիրէ երկար մնալու նոյն գաղափարին հետ: Մինչ թուային աշխարհը կը վարձատրէ արագ արձագանգը, գիրքը խորհրդածութիւն կը քաջալերէ: Անոր համար ալ գիրքը երբե՛ք միայն տեղեկութիւն փոխանցող միջոց չէ եղած: Տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ յօդուածէ, տեսանիւթէ կամ արուեստական իմացականութենէն: Բայց գիրքին արժէքը երբե՛ք տեղեկութեան մէջ չէ եղած: Թէեւ փաստերն ու գիտելիքը կարելոր են, սակայն անոնք մակերեսային են՝ համեմատած այն խորունկ իմաստին, որ ծնունդ կ'առնէ ընթերցանութեան ընթացքին: Գիրքի մը իմաստը միայն էջերուն վրայ գրուած բառերուն մէջ չէ, այլ անոր հետ մտերմանալու, անոր շուրջ խորհրդածելու, հարցադրելու եւ մեկնաբանելու գործընթացին մէջ: Այդ կենդանի հաղորդակցութեան մէջ է, որ նոր գաղափարներ կը ծագին, զգացումներ կ'արթնան եւ նոր հորիզոններ կը ձեւաւորուին: Այլ խօսքով, գիրքին իսկական էութիւնը կը գտնուի ընթերցանութեան հոլովոյթին մէջ, ուստի ընթերցելու փորձառութիւնը շատ աւելի խոր ու նշանակալից է, քան փաստերու պարզ ամբարումը:

Տակաւին, գիրք կարդալը մտային վարժանք է, երկխօսութիւն մըն է հեղինակին հետ: Ընթերցողը քայլ առ քայլ կը կառուցէ գաղափարներ, կը կասկածի, կը բաղդատէ, կը վերլուծէ եւ կը մտածէ: Գիրքը մեզի կը սորվեցնէ նաեւ սպասել ու դադար առնել: Անիկա լռութեան տարածք մըն է աղմկոտ աշխարհի մը մէջ:

Պատահական չէ, որ մեծ քաղաքակրթութիւնները իրենց յիշողութիւնը պահած են գիրքերու միջոցով: Մեր պարագային՝ աւելի՛ եւս: Հայ ժողովուրդի պատմութիւնը կարելի չէ



պատկերացնել առանց ձեռագիր մատեաններու, տպարաններու, դպրոցներու եւ գրականութեան: Դարեր շարունակ, երբ պետականութիւնը բացակայ եղած է, գիրքը դարձած է ինքնութեան պահպանիչ: Ան փոխանցած է լեզուն, յիշողութիւնը, արժէքները եւ պատկանելիութեան զգացումը: Հետեւաբար, գիրքին հետ մեր մտերմութեան հարցը միայն ընթերցասիրութեան հարց չէ: Ան մշակութային շարունակականութեան, ազգային յիշողութեան եւ հաւաքական մտածողութեան խնդիր է:

Մակայն, պատմութիւնը մեզի կը սորվեցնէ նաեւ, թէ ամէն անգամ, երբ մարդիկ զգացած են մակերեսայնութեան կապանքները, դարձեալ վերադարձած են գիրքին: Որովհետեւ կան հարցումներ, որոնց պատասխանները կարելի չէ գտնել քանի մը վայրկեան տեւող տեսանիւթի մը մէջ: Կան փորձառութիւններ, որոնք միայն գիրքը կրնայ փոխանցել: Կան նաեւ այնպիսի ներքին ճամբորդութիւններ, որոնց ուղեկիցը տակաւին գիրքն է:

Հետեւաբար, գիրքը ոչ թէ կորսնցուցած է իր իմաստը, այլ ընդհակառակը՝ անոր նշանակութիւնը այսօր աւելի գոյութենական դարձած է: Մեր օրերուն գիրք կարդալը որոշ իմաստով յեղափոխական արարք է: Անիկա կը նշանակէ ըմբոստանալ տեղեկատուական աղմուկին դէմ, եւ մերժել այն մշակոյթը, որ մարդը կը վերածէ միայն արագ արձագանգող եւ պատրաստի կարծիքներ սպառող էակի մը:

Հայ իրականութեան եւ սփիւռքեան կեանքի մէջ, այս հարցը կրկնակի կարեւորութիւն ունի: Մեր գոյատեւումը դարեր շարունակ հիմնուած է լեզուի, գիրի, գրականութեան եւ մշակոյթի վրայ: Եթէ մեր ընթերցումը սահմանափակուի միայն կարճ գրառումներով, մակերեսային տեղեկութիւններով եւ ակնթարթային արձագանգներով, ապա լեզուն, մշակոյթը եւ ազգային ինքնութիւնը դժուար թէ պահպանել կարենան իրենց խորքը: Այդ պարագային վտանգուած չէ միայն ընթերցանութեան սովորութիւնը, այլ նաեւ մեր հաւաքական մտածողութիւնը՝ մանաւանդ անոր ստեղծագործ նկարագիրը:

Խորքին մէջ, գիրքը չէ, որ կորսնցուցած է իր նշանակութիւնը. մենք ենք, որ աստիճանաբար կը կորսնցնենք զայն տեսնելու եւ արժեւորելու մեր կարողութիւնը: Անոր իմաստութեան հետ իսկապէս հաղորդակցելու եւ ներքին աճ մը ապրելու համար, մարդ երբեմն պէտք ունի հեռացնելու մակերեսայնութեան մշուշը եւ դարձեալ գիրք մը բանալու: Որովհետեւ ճշմարիտ խորաթափանցութիւնը յանկարծակի չի ծնիր, այլ՝ այն հանդարտ լռութեան մէջ, զոր միայն մտածումով դարձուած էջերը կրնան ստեղծել: Հոն է, որ խիղճը կը զարթնի եւ միտքը կը պայծառանայ:

Ահա թէ ինչու, թերեւս ճիշդ հարցումը այն չէ, թէ գիրքը կորսնցուցած է իր տեղը: Ան տակաւին հոն է՝ դարակին վրայ, գրադարանին մէջ կամ թուային տարբերակով մեր սարքերուն մէջ: Հիմնական մարտահրաւերը մեր ժամանակներուն հետեւեալն է. արդե՞՞ք մենք տակաւին պատրաստ ենք պահ մը կանգ առնելու, լռելու եւ գիրքին հետ երկխօսութեան մէջ մտնելու, թէ՞ վերջնականապէս հեռացած ենք անկէ՝ զայն զրկելով մեր կեանքի հիմնական յենարանը ըլլալու հանգամանքէն:

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Կան ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ ու ԱՆԿԱՇԱՌԵԼԻ սրբություններ, արժեքներ, գաղափարներ, որոնք մեր հաւաքական ինքնութեան բաղադրիչ են եւ չեն կրնար բանակցութեան գործիք ծառայել որեւէ մէկ պետութեան կամ կառոյցի կողմէ: Անոնցմէ են մեր ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ, ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ, ՄՇԱԿՈՅԹԸ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՈՒԹԻՒՆԸ եւ այսպէս շարունակ:

.....

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ մունետիկները կ'ըսեն.-

-Մոռցէք ձեր պատմութիւնն ու պատմական իրաւունքները:

-Մոռցէք ձեր ազգային ինքնութիւնը ղիմագիծը ներկայացնող հոգեմտաւոր, բարոյական արժեքները: (Ազատութեան կամ ամենաթողութեան դար է):

-Ձեր երկրին դուռը բաց պահեցէք այլազգի եւ այլադաւան ներգաղթող ամբոխին առջեւ:

-Ազգային արժանապատութիւնը իմաստագործը «կատեգորիա» է:

-Մոռցէք ձեր ազգային կրօնքը եւ յարգեցէք «խղճի ազատութիւնը»:

Այսինքն, դարձէք ԽԱՌՆԱՄԲՈՒՄ (դիւրաւ կառավարելի)...

Ահա այս ահաւոր եւ ամենակուլ հոսանքին դէմ պիտի պայքարինք, որպէս հայոց ազգ ու հայոց երկիր:

.....

Հինաւորց ժամանակներուն, մեծագոյն պատիժ կը համարուէր ԱՔՍՈՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ, քանզի սեփական հայրենիքէն արտոճած մարդը կը դառնայ կէս-մարդ, արմատախիլ բոյս որ տակաւ կը կորսնցնէ իր բոյրն ու թոյրը, իր ինքնութիւնը հարազատ...Ներկայ ժամանակներուն, մարդը ԻՆՔՆԱԿԱՄ ինքզինք կ'արտոճ սեփական հայրենիքէն եւ Կ'ԻՆՔՆԱՔՍՈՐՈՒԻ...այսինքն կը կորսնցնէ ՍԵՓԱԿԱՆ, ՀԱՐԱԶԱՏ ՀՈԳԻՆ...

.....



Անիրաւութեանց դէմ անտարբեր ըլլալը կամ կրաւորական կեցուածք ունենալը համագոր չէ՞ զայն անուղղակի քաջալերելուն...: Շատեր, մեծաւ մասամբ, լուր կը մնան, երբ անիրաւը կը պաշտպանուի, մինչ արդարը կը քարկոծուի...ԻՆՉՈ՞Ւ ԳԷՇ ՄԱՐԴ ԸԼԼԱՆ եւ ձայն բարձրացնեն ի պաշտպանութիւն անարդարուած «տկար»ին...Այսպէս չէ՞ որ անիրաւութիւնները կը կուտակուին ընկերութեան մը մէջ, մանաւանդ եթէ անիրաւողը ունի ՈՅԺԻ ԻՐԱԻՈՒՆՔԸ:

.....

Կաղապարուած միտքը քառակուսի այն միտքն է, որ գուրկ է նոյնիսկ պատուհանէ, ուրկէ կարելի էր յուսալ որ թարմ օդ մտնէր եւ զայն օդափոխէր...

.....

Քաղաքականութիւնը՝ իր բոլոր հարցերով, հարցումներով, տագնապներով ու տուայտանքներով կը կլանէ առօրեան...Բայց մարդկային կեանքը պիտի չսպառի քաղաքականութեամբ միայն...: Իւրաքանչիւր անհատ ունի ներ-անձնական տարածք, ուր կան իր սերերն ու կարօտները, խոկումներն ու ապրումները, հայեցողական ընդգրկումները, երեւակայութեան թռիչքը...մարդ-բնութիւն-տիեզերք հաղորդակցութիւնը, որոնց շուրջ գրոյցի կը նստի ան ինքն իրեն հետ, ինքնախոստովանութեան մը հանգոյն, ամենայն մտերմութեամբ, ամենայն անկեղծութեամբ... Մարդ էակը ներքին «ես» է՝ առաջին հերթին եւ գերազանցօրէն, որքան ալ ընկերային կամ հասարակական էակ ըլլայ ան...

.....

Չեմ սիրեր ՄԻՏՔԵՐՈՒ ԲՈՒՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ...Չեմ սիրեր եթէ մարդիկ քեզմէ կը հեռանան, պարզապէս անոր համար որ իրենց գաղափարը տուեալ հարցին շուրջ քեզմէ տարբեր է, չեմ սիրեր երբ բարեկամդ յանկարծ կը նեղսրտի քեզմէ, պարզապէս անոր համար որ դուն չես բաժնէր իր տեսակէտը...Տակաւին, չեմ սիրեր երբ գաղափարներու տարբերութիւնը պատճառ կ'ըլլայ ոմանց, որ անվայել խօսքեր ընեն հասցէիդ եւ դադրեցնեն իրենց բարեկամութիւնը...ԶՈ՞ՐՆ ԱՄԵՄ, ԿԱՄ ԶՈ՞Ր ԽՈՍՏՈՎԱՆԻՄ...Խօսելու համար ՄՏՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ մասին, նախ եւ առաջ ՄԵՆՔ զայն պիտի մշակենք մեր մէջ..

.....

Որքա՛ն իրարմէ կը տարբերին կեանքի կամ իրադարձութեանց մակերեսն ու խորքը...Մակերեսին՝ պղպջակներն են, փրփուրները, որոնք շատ անգամ կը ծածկեն խորքայինը, ուր բուն ճշմարտութիւնն է թաքնուած...Նոյնն է պարագան իրադարձութեանց, որոնց մակերեսայինը կը հրամցուի մեզի ամէն օր՝ մամուլով կամ տեղեկատուութեանց տարափով եւ այլ աղբիւրներով...Շատեր կը գոհանան այդ առաջին վերին խաւով միայն, առանց ներթափանցելու անոր ներքեւ, մտորելու, վերլուծելու եւ իմանալու խորքայինը, որ կը պատահի, դատելու թէ ինչո՞ւ կը պատահի, ի՞նչ նպատակ կը հետապնդուի...: Ընդունուած ճշմարտութիւն է որ ճանաչողութիւնը պատրաստ չի հրամցուիր ոեւէ մէկուն, անիկա կը պահանջէ խորաթափանց միտք, վերլուծական կարողութիւն, կշռադատ եւ լայնահորիզոն մտածողութիւն եւ զգայական ու քաղաքական հոտառութիւն...

.....

Հիմա աշխարհը կ'ընթանայ երկու հակաբեւեռներու պայքարով...Պայքարի մէկ բեւեռին՝ ազգային սկզբունքով, ազգային գաղափարով եւ արժէքներով ապրող մարդիկ են, պայքարի



միւս բեւեռին՝ համաշխարհայնացման եւ համահարթեցման ծառայող վարձկան ոյժերն են (կլոպալիստները), որոնք կը միտին նոր աշխարհակարգ ստեղծել, ուր չկայ ազգութիւն, չկայ ազգային ինքնութիւն, չկան ազգային պատմութիւն ու մշակոյթ, ազգային բարոյական-հոգեւոր արժէքներ...եւ մարդը դարձած է ԱՆԴԷՄ, ԱՆԴԻՄԱԳԻԾ մի փերեզակ, հոս-հոն քշուող աշնան մի տերեւ...ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՅԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆԻ, ՅԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆԻ, ՅԱՆՈՒՆ ԱԶԳԱՀԱԻԱՔԻ ԵՒ ՀՈՂԱՀԱԻԱՔԻ...եւ ամէն երեւոյթի մէջ, պիտի փնտռենք, պիտի հարցադրենք թէ որո՞ն կը ծառայեն տուեալ երեւոյթի մէջ ներգրաւուած անձինք ու կառոյցներ եւ ըստ այնմ պիտի դիրքաւորուինք, եթէ կը հաւատանք ԱԶԳԱՅԻՆԻ, ՀԱՅԿԱԿԱՆԻ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆԻ:

.....

Մարդ էակին թերեւս մեծագոյն առաքինութիւնը ուրիշը զգալն է ...Ներկայ դարուն, այնքան տարանջատ են սրտերը, կարծէք մարդիկ կ'ապրին ներփակուած իրենց նեղ ԵՄ-երուն մէջ եւ տակաւ կը կորսնցնեն ուրիշը զգալու, հասկնալու, սիրելու, անոր կարեկցելու էական, կենսական յատկութիւնը...Սիրտ-սիրտ, հոգի-հոգի այդ հաղորդակցութիւնն է, որ, ըստ էութեան, մարդ էակը կ'ընծայէ մարդ, այս բառին ամբողջական իմաստով...Այլապէս, շատեր կան, որ հրապարակ կու գան որպէս մասնագէտներ, ճշմարտախօսներ, սակայն՝ չունենալով դիմացինին սրտի զարկերակը զգալու առաքինութիւնը, զայն կը կոխկոտեն յաճախ, յանուն իրենց քարոզած ճշմարտութեան...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Ամբողջ կեանք մը մենք կ'անցընենք հասկնալու թէ ո՞վ ենք մենք, Արմատներով ընդելուզուած բիւր դարերուն մեր հնամեայ, Բայց ոգիով ազատաբաղձ կերտելու միշտ նորը լուսէ, Որ ձգտի վեր դէպի անհաս երկինքները անհունահեւ:

.....



Հոգին չունի չափ ու կշիռ, ազատութեան կայծ մըն է ան,
Աստուածներէն է ան առած շունչը վսեմ, երկնապապ,
Բայց առօրեան միշտ կը ձգտի զանի խեղդել շղթայակապ,
Եւ պայքար է կեանքը համակ յանուն հոգւոյն ազատութեան:

.....

Ուզե՛ս ապրէ շքեղ կեանքով, պալատական բիւր գանձերով,
Ուզե՛ս ապրէ աղքատ կեանքով, ունեզուրկի թշուառ կեանքով,
Միեւնո՛ցն է, մերկ պիտ'երթաս այս աշխարհէն դուն անցաւոր,
Հետդ պիտի տանիս միայն արի, բարի գործերդ լոկ:

.....

Տեսայ մարդիկ որ կամովին կոյր մնացին
Ճաճանչներուն արեգական՝ հուր եւ ոսկի,
Եւ մընացին քարայրին մէջ կիսախաւար,
Անձնատուր լոկ պատրանքներուն ցնորածին:

.....

Կեանքը խորին խորիտ՝ ւրդ մըն է, առեղծուա՛ծ է անքննելի,
Որքան ալ դուն խորհրդածես, փրփո՛ւրը լոկ պիտի տեսնես
Այն ովկեանին խո՛ր, ալեկո՛ծ, որ մերթ խաղաղ ըլլալ թուի,
Մերթ ալ յանկարծ կը մրկկի ալիքներով փրփըրադէգ:

.....

Թէ մաղձի մութը տիրէ սիրտերուն,
Դուն լոյս տարածէ շուրջդ, ամէնուր,
Լոյսն ի՛նչ ալ ըլլայ կը յաղթէ մութին,
Նշոյլ մը լոյսդ կը խառնէ Լոյսին..

.....

Մարմնի բանտէն վեր կը ճախրէ
Մարդուն հոգին ազատահեւ,
Անհուն երկինքն է իր տունը,
Անսահմանն է իր սահմանը...

.....

Հաւատքի վերջին սիւնդ երբ փլի,
Պիտ' ապաւինիս քու ներքին ոյժիդ,
Որ դեռ բոցկլտայ ներքին տաճարիդ
Ու քեզ միաւորէ անհուն տիեզերքին:

.....

(ՄՓԻԻՌՔԻՆ)

Ճղճիմ մտքով ու ոգիով կը զբաղեցնեն բարձր դիրքեր,
Ու կը կարծեն «մենձ» մարդ դառնալ յենած իրենց փուճ աթոռին,
Ունեցած սուտ արշիններով կը յաւակնին վաստակ չափել,



Երբ վաստակին նշոյլն անգամ հեռո՛ւ, հեռո՛ւ է իրենցմէ:

.....

Ու կը կատչին ամո՛ւր-ամո՛ւր իրենց տրուած սին աթոռին,
Քանզի առանց այդ աթոռին, գիտեն ներքուստ որ ՈՉԻՆՉ են,
Գոնէ բազմած այդ աթոռին «մարդ» կը դառնան յանկարծօրէն,
Հոգ չէ թէ սոսկ բութ գործիք են աթոռ բաշխող մարդոց ձեռքին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ